9(55)
Ե-16

Ա.Ի. ՔԱՀ. ԵԴԳԱՐԵԱՆ

ԻՐԱՆԻ ՉՅԱՐՄՅԱԼ ԳԱՒԱՌԸ

1963

Տպարան «ԱՆԻ» Թեհրան



Աւ. Բահ. Եդգարեան

9(55)
Ե-16

ԱԻ. ՔԱՀ. ԵԴԳԱՐԵԱՆ

ԻՐԱՆԻ ՉՅԱՐՄՅԱԼ ԳԱՒԱՌԸ

578

Իր թանկագին ծնողների՝
Թորոս եւ Գայիանէ Եդգարեանների
Ցիւռատակին նուիրում է հեղինակը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ

1963
Տպարան «ԱՆԻ» Թեհրան

ԱՒ. ՔՀ. ԵԴԳԱՐԵԱՆ

ՉՀԱՐՄՀԱԼԻ ՔԱՐՏԷՍԸ

«Ցուս.»—Անկողմնակալութեան եւ լուսաբանութեան համար կը հրատարակենք Արժ. Եդգարեան քհնյի այս յապաղած պատասխանը եւ այնչափով փակուած կը նկատենք այս հարցը։

«Ցուսաբեր»ի սոյն տարեայ Օգոստոս 26-ի համարում (№ 124) Արմենակ Սարոյեանը ցաւ է յայտնում, որ «վերջերս հրապարակ են իջել պատահական անպատասխանատու մարդիկ և իրենց տգիտութեամբ աղաւաղել են ու դեռ շարունակում են խեղաթիւրել հայ մշակոյթը և նոյն իսկ աշխարհագրական գրականութիւնը։ Այդ տեսակէտից մռայլ մի պատկեր է ներկայացնում «Չհարմահալ գաւառը իր շրջապատով» խորագիրը կրող քարտէսը։

Անչափ ուրախացայ, որ այս «նորելուկ Չհարմահալցին» վերին աստիճանի նախանձախնդիր է դէպի իր ծննդավայր գաւառը և շատ լաւ ծանօթ է ու քանիցս շրջել է հայաբնակ և պարսկաբնակ դիւղերը։ Սոր յուզումով կարդացել է իր պապերի հին տապանաքարերի արձանագրութիւնները... Այս բոլորով հանդերձ մեր քննադատը որևէ լուսաբանութիւն և ճիշտ տեղեկութիւններ չի աւելացնում խնդրոյ առարկայ քարտէսի վերաբերմամբ։ Ընդհակառակն Բալղու և Զաֆարաբադ գիւղերն էլ դասում է «հնագոյն գիւղերի» շարքին։

Եթէ Արմենակ Սարոյեանը բարեմտօրէն մօտենար

խնդրին, դէթ մի անգամ հարցրած կը լինէր Զհարմահալաբնակ ժողովրդից Բալղլու և Զաֆարաբադ գիւղերու հիմնարկութեան թուականը, կիմանար, որ յիշեալ գիւղերը «հնագոյն գիւղեր»ից չեն, այլ երկուսն էլ 20-րդ դարի սկիզբներին հիմնուած։ Տողերիս գրողը մէկն եմ եղել այն պատանիներից, որոնք յաճախ օգնում էին «Ղալէն» շինելու գործում, 1910—12 թուականներին։

Մեր քննադատը գտնում է, որ «Զարմահալի քարտէսն ունի բազմաթիւ սխալներ... և նա ցանկանում է տեսնել մի փոքրիկ (12×9 սմ.) քարտէսի վրայ ամբողջ հին ու նոր, շէն ու աւերակ գիւղերը, սար ու դաշտ, աղբիւր ու առու և այլ մանրամասնութիւններ։ Այո, պակասում են Բիտաքի աղբիւրը և մի շարք ուրիշ աննշան տեղեր։ Զարմանալի է, որ նրա սուր տեսողութիւնից վրիպել են Հաջիաբադ գիւղի «Քոռ աղբիւր»ը և Սիրաքի «Քաչալ աղբիւր»ը։

Մանրամասնութիւնների մէջ չմտնելու և աւելորդ գլխացաւանք չպատճառելու համար, այսքանը միայն ասենք, որ արել եմ այն՝ ինչ որ իմ համեստ ուժերը ներել են, մանաւանդ որ մինչ այդ գոյութիւն չի ունեցել ուրիշ մէկը։

Եթէ Արմենակ Սարոյեանը և նման անհատների սրբտին այդքան մօտ էր Զհարմհալ գաւառը՝ թող վաղուց մտածած լինէին և հրապարակ հանած անսխալ, լրիւ, աշխարհագրական և տեղագրական ճիշտ դասաւորումով մի քարտէս։

Թող ինձանից աւելի կարող ոյժեր ժամանակին փորձէին և իրենց գիտցածը, լսածը և տեսածը գրի առնէին թէկուզ մանկական լեզուով էլ գրուած լինէր դա. այսօր բաւականաչափ տեղեկութիւններ ու լուսաբանութիւններ կ՚ունենայինք մեր գաւառի վերաբերեալ, որից մեր մբտաւորականները և կարող անձինք պիտի կազմէին գաւառի իսկական և ճիշդ պատկերը։ Յաւ ի սիրտ պիտի ասել, որ ոչ ոք չմտածեց այդ ուղղութեամբ։

Պ. Սարոյեանը աւելացնում է. «Զհարմհալ գաւառի քարտէսը պատրաստելու առաջին պատիւը պատկանում է Աբադանում ապրող, ընիկ Զհարմհալցի և նկարիչ Դանիէլին։ Զար լեզուներն ասում են... որ Եդգարեան քահանան զարտուղի ճանապարհներով ընդօրինակել է... պընդողներ էլ կան, որ դա ոչ թէ ենթադրութիւն է, այլ իրականութիւն... Եւ մենք փաստացի տուեալներով կը հաստատենք որ մինչև օրս ծանօթ չենք պ. Դանիէլին և ոչ էլ տեսել ենք նրա գծագրած քարտէսը։ Այս մասին թող վկայեն ինք՝ պ. Դանիէլը և պ. Հայդուկ Մանսուրեանը, որը Նոր-Զուղայում 1944 թ. ինձ օգնեց գծագրելու Զհարմահալի քարտէսը։

Յանձնարարում եմ և խնդրում Զհարմհալ գաւառի հայ «Ուսումնասիրաց» Միութեան կենտրոնական յարգելի վարչութիւնից (Աբադան), որ նախ ստուգեն մեր տասծը, երկրորդ՝ համեմատութեան դնեն պ. Դանիէլի և իմ կազմած քարտէսները մանրազնին ուսումնասիրութեամբ և ապա հարկ եղած պատասխանը տան Սարոյեանին, պարբսկահայ թերթերի միջոցով։

Ուրախ կը լինէինք, եթէ պարոնը առանց անձնական կրքի մօտենար խնդրին և աւելի օգտակար թելադրութիւն անէր։ Սակայն, այդ բոլորով հանդերձ մենք վհատող չենք նման անտեղի չարախօսութիւններից և մեր համեստ ուժերի ներածը չենք խնայելու։

ԱՒ. ՔԱՀ. ԵԴԳԱՐԵԱՆ

Կալկաթա

«Յուսաբեր» 13 Դեկտ. 1950 թ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Գրի առնելով Զհարմհալ գաւառի ազգագրութիւնը՝ ես նպատակ չեմ ունեցել գաւառի մանրամասն պատմութիւնը տալ և ինձ հաշուել բանասէր մի մտաւորական։ Իմ նպատակն է եղել՝ միայն ի մի հաւաքել և հարազատութեամբ պահել այն ամենը ինչ որ իմ ծննդավայրը գաւառին է պատկանում։ Բացարձակ խուսափել եմ մանրամասնութիւններից։ Օրինակ, «Զուրը քշքշալով հոսում է սարի լանջի ոլորապտոյտ առուակով և ոռոգում է հարաւային կողմում ընկած գեղեցիկ ընդարձակ դաշտը»։ Նրմանապէս բոյսերի, ծառերի, տեսարանների և միութիւնների ծրագիրների մասին մանրամասնութիւններ պակասում են։ Պարզ, աւելի ճէշտ, իմ գաւառի բարբառով կազմել եմ ներկայ աշխատութիւնս — Իրանի Զհարմրհալ գաւառը։

Ամբողջ քսան և հինգ տարիներ ապրած լինելով Զհարմհալում և դրանից յետոյ էլ յաճախ այցելած՝ վստահ եմ, որ գրածս գաւառի ճշգրիտ պատկերն է. մանկութեան և պատանեկութեանս ժամանակ ոսկի տառերով գրոշմուած իմ սրտում։

Զհարմհալ գաւառի վերաբերեալ գրաւոր փաստերը շատ սակաւ են. ամենագլխաւորը և հինը հանգուցեալ Յարութիւն Տէր-Յովհաննէսեանցի «Պատմութիւն Նոր-Զուղայի»ի մէջ յիշատակածն է, մասամբ էլ Առաքել Վ. Դաւրիժեցու երբեմնակի յիշատակութիւնները Զհարմհալի մասին։ Նորագոյն ժամանակներում ես մի շարք հայ թերթերի ու պարբերականների մէջ լոյս տեսած զանազան անձնաւորութիւնների կողմից գրուած յօդուածներ, որոնցից մասամբ օգտուել եմ։ Մասնաւորապէս բանասէր պ. Արամ Երեմեանի յօդուածաշարքերից, որոնք 1922 թուականից սկսած լոյս են տեսել հայ պարբերականներում, իսկ

Զհարմհալի հայ աշուղները առանձին գրքոյկներով. սրբանցից ես բաւականաչափ օգտուել եմ։ Իսկ բանաւոր ինչքան հնարաւոր է եղել հաւաքել եմ գաւառի ծերունիների բերանացի պատմութիւններից և ինչ որ ականատես եմ եղել։ Այս բոլորը 1926 թուականից սկսած ի մի եմ հաւաքել և հարազատութեամբ պահել. թերևս բախտը ժպտայ և լոյս աշխարհ հանի այս իմ առաջին ձեռնարկը։

Յաւով եմ արձանագրում, որ մինչ օրս ոչ մի կարող ոյժ չմտածեց այս ուղղութեամբ։ Զհարմհալ գաւառը հասել է իր վերջին շունչը. վաղը, կամ միւս օրը՝ ամէն ինչ իսպառ կը կորչի երբ այլևս գաւառում ոչ մի հայ չի մնայ։

Ինձ մեծ ուրախութիւն պատճառեց, երբ 1945 թ. Զհարմհալ գաւառի Հայ Ուսումնասիրաց Միութիւնը բանասէր պ. Արամ Երեմեանին ուղարկեց գաւառ՝ ուսումնասիրելու և գրելու գաւառի պատմութիւնը, սակայն այս ևս անյաջող անցաւ յիշեալ պարոնի և միութեան կենտրոնական վարչութեան անհամաձայնութեան պատճառով։ (Տես էջ 11)։

Այժմ, շուրջ երեսուն և վեց տարի յետոյ, երբ Զհարմհալ գաւառը իր վերջին օրերն է ապրում, իմ թոյլ գրչի աշխատութիւնը մի շարք նկարների, գաւառի գունաւոր քարտէզի և դոկումենտների հետ միասին տպագրութեան եմ յանձնում, յուսալով զերծ է մնալու արհամարհանքներից։

Իմ խորին շնորհակալութիւնս եմ յայտնում բոլոր այն բարեկամներիս, որոնք իրենց բարոյական աջակցութիւնը չբխնայեցին՝ ուղարկելով ինձ նիւթեր, կամ նկարներ։ Յատկապէս պ. Հայդուկ Մանսուրեանից, որ քարտէզի կազմելու գործում աշխատակցել և համագործակցել է ինձ հետ, նաև որդուցս՝ Յովիկից, որը ձայնագրել է

Զհարմհալի ժողովրդական երաժշտութիւնը։

Ցաւալի է իմ այս փոքրիկ աշխատութիւնը ապագայում նիւթ ծառայի ազգային բանասէրների համար։

Աւ. Ֆի. Եղգարեան

Կալկաթա, 1952 թ.

ԶՀԱՐՄՀԱԼ ԳԱՒԱՌԻ ՀԱՅ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Թիւ 3/13 Աբգան, 3 Ապրիլ 1950

«... Հոգեւոր Հայր,

Մեծ հաճոյքով ստացանք Ձեր գրած 7 Մարտ 1950 թ. նամակը և մեր հերթական նիստում մեծաւ ուրախութեամբ ընթերցուեց և արժանացաւ գնահատանքի։

Պատիւ ունենք յայտնելու, որ Ձեր նպատակը շատ ու շատ գովելի է ու ազնիւ։ Վաքչութիւնս բուռն համոզումով և սրտանց ողջորում ու խրախուսում է Ձերդ Հայրութեանը և հաւատք ունի, որ Ձեր աշխատութիւնը լրիւ կերպով կը պատկերացնէ մեր գաւառի ճշգրիտ պատկերն իր առողջ մանրամասնութեամբ։

Թերահաւատ չենք, որ շուտով պիտի յաջողէք տեսնելու Ձեր իղձերի իրականացումը, այն է՝ տպագրութեան յանձնէք տարիների Ձեր աշխատանքը «Իրանի Զհարմհալ գաւառը» գրքոյկը։ Համոզուած ենք, որ բովանդակութիւնը աւելի քան գոհացուցիչ կը լինի, որ ոչ թէ մեր գաւառեցիները, այլ և օտարք մի-մի օրինակ գնելով պիտի Ձեզ մեծապէս խրախուսեն։

Ինչ վերաբերում է պ. Արամ Երեմեանի աշխատութեանը, պիտի պարզապէս ասել, որ միութիւնս չկարողացաւ որևէ կերպ համաձայնութեան գալ յիշեալ պարոնի հետ, թէ գրքի ծաւալի և թէ տպագրութեան սուղ պայմանների առնչութեամբ։ Համարեա թէ խնդիրը փակուած է և անգործնական։

Ցանկութիւն էիք յայտնել, որ Զհարմհալ Գաւ. Հայ. Ուս. Միութեան վերաբերեալ բաժինը տրամադրեն Ձեզ՝ կցելու Ձեր գրքոյկին։ Նախ պիտի խոստովանել, որ դեռ ևս պատրաստի որևէ գրուածք չունենք Միութեան պատ-

մութեան շուրջ, բայց քանի որ այս տարեայ վերջերին տօնելու ենք Միութեան քսանամեակը՝ հետևաբար հաւանականութիւն կայ, որ այս գեղեցիկ առիթով Միութիւնը իր անունից մի փոքրիկ գրքոյկով՝ քսանամեայ պատմութիւնը լոյս ընծայի։ Որպէսզի Դուք չուշացնէք Ձեր գործը, թողնում ենք Ձեզ, որ եթէ կը ցանկանաք՝ Ձեր վառ յիշողութեամբ, կարող էք մէջբերումներ կատարել։

Ձեզ չէիրաւորած լինելու համար, պիտի խնդրէինք, որ դուք ևս բաժանէիք մեր կարծիքն եւ որևէ միտում չտայիք, թէ ինչու Միութիւնը չընդառաջեց Ձեզ։ Թող էլ աւելի բազմապատկի այն ոյժն ու կորովը, որ ներշնչած է Ձեր ոգում, որպէսզի օր առաջ աւարտէք Ձեր գովելի աշխատութիւնը՝ յանձնելով տպագրութեան։

Գովում ենք նաև Ձ. Գ. գունաւոր քարտէզի ձեռնարկը, գրեթէ մեծ հաճոյքով ենք գնում և սպառելու է շուտով։ Սրտագին բարեմաղթութեամբ և Ձեր հայրական օրհնութիւնը հայցելով՝

Ձ. Գ. Ուսումն. Միութ. Կենտր. Վարչ.
Ստորագրած Նախագահ՝ Մ. Վարդանեան
Քարտուղար՝ Ղ. Գէորգեան
Կնիք

Թիւ 14/13 Աբադան, 28 Մայիս 1950

«. . . Հոգեւոր հայր,

Ստացանք Ձերդ 4 Մայիս 1950 թ. նամակը և մեր հերթական նիստում ուրախութեամբ կարդացինք։

Ընդառաջելով Ձեր փափագին, վարչութիւնս ուրախութեամբ կաշխատի Ձեր մատնանշած Զարմահալի լուսանկարների ապակիները ձեռք բերի եւ մի-մի օրինակ արտատպի և ուղարկի Ձեզ, որպէսզի տեղաւորէք Ձ. Գաւ. պատմութեան գրքում։

Վարչութիւնս գնահատում է Ձեր հետաքրքրութիւնը հանդէպ մեր գաւառի և միութեան և ապա սրտանց յաջողութիւն և լիակատար կորով է ցանկանում Ձեր նպատակի իրականացման համար։

Մեր անխառն ու սիրալիր բարեմաղթութիւններով կը հայցենք Տիրոջմէ պարգևելու Ձեզ համբերութիւն և կատարեալ առողջութիւն։ Ընդունէք կազմիս ջերմ բարևները։

Ձեր Օրհնութիւնը հայցելով՝
Ձ. Գ. Հայ. Ուս. Միութ. Կենտր. Վարչ.
Ստորագրած Նախագա՝ Մ. Վարդանեան
Քարտուղար՝ Ղ. Գէորգեան
Կնիք

ԶՀԱՐՄԱՀԱԼ ԳԱՒԱՌԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Զհարմահալի հայ ժողովուրդը բեկորն է այն գաղթականութեան, որոնց Շահ-Աբբաս Մեծ պարսից թագաւորը՝ 1604—5 թուականներին Հայաստանից գաղթեցրեց Պարսկաստան և որոնց մասին «Զամչեան» պատմութեան, Առաքել Վ. Դաւրիժեցւոյ «Պատմութիւն Նոր-Զուղայի» և այլնի մէջ համառօտ, կամ մանրամասնօրէն նկարագրել են հեղինակները և տուել նրանց կրած տանջանքների, նեղութիւնների և յատկապէս Արաքս գետից անցնելու սոսկալի պատկերը։ Այստեղ դիմենք յիշեալ պատմիչների դրաւոր յիշատակութիւններին։ «Յետ անցնելոյն վտարելոցն Արարատու ընդ գետն Երասխ, առաջնորդութեամբ Էլիազ Սուլթանին Խալիֆայելու, ընդ դժուարակոխ ճանապարհս լերանց և ձորոց չեալ ձմերեցին ի Թարում — Խալխալ յԱհար, ի Մուշկուն և ի մերձակայս նոցին...։ Ի-հասանել քաղցրաշունչ օդոյ գարնայնւոյ... Վերստին սկսաւ վարել զժողովուրդն մինչև տարեալ հասոյց ի քաղաքն Սպահան։ Եւ անդէն որք քաղաքացիքն էին ի նմին քաղաքի զետեղեցուցեալ բնակեցուցին և որք շինականք էին և գեղականք ի շրջակայ գաւառսն քաղաքին Ըսպահանու բնակեցուցին, ի Լնջան, և Ալինջան, ի Գեանդուման և ի Զղախօ-Զհարմահալ ի Փերիա և ի Բուրվարի։

(Պատմութիւն Նոր-Զուղայի, հատոր Ա. էջ 31 և Ա. Դաւրիժեցւոյ գլ. Դ. էջ 45)։

. . . . Լնջան և Ալինջան էին գաւառք սահմանակիցք քաղաքին, իբրև չորս, կամ հինգ փարսաղ հեռի ինքմանէ։ Ալինջանա էին եօթ գիւղօրեայք որոց անուանք են Մշաղրիւր, Փիդուն, Զազուն, Քափաշան, Բօնդարդ, Քուրուջ և Մեմեդ։ Լնջանայ էին տաս գիւղօրայք՝ Փարթուն, Զուղուն, Զուղուն, Քիլիսուն, Փելարդ, Բուրուզարդ, Սեմսուն, Խունսարեք, Միրգուն և Քեալէ։ Վերջին գիւղը մինչև այժմս էլ կոչւում է «Քեալէ-Արմանի» (այսինքն հայոց Քեալէ)։

«Գեանդուման և Զղախօ են հիւսիսային արևմտեան -(պէտք է լինի հարաւ-արևելեան) գաւառ Սպահանայ, իբրև չորեքտասան ֆարսախ հեռի ինմանէ—(օչ չորեքտասան, այլ 24 ֆարսախ է, որը հաւասար է 144 կիլոմետրի)։ Հինգ գիւղօրայք էին նորա՝ Ահմադաբադ, Միրաք, Գիշնիգան, Լիւասիան, Զիվրիգան և Ֆոնդիգան»։

Փերիոյ էին 22 գիւղօրայք... Բուրվարի ունէր 22.։ Իգաւառսն Ալինջան և Լնջան իսպառ դատարկեալ հայոց պարսիկք բնակին ի նոսա։ Իսկ ի գիւղօրեայս Գեանդուման, Փերիոյ և Բուրվարու եղեալ են փոփոխութիւնք... (Անդ. էջ 32)։

«Գեանդուման կոչի և գաւառ Զարմահալու... Երեք ամօք առաջ չորս գիւղօրեայք էին հայոց ի նմին գաւառի, որոց անուանք են՝ Ահմադաբադ, Միրաք, Գիշնիգան և Լիւասիան այլ շնորհիւն Աստուծոյ աճումն ժողովրդեան հարկադիր եղև առնել զհատուած գաղթականութեան և յաւելուլ զայլ ևս երկու գիւղօրեայս։

Առաջին հատուածն եղև 1855 ամի ի գեղջեն Գիշնիգանայ քսան և չորս գերդաստանք, որք բնակեցան ի գեօղն որ կոչի Մահամռայ[1]), երկրորդ հատուածն եղաւ ի 1856 ամի, ի գեղջեն Ահմադաբադա տունք իբրև քսան և հինգ, որք բնակեցան ի Բոլդաջի։ Թուահամարութիւն հայ ժողովրդեանն նոյն գաւառի, ըստ հրամանի Սրբազան Ա-

1) Ներկայիս Մամուռան գիւղ։

առաջնորդին Թադէոսի[1] ի 1856 ամի եղև ըստ յետագայ աղիւսակին. —

Գիւղօրնայք	Տուն	Արուք	Էգք
Սիրաք	64	277	245
Ահմադաբադ	92	326	271
Գիշնիգան	43	125	114
Մահամռա	24	72	73
Լիվասիան	83	307	253
Գումար	306	1107	956

Գեանդուման, որի անունով այժմ Զ. գաւառի մեծ մասը կոչւում է «Բոլուքը Գեանդուման», վերոյիշեալ գիւղերի շարքում չկայ։

«Սոյն գաւառական ժողովուրդք մերձ լինելով քաղաքին առնեն գյաճաի անցուդարձ ի Զուղա, բերելով զբերինս և զվաճառս իւրեանց որք են՝ ալիւր, իւղ, ձէթ, ոչխար, պանիր և մեղր։ Յաղագս ունելոյ նոցա գյարակցութիւն ընդ քաղաքին և ընդ Զուղայու քան զգաւառականսն են քաղաքավար, բարեկիրթ և կենցաղագէտ։ Ըստ որու առնեն նոքա զտուրևառութիւն և ունեն զգետին ընդարձակ վասն հերկագործութեան, վասն որոյ սոյն գաւառականք առաւել հարուստ են քան զայլ գաւառականսն և սկսեալ 1850 տարւոյ առնեն յառաջդիմութիւն թէ ըստ աճելութեան և թէ ըստ հարստութեան մասին։

(Պատմութիւն Նոր-Զուղայի Բ. հատոր, գլ. Թ. էջ 295)։

1) ԻրանաՀնդկաստանի Թեմի Առաջնորդը։

ՏՈՀՄԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՍՈՒՔԵԱՍԵԱՆՆԵՐ

Ինչպէս տեսանք, 17-րդ դարի սկզբներին Շահ-Աբբաս Մեծը, շարս Հայաստանի միւս գաւառների և հին Զուղայի ժողովրդի Բասեն գաւառի ժողովրդին ևս քշում է Պարսկաստան, որի իշխանն էր Մելիք Տէր-Պետրոսը, որ իր Սուքեաս որդու և զաղթականների հետ միասին գալիս է Զհարմհալ։

Սուքեասը քահանայ է ձեռնադրւում և հօր մահից յետոյ՝ ի քն է կառավարում Զհարմհալի ժողովրդին մինչև իր մահը։ Նա վախճանւում է 1681 թ. Ապրիլ 5-ին. մարմինն ամփոփած է Վաստիդան հին հայաբնակ գիւղի հայոց գերեզմանատանը, որի վրայ գրած է ընտիր մի գերեզմանաքար. երկայնութիւնն է 3,0 մետր, լայնութիւնը՝ 85 սանթ. և բարձրութիւնը՝ 1,80 մետր։ Քարի վրայ փորագրւած է հետևեալ տապանագիրը։

ՅԻ ՔԻ
ԾՌ. ԵԼԻ Ի ՀՕՐԷ ԵԿԻ ԱՇԽԱՐՀ. ԱՅ.
ԹՈՂՈՒՄ ԱՇԽԱՐՀ.
ԵՐԹԱՄ ԱՌ ՀԱՅՐ.
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏԷՐ ՍՈՒՔԵԱՍԻՆ.
ՍԱ Է ՈՐԴԻ ՊՕՂՈՍԻ. ՈՐ ՓՈ-
ԽԵՑԱԻ ԱՇԽԱՐ ՎԵՐՈՒՆ.
ԹՎ. ՌՃԼԹ.
ԱՊՐԻԼ ԱՄՍԻ 5.
1681

Ասանսոլբնակ (Հնդկաստան) տիկին Բնդզադա Զուկաս քեալանթար Սուլէհման Յովհաննիսեանի մօտ եղած

ձեռագիր թերթիկներից զատ այլ հետևեալ մանրամասնութիւնները իրենց ազգատոհմի վերաբերեալ։

«1606-ին Հայաստանէն գաղթած չարմհալ մեր պապերն եղած են Մելիք Պետրոս եւ Սուքեաս, հայր և որդի քահանայ. Ասոնք շատ ժողովրդասէր են եղած. վեց շառաւիղք, այսինքը 6 սերունդ քանի դար յաջորդաբար արժանաւորապէս վարած են գիւղապետի քալանթարութեան պաշտօնը. Շատ անգամ Բախտիարի, այսինքն լոռերի հարստահարութիւններն զսպելով. ոմանք էլ նահատակելով, նոյն ծանր պաշտօններն շարունակել են որդոց ոդի։ Այս տոհմերը Սուքեասենց սերունդն են»։ Ապա շարունակում է իրենց ճիւղաւորումը։

ՔԵԱԼԱՆԹԱՐ ԱԲԵԼ

Մելիք Տէր-Սուքեասի մահից յետոյ Չհարմհալ գաւառի իշխանութիւնն անցնում է իր որդի Աբելին։

Լոռերը անտեղի հարկեր են պահանջում հայ գիւղացիներից և անխնայ հարստահարում։ Աբելն աշխատում է վերջ տալ այդ հարստահարութիւններին, սակայն չի յաջողում։

Այդ ժամանակամիջոցում Նադիր-Շահը հրահանգներ է ուղարկում՝ գաւառներից հարկ հաւաքելու. երբ հարկահանները գալիս են Լիվասիան գիւղը, քեալանթար Աբելը սաստիկ զայրացած պատասխանում է հարկահաններին. «Ի՞նչու է Նադիր Շահը մեզանից հարկ պահանջում. եթէ լոռերն են մեր թագաւորը, իսկ եթէ Նադիրն է մեր թագաւորը՝ ի՞նչու են լոռերը մեզ հարստահարում»։ Հարկահանները վերադառնում են և եղելութիւնը պատմում Նադիր Շահին։ Շահը սաստիկ զայրացած զօրքի գլուխ է անցնում և յարձակւում լոռերի վրայ. նրանց գաւառից դուրս է քշում ու վերադառնում Չհարմհալ։ Քալանթար Աբելը քահանաներով, ժողովուրդով և ընծաներով

ընդառաջ է գնում և ներկայանալով Շահին ասում է.— «Ահա ես և քո տէրութեան հպատակ ժողովուրդը» և տալիս է հարկը։ Թագաւորը Աբելի պատասխանը լսելով՝ նրան գովում է, պարգևատրում ընտիր վերաբկուով և ապատ արձակում։

ՔԵԱԼԱՆԹԱՐ ՂՈՒԿԱՍ

Քեալանթար Աբելին յաջորդում է նրա Սուքիաս որդին, իսկ Սուքեասին՝ իր որդի Ղուկասը։ Ղուկասը ծընուել է 1784 թ.։ Նա «Այր լայնախորհուրդ և ժողովրդասէր էր»։ Ամէն ջանք գործ է դնում իր ժողովրդի հանդիստութեան և յառաջադիմութեան համար։ Հակառակ իր թափած ջանքերի՝ Չհարմհալի գաւառապետ Մահմադ Ռզա խանը չէր սիրում Ղուկասին, ուստի 1834 թ-ին, երբ նա ժողովրդական գործերի համար Նոր-Ջուղա էր գնացել, Մահմադ Ռզա խանը նրա ետեւից չորս հոգի գինուած մարդիկ է ուղարկում, որ սպանեն նրան։ Սրանք հանդիպելով Ղուկասին Սպահանի և Նոր-Ջուղայի միջև գտնւող Զայեանդէ-բուդ գետի վրայի «Ալլահվերդի խանի» կոչուած կամրջի վրայ մի կեղծ նամակ են յանձնում նրան գաւառապետի անունից և գնդակահարում։ Ջինւորները վերարկուն ու գլխարկը վերցնում են և անցնում դէպի Չհարմհալ։ Լուրը հասնում է Ամենափրկչեան վանքը, Եպիսկոպոսը, քահանաները և բաւական ժողովուրդ գալիս են մեծ թափորով մարմինը տանում, ամփոփում են յիշեալ վանքի արևմտեան ձախակողմը, որի տապանագիրն է հետևեալը.—

«Ի ՆԵՐՔՈՅ ԱՅՍ ԴԱՄԲԱՐԱՆԻ
ԱՄՐԱՓԱԿԵԱԼ ՀՈՂՈՎ ԾԱԾԿԻ,
ԶԴԻ ՂՈՒԿԱՍ ՔԵԱԼԱՆԹԱՐԻ,
ՈՐԴԻ ՍՈՒՔԵԱՍ ԲԱՐԵԶԱՐԴԻ,

ԷՐ ՄԵՐ ԱԶԳԻՆ ՅՈՅԺ ՊԻՏԱՆԻ,
ՅԻՍՈՒՆ ԵՒ ՄԻ ԱՄ ՀԱՍԱԿԻ,
ԱՆՄԵՂ ԳՈՂՈՎ ՆԱՀԱՏԱԿԻ,
ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ՏՈՒՔ ՈՂՈՐՄԻ։
ԹԻՒՆ ՀԱԶԱՐ ՈՒԹ ՀԱՐԻՒՐԻ
ԵՐԵՔՏԱՍԱՆ ՀԻՆԳ ԱՒԵԼԻ,
ՅԱՄՍԵԱՆՆ ԵՐԵՔ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ»։

Քեալանթար Ղուկասն ունենում է չորս որդի, Յարութիւն, Մարտիրոս, Յովհաննէս և Յովակիմ։ Յարութիւնը դառնում է Լիվասիան գիւղի քեալանթարը և եւ մարտիրոսը՝ Ամադաբադ գիւղի։ Յարութիւնը՝ շնորհիւ իր խելացիութեան և ճարպկութեան, միշտ արգելք է հանդիսանում լոռերի հարստահարութեան և կեղեքումներին ու ոչնչացնում նրանց ծրագիրները։ Սրա համար էլ լոռերը բարկացած յարձակւում են Յարութիւնի վրայ և նրան իր Աբել եղբօր հետ 1855 թ. դեկտեմբեր 17-ին սպանում են Լիվասիան գիւղի առջև։

Նոր-Զուղայի թեմի ժամանակի առաջնորդ՝ Թադէոս եպիսկոպոսը բողոքում է պարսից Սադր-ազամ Նախարարին՝ կատարած մագասպանութեան դէմ։ Նա յարդելով առաջնորդի բողոքը՝ զօրք է ուղարկում մարդասպան լոռերի վրայ և նրանց բնակարանները քարուքանդ անում։ Սրանք երկար ժամանակ թափառում են այս ու այն կողմ և վերջապէս, դիմում են քեալանթար Աբելի եղբայրներին և զաւակներին, ներողութիւն են խնդրում և հաշտութիւն կնքում։

Նոյն Ասանսալարնակ Տիկին Բեգզադայի մօտ գտնւող թերթիկներից և քեալանթար Սուլէհմանի թուղթերը պ. պ. Մինասի և Սուլէհմանի մօտ եղած «Մեկնութիւն Սաղմոսաց» գրքի 187-րդ էջի լուսանցքում գրածներից քաղում ենք հետևեալ մանրամասնութիւնները.—

«. . . Գալով քեալանթար Ղուկասի նահատակութեանը Սպահանում. նահատակողներն են Մառգա խանի մարդիկը, Զալըշօթոր գիւղից։ Առաջ քան Բախտիարի խաներին նա է եղած հուքումաթն Զարմահալու։ Ղուկաս պապը կառավարութիւնից Զարմահալու հուքումաթն վերցրել էր. եօթ տարի հուքումաթ է եղած։ Մառգա խան թըշնամութեամբ մարդ է ուղարկած քամակից որ սպանեն։ Պապը Զուղայից քաղաք է գնում կառավարութեան հարկը վճարում, վերադառնալիս Ալավերդի խանի կարմաունջի վրայ նհատակում են և փախչում։ Մութը ընկնում է, մարդասպաններին չեն կարողանում գտնեն։ կորչում են։ Զուղայից մեծ բազմութիւն է գալիս առաջնուդի հետ տանում են վանքն և շատ ողբալով զանգատան առաջը թաղում են։ Սա այն ժամանակում մեծ անուն է ունենում թէ Զհարմհալում և թէ Զուղայում։ Առաջնուդը դիմում է Շահին, արիզա է գրում շատ գանգատներով, տալիս է քալանթար Մարտիրոսին, քանի հոգի էլ հետը գընում են Թեհրան, արիզէն տալիս Շահին. հրաման է դուրս գալիս Շահից, սարվազ ու թոփով իւր մեծաւորով գալիս են Զալըշօթորու դովրը բռնում են որ թոփի կապեն այդ գիւղն, որ բոլորին կոտորեն. Զհարմհալու քեադխուդէքն թէ հայ և թէ թուրք միջնորդում են, որ այդ գիւղն և մարդիկը չը կոտորեն, շատ ջանքերով հաշտութիւն են կնքում. սարվազներու գալու գնալու ծախսը վճարեցին . . .»։

«Թիւն 1855 Դեկտեմբեր 17-ին Նասրադին Շահի թագաւորութեան Սադրազամն, Վազիր Համզա-Միրզեն Ապահանու քաղաքապետ, այդ նշանակէ չարսհաթումն քեալբալի Դօվութն, Զմշիդն լոռերուց եկան Լիվասիան խաբնութիւնով քալանթար Յարութիւնին և Աբելին նահատակեցին, մենք Զարմհալու չորս գեղեցիքս քանի հոգի գընացինք Ըսպհան, սրբազան Թադէոս առաջնորդն արիզա

գրեց Թագաւորին և Սադրազամին, դասիդ գնաց Համզամիրզէն Խանքաբին զրկեց եկաւ Գեանղուման, գնացին Բիզերդու զօվրը. 300 թֆանքչի ինք, կէս դեաղ ձիւն կէր դետինը. 15 մարդ Բիզերդու մէջը կէր մերձ, մինչի 30 մարդ Խանքաբիցն ներս մտան դալեն. Աստուած ոգի չէր թողին դուս եկան, միայն մէ Յուսոֆին ձեռ բերին։ զրբ-գեց Սպահան Համզամիրզի համար և Համզամիրզեն գրեց Խանքաբին թէ մարդ գիր դէն չքաշեն մինչի ձիւնն եր-թայ. էտոնց բռնեցինք էդ միջոցին։ Նասրադին Շահն չորս ֆարման էր գրի, մէկը Սպհան Համզա միրզին, մէկը Արաբստան Խանլար միրզի, մէկը Շիրազու Շահզադին, մէկը Հասենդուլի խան Բախտիարու հեքիմին, թէ էդ 3 դաթլին[1] կուզեմ։ 1856 թ. Մարտի 12-ին Խանքաբէն, որ Համզամիրզի զրդածն էր, Ռզաղուլի խանը, որ Խան-լար միրզի զրդածն էր, հետ միուսին եկան Բիզերտ, քա-նիսն որ կէին՝ ձեռ եկան, Ռզաղուլին տարաւ. դալէն քանդել տուեց։ լոռերուն տարաւ Արդալ երկու ամիս մնա-ցին. էնդից Յուսուփին Համզամիրզէն զրդեց թեհրան։ Սադրազամը գրել էր Համզամիրզին, մեզ ուղեցին յետ Սպհան, ես Մարտիրոսս գնացի թէհրան, մէկ ամիս մնացի կրկին հուքմ ելաւ Խանլար միրզի վրայ, մօղասրնե-րուն[2] ուղեցին, Դաւութին Խանլարին տուեց տարան Սպհան Համզամիրզի մօտ...» (պակասում է)։

ՔԵԱԼԱՆԹԱՐ ԲԷԳԼԱՐ

Քեալանթար Յարութիւնից յետոյ՝ Լիվասիան գիւղի քեալանթար է նշանակւում նրա որդի Բէգլարը, որը հա-մեստ ու խաղաղասէր անձնաւորութիւն է լինում։ Սրա օրով ժողովուրդը խաղաղ պայմանների մէջ է ապրում։

Այս ժամանակաշրջանին բախտիարցիները կամաց-

1) Դաթէլ — մարդասպան։ 2) Մօղասեր — յանցաւոր։

կամաց զօրեղանում են և սկսում են գնել և մասամբ էլ բռնի տիրանում են Զհարմհալի հողերին։

ՔԱԼԱՆԹԱՐ ՄԱՐՏԻՐՈՍ

Սա քաւական խոհեմ և մեծ հանճարի տէր լինելով՝ նշանակւում է Զհարմհալի գաւառապետ և եղբայրասիրու-թեամբ վարում է պաշտօնը տարիներ շարունակ։

Քեալանթար Աբէլի և Յարութիւնի սպանման դէմ բողոքում է և անձամբ գնում է Նոր-Զուղա, յետոյ՝ թեհ-րան Նասրեդդին թագաւորի մօտ և հրաման գտնում ձեր-բակալելու և վրէժ լուծելու մարդասպաններից, որը գոր-ծադրւում է։

Վերոյիշեալ մանրամասնութիւնները ինքը գրի է առել մի «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի» գրքի լու-սանցքներում։

Սրանց տոհմի վերջին տանուտէրն էր քեալանթար Սուլեհմանը, Հաջիաբադ գիւղում։ Նա ծնւել է 1841 թ. և վախճանւել Նոր-Զուղայում 1907 թ. Ապրիլին։

Նախքան Հաջիաբադ գիւղի հիմնւելը՝ նա տանուտէր է եղել Քաթակ և Նոր-Քոնարք գիւղերում։ Զաւակները գաղթել են Հնդկաստան։

ԲԱԲՈՒՄԵԱՆՆԵՐ

Սրանց տոհմից տանուտէրութեան պաշտօն են վարել՝ Խուդաբաշխ, Բաբում, Այվազ, Աբզար, Յովհաննէս, Մի-նաս և Սուլեհմանը։ Կալկաթայի հայոց եկեղեցում և Մադրասի կաթոլիկաց ս. Թովմաս վանքում գերեզման-ներ կան Բաբումեաններից։

ՕՀԱՆԵԱՆՆԵՐ ԿԱՄ ԳԱՒԹԵԱՆՆԵՐ

Սրանք նոյնպէս Հայաստանից գաղթելով՝ հաստատւում են

Գիշնիգան գիւղում։ Առաջին տանուտէրը լիում է Օհանը. նրանից յետոյ՝ Դաւիթ, Մկրտիչ, Մկրտում և Մանուկ, որոնց տիտղոսն էր «Քիխա»։

Վերջինիս Զհարմհալի ժողովրդի մեծ մասը անուանում էր «Անաստուած», որովհետև նա անոտիապաշտ չէր. աշխուրջ, լուսամիտ և ճարպիկ մէկը լինելով՝ միշտ սիրուած էր շատերից և մանաւանդ Զհարմհալի գիւղատէր խաներից։ 82 տարեկան հասակում 1946 թուին մեկնեց Մայր հայրենիք, իր գիւղի ժողովրդի և իր ընտանիքի հետ։

ՂԱՐԱԽԱՆԵԱՆՆԵՐ

Ղարախանեանը նոյնպէս Պարսկաստան գալով հաստատուում է Զհարմհալի Սիրաք գիւղում։ Սրան յաջորդում է Նրա Նազար որդին. Նազարից յետոյ՝ Խուդադ որդին, ապա Խաչիկ. Սիմէօն, Մկրտիչ և մկրտումը յաջորդաբար քալանթար են նշանակուում Սիրաք գիւղի համար։

Քիխա Մկրտումին յաջորդում է որդին Մեհրաբը, որին Նասրեդդին Շահը գնահատելով նրա ծառայութիւնը, նուիրում է «Շիր ու Խորշիդ» շքանշան և «Եավար» տիտղոս։ Վախճանուել է Նոր-Զուղայում։ Որդիքն են՝ Յովհաննէս խան և Յովսէփ խան Ղարախանեանները Թեհրանում։

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ
ՄԵՀՐԱԲ ԵԱՎԱՐԲԷԳ
ՈՐԴԻ ՔԵԱԴԽՈՒԴԱ
Մ. ՂԱՐԱԽԱՆԵԱՆ
100 ԱՄԱՅ ՀԱՍԱԿԻ
ԿԱՅԵԱԼ ԱՇԽԱՐՀ,
ԵՒ ՍՏԱՅԵԱԼ

ՊԱՐԳԵՒ ՇԱՀԷՆ
ՎԱՅԵԼԵԱԼ ԵՐՋԱՆԻԿ
ԿԵԱՆՍ ԱՇԽԱՐՀԻ
ՓՈԽԵՑԱԻ ԱՌ
ՀԱՅՐՆ ԵՐԿՆԱՒՈՐ
25 ՄԱՅԻՍ 1927
ՀԱՆԳԻՍՏ
ՈՍԿԵՐԱՅԴ.

Եավար Մեհրաբի որդիքը՝ Յովսէփ խան և Յովհաննէս խան Ղարախանեանները լինելով ժամանակի կրթուած երիտասարդներից, պետական հաստատութիւններում մեծ պաշտօններ վարեցին։

ՄԻԻՍ ԱԶԳԱՏՈՀՄԵՐԸ

Վերոյիշեալ նշանաւոր տոհմերից բացի Զհարմհալում կան հետևեալները.

Ադամեաններ, Անդրէասեաններ, Աղազարեաններ, Աւետիքեաններ, Աղէքսանդրեաններ, բարսեղեաններ, Խաչիկեաններ, Մինասեաններ, Մանսուրեաններ, Նորաւեաններ, Յարութիւնեաններ, Պողոսեաններ, Փուլադեաններ և այլն։

Տողերիս գրողի ազգանունը՝ Եղդար, Անդրէասեան տոհմից է, Անդրէասը Շահ-Աբբաս Մեծի բերած գաղթականութեան հետ եկել է Զհարմհալ՝ Իրան և հաստատուել Ահմադաբադ գիւղում։ Աւ. քահ.

ԶՀԱՐՄՀԱԼԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՍԵՆ ԳԱՒԱՌԻՑ Է ԳԱՂԹԵԼ

Պատմաբան Առաքել Վ. Դաւրիժեցին ասում է.— «... Քանզի առաքեաց զզօրագլուխս բազում զօրօք ի կողմն Արզրումայ, որք գնացեալ աւերեցին զերկիրն Բասենու...», էջ 29.

Բերենք կրկին մի շարք վկայութիւններ վերոյիշեալ պատմիչից.— «... Եթէ միւս խանին, որք բերին ի Կարսայ, ի Կաղզուանայ, ի Բասենու...».—էջ 35. «... Եւ յառաջ քան զայս՝ զգաւառսն Կարնոյ եւ զԲասենու...», Անդ. էջ 53.

Իսկ «Պատմութիւն Նոր-Զուղայի» Թ. գլ. ասում է.— Ըստ նոյն գաւառի ծերոցն վկայելոյ՝ ժողովուրդք Զարմհալայ են գաւառականք Բասենայ գաղթեալ ի Հայաստանէ. Որոց գաւառապետ, կամ իշխան եղալ է Մելիք Տէր_Պետրոս, որ ընդ Սուքեաս որդոյն իւրոյ եկն ի Հայաստանէ.

Հաստատելու համար վերոյիշեալ մէջբերումները, այստեղ աւելացնենք և այն, որ մինչ այժմ էլ յաճախ գաւառեցիների բերանից լսում ենք «Բասենայ զովրէն» խօսքը, որ նշանակում է Բասենի ժամանակներից.

ԲԱՍԵՆԻՑ ԳԱՂԹԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԲՆԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՏԵՑ ԶՀԱՐՄՀԱԼՈՒՄ

Շահ Աբբասը հայերին Սպահան հասցնելուց յետոյ, նրանց համար բնակավայր որոշեց, սակայն և արտօնեց նրանց ընտրելու իրենց ցանկացած ու սիրած տեղը. «... Եւ զգաւառականսն սփռեաց ի լաւագոյն գաւառն Պարսկաստանի, որոյ երկիրն էր բերրի և պտղաբեր և չկայր պակասութիւն, կամ օդոյ վատութիւն...». Պատմ. Նոր-Զուղայի Բ. հատոր գլխ. Թ. էջ 295.

Աւանդաբար ասում է. երբ հայերը հասան Սպահան, թագաւորից պահանջեցին ձիւնապատ լեռներով մի տեղ. «Ղառլու դաղ իստարաք» ասելով. իսկ Առ. Վ. Դաւրիժեցին գրում է.—

«Բնակեցուցին ի Լնջան, յԱլինջան, ի Գեանդուման և ի Զղախօռ...», էջ 45.

«... Վասն զի գնացեալ էր ի Գեանդուման գաւառ. Զարքազ Իբրահիմն եգիտ Կաթողիկոսն ի գիւղն Քաթակ... (Դաւիթ Կաթուղիկոսին է վերաբերում. իսկ Քաթակ գիւղը Գեանդումանի հարաւ_արևմտեան կողմն է, երկու կիլոմետր հեռաւորութեամբ. (Աւ. քահ.).

«... Քանզի Շահն պարգևեաց նմա (Դաւիթ Կաթուղիկոսին) գիւղ մի դարման կենաց նորա ի գաւառին Զղախօռու, որում անուն կոչէին Ֆոնդիգան...», էջ 215-216.

ԵՐԲ ՀԱՍՏԱՏԻԵՑԻՆ ՀԱՅԵՐԸ ԶՀԱՐՄՀԱԼՈՒՄ

«Բնակեցուցին» ասելով դժուար է հասկանալ թէ ի՞նչքան ժամանակից յետոյ, կամ ի՞նչ հանգամանքների ներքոյ բնակեցուցին. Ըստ իս այնքան էլ հեշտ գործ չէր այն ժամանակ Պարսկաստանում այդպիսի մի մեծ գաղթականութեան տեղաւորելը, երբ տեխնիկական ոչ մի յարմարութիւն չի եղել. ինչքան ծերունիների բանաւոր պատմութիւններից լսել ենք, տարիներ է տևել մինչև Զհարմհալի, Փերիայի և միւս գաւառների ժողովուրդը յարմար տեղ է ընտրել և քաղաքի շրջակայքից կամաց-կամաց քաշուելու այնտեղ բնակութիւն հաստատել. Զհարմհալի առաջին բնակիչները ամենաշուտը 1610 թուականին հազիւ թէ հաստատուած լինեն, այն է՝ Պարսկաստան հասնելուց 4—5 տարի յետոյ.

ՔԱՆԻ՞ ԳԻՒՂԵՐԻ ԲԱԺԱՆԵՑԻՆ ԶՀԱՐՄՀԱԼԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ

1856 թուականի վիճակագրոյցի մէջ.—«Ըստ հրամանի Սրբազան Առաջնորդին Թադէոսի», յիշատակուած է միայն հինգ գիւղ Զհարմհալում, սակայն սկզբնական շրջանում եղել են և ուրիշ գիւղեր, որոնք մանրամասն ուսումնասիրութեան և գրի առնելու արժանի են եղել և մոռացութեան են տուել։ Գիտենք մի քանի գիւղեր, հին ու բազմամարդ գիւղերից, որոնք երկար ժամանակ գոյութիւն են ունեցել. օրինակ՝ Վաստիգանը, Շալամազարը, Սուլուգանը, Զիւրիգանը և Թաստովը. բաւական է միայն նկատի առնենք Վաստիգանը իր պատմական հետքերով։

Զհարմհալի հայերը գաւառում հաստատուելու օրից իսկ սկսել են չուել զանազան կողմեր, կամ երկրներ. շատերը յարմար առիթով վերադարձել են Հայաստան։ 1874 թուին Լիվասիան գիւղից 23 տուն գաղթել են Ղարաղան գաւառը և հաստատուել Զանախչի գիւղում։ Ահա թէ ինչ է գրում «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի» գրքի 571-րդ էջի լուսանցքում։—Լիվասիան տեսինք, որ քսան և երեք տուն գնացին Սամբլ-Մլքի հետ Թեհրան, որ կասեն Շահրիար մհալն, որ գեղն է Էբրահիմ աբադ, յետոյ գնացին Ղարաղան, գեղն Զանախչի 1874 աւալի աշունք». (Սեպտեմբերի վերջերին)։

(Յիշեալ գիրքը այժմ գտնուում է Կալկաթայում, հանգուցեալ Քեալանթար Սուլեհմանի թոռների պ. պ. Մինաս և Սուլեհման Յովհաննիսեանների մօտ. բերել են իրենց հետ Զհարմհալից)։

Զհարմհալի ծերունիների յաճախակի պատմութիւններից գիտենք հետևեալը Վաստիգան գիւղի ժողովրդի հեռանալու մասին։

Հայերը Վաստիգանում հաստատուելուց միառժամանակ յետոյ մահմեդական գիւղատէրը սիրահարուում է նոյն գիւղում ապրող մի գեղեցիկ հայ աղջկայ վրայ և խընդրում է հօրից նրա ձեռքը. աղջկայ ծնողները, գիւղի մեծամեծների ու քահանաների հետ խորհրդակցելուց յետոյ՝ առերես խոստանում են տալ, երբ նա վերադառնայ եայլաղ[1]։ Գիւղատէրը միամտուում է և մեկնում Գեարմասիր (Իրանի հարաւային շրջանը, որտեղ ձմրանը ձիւն չի լինում և իրենց հօտերի համար լաւ արօտատեղիներ կան)։

Գարնան կէսերին, երբ նա վերադառնում է Զհարմհալ, գիւղը միանգամայն դատարկուած է տեսնում։ Վաստիգանի հայերը կրօնական խտրութիւնը պատճառ բերելով, թոյլ չեն տալիս քրիստոնեայ աղջկան ամուսնանայ մահմեդականի հետ և մէկ գիշերուայ ընթացքում դաղտնի չուում են դէպի Հայաստան։

Կան մի շարք ուրիշ պատմութիւններ ևս, որ Զհարմրհալի հայերից գաղթել են Քարասկան-Լինջանի շրջանը, Սիլաքօռ եւ Փերիա գաւառները։

Վերջին դարում, 1914—18 թուականների պատերազմի, սովի, նեղութիւնների և հարստահարութիւնների հետևանքով՝ տասնեակ ընտանիքներ չուել են դէպի Հընդկաստան. սրանից աւելի ուշ՝ բաւական քանակութեամբ դէպի Խուզիստան, Քիրմանշահ և այլուր հաստատուեցին Իրանի Նաֆթային Ընկերութեան գործերում։ Իսկ 1946 թուականի Օգոստոս ամսին՝ Վերին-Քոնարք, Ներքին-Քոնարք, Մամուռան, Լիվասիան, Սինագան և Աղբուլաղ գիւղերը ամբողջովին վերադարձան Մայր Հայրենիք՝ Սովետական Հայաստան։

ԼԵԶՈՒՆ

Ինչքան տնտեսապէս քամուած և անմխիթար է Զհարմրհալի հայը, նոյնքան ֆիզիքապէս քաջառողջ է, կրթասէր, աշխատասէր ու չարքաշ և շնորհիւ իր աշխատասիրութեան, միշտ սիրելի է եղել գիւղատէրերի մօտ աւելի շատ, քան թէ ընիկ պարսիկները։ Նրանք, համեմատած

1) Ամառանոց։

միւս գաւառների ժողովրդին, օրինակ Փերիային, աւելի հաշտ ու խաղաղ են ապրել հարևան պարսիկների հետ. շատ քիչ դէպքեր ու դժգոհութիւններ են տեղի ունեցել։ Զհարմհալի հայը միշտ նախանձախնդիր է եղել դէպի իր կրօնն ու բարոյականը՝ միշտ բարձր պահելով իր հոգում անջինջ ու անաղարտ, դարերի անհուն վշտերի, տառապանքների ու տանջանքների մէջ իր հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնը և լեզուն։ Մօտ երեք ու կէս դար Պարսկաստանում ապրելուց յետոյ, նա չի աղաւաղել Արարատեան քաղցր բարբառը, եթէ չհաշուենք ֆարսերէ լեզուի փոքր ազդեցութիւնը։ Այսօր էլ նա խօսում է մայրենի լեզուն՝ մաքուր հայերէնով։ Սահուն խօսում է նոյնպէս ֆարսերէն և թուրքերէն լեզուները և լոռի բարբառը։

Զհարմհալի հայ ժողովուրդը խօսում է նաև մի գաղտնի լեզու, որպէսզի իր խօսակցութիւնը օտարները չը հասկանան. օրինակ Ծուռ լեզու՝ թուրք, թօրք։ Կեռպոչ՝ շուն։ Մէկ կոնդ՝ մէկ թուման դրամ։ Ծղի ծէր՝ ցորեն։ Յերդան ճանբա գնացած՝ Մէշէդ, Քեաբբլա կամ Մեքքե գնացած։ Մէ կուլուլ՝ մէկ ռիալ պարսկական դրամ։ Մէ ծոի՝ մէկ շահի։ Զորին կոտրում է՝ դարի։ Փեդաւոր՝ հանդապահ։ Մենձ եզ՝ գիւղապետ, խան։ Յերդանակ՝ ձի կամ մատակ։ Խուրդա տաւար՝ ոչխար, այծ, գառն, կամ ուլ։ Գովզանբուռ՝ մեղր։ Պաչելու տեղ՝ մզկիթ։ Լուն՝ լաւ, ընտիր։ Փնթի՝ հարուստ ն անմաքուր։ Զոր ճանկ՝ կծծի եայլն։

Զհարմհալի հայուհին ունի իր յատուկ արտասանութիւնը, որի մէջ ամենից շատ լսւում է «ր» տառը փոխուած «Յ»-ի օրինակ Վարդան—Վայթան։ Բուրդ—բոյթ։ Սարգիս—Սայքիս։ Վարդ—վայթ։ Զորացրած—չօյցրած։ Բանջար—քանջայ։ Որտեղ—ոյդեղ։

Զհարմհալի հայ գիւղերի բարբառը զանազանւում է իրարից, որոնց մէջ ամենից շատ լսւում է Սիրաք գիւղի ժողովրդից։ Նրանք բառի սկզբի վանկի վրայ շեշտ են դնում, աւելի երկարացնում են խօսքի առաջին բառը։

Այստեղ աւելացնենք տողերիս գրողի մէկ փոքրիկ ստանաւորը Զհարմհալի կանանց բարբառով։

ԽԱԹՈՒՆ ՄԱՄԸ

—Բարի լուս քեզ խնամի Խաթուն
Քա, բա, ոյ՞դի 1) ես էյթում 2),
Պառաւ կնիկ տքտքալէն
Քաղաւորին հաց ե՞ս տանում։
—Ես սովոր եմ, ջանիդ մեռնեմ,
Բոլ 3) եմ յայդը 4) գնացի.
Մտէս չինդնի թէ ոյչանք եմ
Իս եալէրում 5) վազվզի։
Ութսունը հինդ տարէկան եմ,
Աստծուն փառք դեռ վոդիս եմ,
Նաշուքքը 6) չեմ իմ աստծանից,
Դուս եմ էյթում 7), գալիս եմ։
Հալիվորն 8) յամիշա 9) կոսի.
Ինքը մենձ 10) է տաս տարով.
Էն էլ լաւ է, չէ նէղանում,
Բաղն 11) է բանի օրէրով։
Յամէն մայթու 12) պայտքն 13) է բալամ 14)
Գոյձի մէջ 15) լաւ աշխատի,
Քանի ջանում 16) ղաթ 17) ունի
Ցիսկի 18) դադար չնստի։
Լաւ է, ազիզ 19), մնաս բարի,
Յէքաւհաց 20) անց է կէցի 21),
Էյթամ 22), հասնեմ քաղաւորնէրուս.
Բշխիր 23), յէրդար 24) խօսէցի։

---

1) որտեղ, 2) գնում, 3) շատ, 4) արտը, 5) բլուրներում, 6) դժգոհ, 7) գնում, 8) ամուսինը, 9) միշտ, 10) մեծ, 11) այգին, 12) մարդու, 13) պարտքն է, 14) զաւակս, 15) գործի, 16) մարմնում, 17) այժ, 18) երբէք, 19) սիրելիս, 20 նախաճաշ 21) անցել է, 22) գնամ, 23) ներիր, 24) երկար։

Շուրջ երեսուն տարի սրանից առաջ, Իրանի կառավարութեան կողմից պարտադրուեց ֆարսերէնի ուսուցումը հայոց դպրոցներում. այդ ժամանակուանից սկսած գաւառի հայերը աւելի մաքուր կերպով կարողացան իրենց հարեւան պարսիկների հետ խօսել երկրի լեզուն։ Ներկայ երիտասարդութիւնը և գաւառի բոլոր դպրոցականները այժմ ֆարսերէնի տարրական դասընթացքը աւարտել ու աւարտում են գաւառի իրենց դպրոցներում, իսկ ունեւոր անձինք իրենց երեխաներին տարրականն աւարտելուց յետոյ. ուղարկում են քաղաք միջնակարգի և բարձրագոյն ուսման համար։ Այնպէս որ գաւառի հայ ժողովուրդը, հակառակ սկզբնական տարիներին, որ միայն 4% գրել-կարդալ գիտէին, հիմա բոլորը, երկսեռ, գրագէտներ են։ Վերջին կէս դարում գաւառը տուել է այնպիսի երիտասարդ այրեր, որոնք մի կարճ ժամանակում, երկրում, կամ արտասահմանում իրենց կրթութիւնը լրացրել են և անուն ու համբաւ վայելում։ Այժմ ունենք Զհարմհալցի հայ բժիշկներ, ատամնաբոյժներ, ճարտարապետներ և մրտաւորականներ։

ԶՀԱՐՄՀԱԼԻ ՀԱՅԸ ՇԻՆԱՐԱՐ Է

Զհարմհալի հայ ժողովուրդը շինարար է. այս բանը հաստատւում է նրանով, որ նրանք, իրենց նոր բնակավայրերում հաստատուելուց անմիջապէս յետոյ, լծուել են աշխատանքի, կառուցել են եկեղեցիներ, ջրաղացներ, ձիթհաններ, քաղաքիներ, և վերջին դարում՝ դպրոցներ։ Դպրոցական շէնքերը թէև շատ ուշ են շինուել, այսինքն 1905 թուականից, բայց դարձեալ գերազաս են համարւում իրենց հարեւան պարսիկ դպրոցներից, որովհետև պարսիկ գիւղերում, նոյնիսկ ամենամեծ գիւղում, որը մէկ հազար տնից աւելի ժողովուրդ ունի։ մինչ այժմ դպրոցական շէնք գոյութիւն չի ունեցել, հակառակ իրենց տընտեսական լաւ պայմանների։ Սակայն այս տարի, շնորհիւ Իրանի բարեկիրթ Ն. Կ. Մ. Շահնշահ Մոհամմադ Ռզա շահի ջանքերի, կազմուել է կրթական բանակ, որպէսզի բոլոր յետամնաց գիւղերումն էլ ունենան դպրոցներ և վերջ տրւի անգրագիտութեան։

Գիւղատէրերը միշտ գովասանքով են խօսել հայ գիւղացու հող մշակելու մասին, որովհետև նրանք նկատել են հայ գիւղացու մէջ եռանդ ու տոկունութիւն, նրանք ականատես են եղել նոյնպէս հայերի և պարսիկ ժողովրդի վարուցանքի և նրանց հունձքի տարբերութեանը. տեսել են որ նոյն տարածութիւն ունեցող հողից հայը կրկնակի աւել հասոյթ է ունենում։

Նախքան ներգաղթը, Զհարմհալ գաւառն ունեցել է 459 տուն բնակչութիւն, 2209 շունչ, ինն դպրոցական շէնք, 9 եկեղեցի, 9 քաղնիս, 11 ջրաղաց, այգիներ, ծառաստաններ և այլն, ի բացառեալ հայերի աւերակ հին հաստատութիւնները։

Փերիայից յետոյ, Զհարմհալը հայաշատ գաւառն է Իրանում, որի մէջ յիշուած հայ գիւղերը զուտ հայաբնակ են եղել։ Միայն 2 գիւղեր են եղել, որոնք պարսիկների հետ միասին են բնակւելիս եղել, դրանք են Գիշնիդան և Բալղլու։

ԳԱԻԱՌԻ ԱՆՈՒՆԸ

Զարմհալ, Զհարմհալ, կամ Զարմահալ, որ է ֆարսերէն Չարմահալ նշանակում է չորս տեղ, կամ չորս շրջան, որը իսկապէս բաժանուած է չորս մասի հետևեալ կարգով. —

Ա. Գեանդուման	Արևելեան մասում.
Բ. Քհար	Հիւսիսային.
Գ. Լար	Հարաւային
Դ. Միզդէ	Արևմտեան։

Այս չորս գաւառամասերը միասին կոչւում է Զհարմըհալ, որտեղ բնակւել են հայերը։ Գեանդուման գաւառամասում Նախքան Ներգաղթը (1946 թ. Օգոստոսի 24 և 25-ը) կային վեց հայաբնակ գիւղեր՝ Վերին-Քոնարք, Ներքին-Քոնարք, Մամուռան, Լիվասիան, Աղբուլաղ և Սինագան։ Քհարում կայ մի հայ գիւղ՝ Սիրաքը։ Լարում՝ Մամուքա և Հաջիաբադ, իսկ Միզդեհում՝ ոչ մի հայ գիւղ։

Այստեղ աւելացնենք պ. Լ. Գ. Մինասեանի Փերիա և Զհարմհալ գաւառների վերաբերեալ յօդուածաշարքի վերջին մասը, որը տպագրեց «Ալիք» օրաթերթի 1951 թուի Փետրուար 7-ի համարում։

«...Նախքան վիճակագրոյցը, երկու խօսք ևս Զհարմըհալի պատմականի և ներկայի մասին։

Շահ-Աբբասի մեծ դաղթականութեան ժամանակ Պարսկաստան բերուած հայերը, որոնք ըստ որոշ տեսակետերի, ներկայ վայրում հաստատուելուց առաջ, բնակւելիս են եղել նոյն գաւառի Գեանդուման, Զղախօռ և Շալամզարի գաւառամասերում, դրանց կից ու դէպի արևելք ընկած Բիզերտ և Քօրդ-Շամի գիւղերի շրջակայքում։

Հետագային, Աֆղանների արշաւանքի ժամանակ, Սպահանին մօտ եղող գիւղերից քաշւել են աւելի հեռու շրջաններ և հաստատւել ներկայ վայրում։ Սոյն կարծիքին հիմք են ծառայում տեղի տապանաքարերի թւականները, որոնց արձանագրութիւններն սկսւում են 1720 թուականից, այսինքն Աֆղանների գալու օրերից։ Նոյն ժամանակում վերջանում են նախկին տեղերում եղած արձանագրութիւնները։ Նախքան Ներգաղթը, Զհարմհալն ունէր 9 հայաբնակ գիւղ, որոնցից վեցը Լիվասիան, Սինագան, Մամուռան, Աղբուլաղ, Ներքին և Վերին-Քոնարք

1144 շունչ բնակչութեամբ, 1946 թուի Օգոստոս 24 և 25-ին Ներգաղթեցին Հայրենիք։ Ներկայիս մնում են երեք գիւղեր՝ Մամուքա, Հաջիաբադ և Սիրաք, որոնց վիճակագրոյցը բերում ենք ստորև։

ՎԻՃԱԿԱԳՐՈՅՑ ԶՀԱՐՄՀԱԼ ԳԱՒԱՌԻ 1949 Թ.

Գիւղի անուն	Տուն	Արական	Իգական	Ընդհ. շունչ
1. Մամուքա	85	180	200	380
2. Հաջիաբադ	53	121	126	247
3. Սիրաք	49	96	113	209
	187	397	439	836

...Մամուքա գիւղն իբր սեփականութիւն ունի միայն երկու ջրաղաց։ Հողը պատկանում է բախտիարի պարսիկ խաներին։ Հաջիաբադ և Սիրաք գիւղերի վարելահողերը նոյնպէս պատկանում են պարսիկ խաների։ Երեք գիւղերը միասին ունեն 187 տուն, որոնցից 39-ը բարեկեցիկ, 67-ը միջակ և 81-ը չքաւոր։ Գիւղացիք այդ թուին ունէին 1818 այծ և ոչխար, 135 եզ, 124 կով, 164 գրաստ, 9 ձի և 102 մեղուի փեթակ։

Զհարմհալի հայ գիւղացիները, հայկական միւս գաւառների համեմատութեամբ, շատ վաղ են սկսել դուրս գալ գիւղից։ Սկսած 1900-ական թուերից, Զհարմհալցիները իրենց տղաներին ուղարկում էին Հնդկաստան. իսկ երբ հիմնւում է Անգլո-Իրանեան Նաւթային Ընկերութիւնը, աշխատանքի համար գաւառից դուրս եկողների թիւն աւելի է մեծանում։ Այդ պատճառով այսօր շրջանից բացակայում է տեղի երիտասարդութիւնը և դժբախտութեան մատնում երկրագործ գիւղացու աշխատանքները։

Ներգաղթի և աշխատանքի համար գաւառից հեռանալու պատճառով, հայ բնակչութեան թիւը զգալի կերպով

նաազել է։ Ներկայիս գիւղացիները ձգտում են դէպի քաղաքները։ այսօր վստահաբար կարելի է ասել, որ գաւառում մնացող քնտանիքներից դժւար թէ որևէ մէկը դրսում գտնւող անդամ չունենայ։ Խուզիստանի հայերից շատերը չհարմհալցիներ են, որոնք այսօր մտահոգւած են իրենց ծննդավայրի բնակչութեան նւազման խնդրի համար և միջոցներ են խորհում գաւառը վճռական քայքայումից փրկելու։

Այսօր գաւառին տէր է կանգնել «Չհարմհալի Ուսումնասիրաց Միութիւն»ը, որը լայն չափով նպաստում է կրթական գործին, ժամանակին ուղարկում է կարող ուսուցիչներ և մտահոգւած է գաւառի պահպանումով։

Չհարմհալն ևս ունի իր պատմական հարուստ անցեալը, որին կանդրադառնանք մի այլ առիթով»։

Լ. Գ. Մինասեան

Ահա մի ուրիշ հատւած Փերիա գաւառի մտաւորականների գրւածքներից։ Լոյս է տեսել «Ալիք»-ի 1947 թ. Փետրւար 19-ի համարում։

«...Փերիան համեմատած Չհարմհալին մեծ գաւառ է. գիւղացիներից շատերը սեփականատէրեր են, Զուղայից որոշ հայեր բաւական հողեր ունեն. ինչպէս նաև դպրոցներն ու եկեղեցիները, բայց դպրոցական մարզում չի հասել հողազուրկ ու լոռ արբաք ունեցող Չհարմհալին։

Ինչպէս որ վերջերս մամուլով էլ արձանագրւեց «Ալիք» թիւ 290, Դեկտ. 29 1946 թ.), մի քանի տարի է, որ Նոր-Զուղայի Ազգային Մարմինները նպաստ չեն տալիս չհարմհալցիներին, բայց չնայած դրան, շնորհիւ չհարմհալցիների ուսումնատենչ ոգուն և դուրսի երիտասարդութեան ջանքերի, սոյն գաւառի Ուսումնասիրաց Միութիւնը ժամանակին գաւառ է ուղարկում կարող ուսուցիչներ և բաց անում բոլոր դպրոցները։ Պատիւ իրեն...»։

Փերիա, Նժդեհ

ՉՀԱՐՄՀԱԼԻ ԿԼԻՄԱՆ

Չհարմհալի, ինչպէս նաև ամբողջ Բախտիարի կլիման, առողջարար է և բարեխառն. ձմեռը ծածկւած է ձեան հաստ շերտով։ Եղել են տարիներ, երբ ձիւնը, շատութեան պատճառով, գարնանը ուշ է հալւել ու վերացել, գարնանային սառը ցրտերը տարւայ ցանքին ու բերքին մեծ վնաս է հասցրել, պտղատու ծառերի մեծ մասը չորացրել։

Ձմեռային եղանակին յաճախ է պատահել երթևեկութեան ժամանակ մարդ կենդանի ձեան մէջ են մնացել ու ցրտից սառել։ Պատահել է որ այս գիւղից միւսը շաբաթներով անցուդարձ չի եղել և հաղորդակցութիւնը խզւել։

Եղանակները ժամանակին փոփոխութեան են ենթարկւում. ամառն անձրևներ չկան, բայց շաբաթնակ փչում է զով քամին։ Բուսականութիւնն առատ է, մանաւանդ արևելեան և հարաւային մասերում։ Շնորհիւ այս կլիմայի Չհարմհալի ժողովուրդն առողջ է, որովհետև վայելում է քաղցրահամ և սառնորակ աղբիւրների ջրերը և շնչում անուշ օդը. «Զկար պակասութիւն, կամ օդոյ վատութիւն», ասում է Նոր-Զուղայի պատմագիրը։

ԼԵՌՆԵՐԸ

Չհարմհալի ամբողջ երկայնութեամբ, հիւսիս-արևելքից հարաւ-արևմուտք, բռնած է Բախտիարի լեռնաշղթան, որի մասերն են՝ Քեալլարը, Սովզուն, (կամ Կանաչ սար_Սարգ-քուհ), Խունկ և Դուզուլու, Զղախսոի սարը, Զրէհ և ուրիշներ։ Գաւառի արևելեան կողմում Մադար-

Դոխթաբը (մայր և աղջիկ), կենտրոնում Զարդի, Մընաբի և Ահենգաբի սարերը, իսկ Միզդէ և Քհար գաւառամասերի մէջտեղը Զոմբին, կամ Զհանբին, որ նշանակում է այս սարի բարձրութեան վրայից կարելի է տեսնել աշխարհը։ Նշանաւոր է իր հարիւրաւոր աղբիւրներով, մասնաւորապէս «Վաղթ ու Սաաթ» կոչւած, հարաւ-արեւելեան ստորոտում ընկած աղբիւրով, որը օրւայ մէջ մի քանի անգամ դադարում է բղխելուց՝ ապա կրկին սկսում, այնպէս որ երբեմն մի կաթիլ խմելու ջուր չի լինում աղբիւրի մէջ։ Վերոյիշեալ բոլոր լեռների վրայ, կամ ստորոտներում կան նմանապէս քաղցր կաթնահամ աղբիւրներ։ Բուսականութիւնն առատ է Զղախսոի և Քեալլար սարերի գագաթները, տեղ-տեղ ծածկւած են յաւերժական ձիւնով։ Կան նաև բազմաթիւ բարձրավանդակներ։

Զ Ր Ե Ր Ը

Զհարմհալում գոյութիւն ունեն միայն երեք գետակներ։ Ա)—Բոլդաջու գետ, որը սկիզբ է առնում Զղախսոի սարերի ստորոտից ու Շամբից և անցնելով Բոլդաջի, Սինագան, Աղբուլաղ, և Քաթակ գիւղերի մօտակայքով միանում է Քեալլար սարի ներքևի շամբուտներից գոյացած ջրերին և վերին ու ներքին Քոնարքների հողերը մասամբ ոռոգելով միանում է Խունկ սարի արևելեան կողմի Զահ-չըլդեազ գիւղի աղբիւրներից գոյացած և շամբուտների միջով հոսում և միանում սոյն գետին Բժկերտ գիւղի մօտ թէքւելով դէպ հարաւ՝ Բախտիարի լեռների միջից անցնում և թափւում Պարսից Ծոցը։ Բ)—Խարաջու գետ, սկիզբ է առնում Շահր-Քօրդ գիւղաքաղաքի մօտիկ Լաղդամ աղբիւրներից և անցնում Ահմադաբադ, Հովշիգան, Թաղանակ, Սիրաք, Շամսաբադ, Խարաջի, Թիշնիզ և Բալդու գիւղերի մօտով, որից օգտւում է նոյն գիւղերի հողագործը. սա էլ անցնելով Բախտիարի լեռներից՝ թափւում է Պարսից Ծոցը։ Գ)—Շալամզարու գետ.— Սկիզբ է առնում հէնց Շալամզար գիւղի մօտ գտնւող «Գոլ»-ից, անցնում է Դաստանա և Բալդու գիւղերի մօտով ոռոգելով նոյն գիւղերի հողերը, ապա միանալով Դէհօրդի գետին հոսում է դէպի Պարսից Ծոցը։ Գոյութիւն ունի նաև Դիզզաքու գետը, սակայն շատ աննշան է, միայն գարնանային եղանակներին է հոսում և օգտակար դեր չունի։

Ինչպէս ասացինք, սարերի վրայ կան հարիւրաւոր աղբիւրներ, իսկ դաշտերում բաւական թւով Ղանաթներ, կամ քեահրիզներ (ջրմուղներ), որոնց ջրերից գիւղացիները մասամբ օգտւում են։ Զհարմհալի գիւղերի առջև, կամ կենտրոնում կան աղբիւրներ գիւղացիների տնային պիտոյքների և գիւղերի շինարարական գործերի կարիքների համար։ Անուշահամ ձկներ կան գետերի և մի շարք աղբիւրների ջրերում։ Հանքային ջրեր չկան Զըհարմհալում։

Հ Ո Ղ Ը

Զհարմհալի հողը աւազոտ և մասամբ սեահող լենելով բարեբեր է, չնայած որ հողագործը, կամ հողատէրը յաճախ գանգատւել են հողի «անպէտքութեան» մասին, սակայն փաստերն ապացուցել են, որ երբ մի կտոր հող հարկ եղած ձևով է մշակւել, ստացւել է մէկին 35—40 արդիւնք։ Գաւառի հողագործը մեծ մասամբ աշխատում է ջրարբի հողերի վայ. շատ չ չին «դէմ» է մշակում (անջրդի) մինչդեռ «դէմ»ի մշակման համար կան ընդարձակ հողամասեր, որոնք բացառութեամբ երաշտ տարիների, առատ արդիւնք են տւել ու տալիս են։ Ցանում են աշնանացան և գարնանացան։ Աշխատանքը տարւում է հին նահապետական ձևով։

Մինչ այժմ գաւառի հողերի, եթէ չասենք ամբողջը, գոնէ երեք քառորդից աւելին պատկանում էր Բախտիարի խաներին, կամ արբաբներին, որոնք սկսած 300-ական թբ-ականներից, հետզհետէ գաւթել տիրացել էին։ Փաստեր շատ կան, որոնք հաստատում են՝ գաւառի հողը բաժանուած է եղել հողագործներին և կառավարութիւնը ստանալիս է եղել միմիայն իր հարկը։ Պատմութիւնը ևս հաստատում է այս բանը. երբ գաւառեցի հայերը հաստատուեցին Զհարմհալում, երկրի թագաւորը մի յատուկ հրովարտակով հայ գիւղացիներին ընդարձակ հողեր է շնորհել, որոնք երկար տարիներ շարունակ մշակել ու ապրել են, սակայն հարկերի բարդացման պատճառով հայ գիւղացին պարտաւորուել է լքել իր սեփական կալուածը և արբաբի հողը, վճարելով նրան ամբողջ բերքի մէկ երրորդը և որոշ գիւղերում մէկ չորրորդը. դրամի բացարձակ չգոյութեան պատճառով, խեղճ գիւղացին ստիպուած է եղել այդպէս անելու։

Նոր-Զուղայի պատմութեան Բ. հատորի 301 էջում յիշատակուած է թէ իւրաքանչիր մէկ խալւար ցորենի համար (50 լիտր, որ է մօտ 300 կիլոգրամ) հողագործը վճարելիս է եղել տէրութեան ընդամենը 18 դրան հարկ, ապա աւելացնում է «...Այլ ինչ ծախուց գաւառին բարդեալ ի վերայ բռվանդակեցաւ գինն իւրաքանչիւր խալւարին 23 դրան»։

Այստեղ աւելացնենք մի աւանդական պատմութիւն։ Շուրջ 150 տարի առաջ Ահմադաբադ գիւղի տարեկան հարկը հաւաքելու ժամանակ հողագործներից շատերը չեն կարողացել դրամ գտնել վճարելու. «մամուրները»[1] քարկանում՝ ծեծում ու նեղացնում են գիւղացիներին, տանուտիրոջ և մի քանի հոգի գիւղի մեծերին բոբիկ ոտքերով կանգնեցնում են սառոյցի վրայ երկար ժամանակ. սրա-

1) Գիւղատիրոջ ներկայացուցիչը, հարկահաւաք։

նից ևս բան չի գոյանում. թէև հողագործների տներում կար բաւական հացահատիկ, բայց «տէրութիւնը փող էր ուզում»։

Մի անձնաւորութիւն 20 դրան տալիք հարկի համար շալակում է մի ջեջիմ (փալաս) ամբողջ մէկ շաբաթ շրջում է զանազան գիւղեր, չի կարողանում վաճառի իր ջէջիմը՝ իր պարտքը վճարելու։ Ճարահատ վերադառնում է իր բնակավայր գիւղը, խիստ պատժի է ենթարկուում մինչև իր տալիքի վճարումը։

Հարկերի ծանրութեան և դրամի բացարձակ չգոյութեան պատճառով. Զհարմհալի հայ համայնքի կողմից ներքև յիշուած պարոնները, որպէս պատգամաւորներ, յիսուն պարսիկների հետ միասին, գնում են Թեհրան Նասրեդդին թագաւորի մօտ գիջում խնդրելու. նա էլ ամբողջ Զհարմհալի համար շնորհում է 3000 թուման։

Հետևեալ տեղեկութիւնը քաղել եմ պ. պ. Մինաս և Սուլի Յովհաննիսեանների մօտ գտնուող «Մեկնութիւն Սաղմոսաց» գրքից, Կալկաթայում։

«1879. պ. Աւետիկս և քալանթար Բէգլարն և Ադախան Մկրտումի գնացինք Թեհրան իշխանաւոր Հօսենղուլի խանի հրամանով 50 թուրքի հետ, մալիաթի կողմանէ, երեք հազար թուման թաղֆիվ[1] բերինք. Նասրադին Շահը բաշխեց»։

Ահա այս ու նման պատճառներով հայ գիւղացին պարտաւոր էր իր սեփական հողը ձեռքից տալ և դառնալ ռայեաթ[2]։

Ապագայում, երբ Իրանում, մասնաւորապէս գիւղերում, աւելանում է դրամի շրջանառութիւնը. Զհարմհալի հայերն ևս աշխատում են իրենց կորցրած հողերը վերստանալ և դիմում են միջոցների, որպէս փաստ մէջ բերենք Կալկաթայում հրատարակուած «Ազգասէր» լրագրի 1848 թ. Մարտ 8-ի համարում, թիւ 134, հետևեալ

1) Զեղջ։ 2) Գիւղատիրոջը ծառայող հողագործ։

բութիւնը. «Պարոն Աստուածատուր ի 12 ամսոյս ժամանեց ատ ունելով զարքունի հրովարտակ տիրելոյ զեղջն Լիվասիանա, զոր իբրև ժառանգութիւն իւր հաստատեալ է ի դրանն արքունի, նաև վերակացութեան բարձրք կառավարութեան Զուղայու»։

17 Դիզեմբր 1847 թ.»

Ներկայումս Շահնշահի հրամանով հողերը բաժանւում է բոլոր գիւղացիներին, սրանով գիւղացիութիւնն ազատւում է արքաներից։

ՄՇԱԿՈՒՄ ԵՒ ՀԱՐԿ

Զհարմհալի հայ գիւղացին հողի մշակումը սովորել է իր պապերից ու հէնց այդպէս էլ շարունակել սերունդից սերունդ։ Գիտէ միայն հողը հերկել, սերմ ցանել, բրել ու հնձել. արդիւնքն էլ «ինչ որ Աստուած կը տայ»։ Ամբողջ երեք ու կէս դար գաւառում գիւղատնտես գոյութիւն չի ունեցել. ինքը հողագործն էլ չի ճանաչել հողի այս կամ այն տեսակը, մի խօսքով հարկ եղածը մշակելու, պարարտացնելու ճիշտ աշխատանքը չի կատարել և ընտիր երկրագործական գործիքներ չի ունեցել. հէնց այս պատճառով էլ հողագործը մշտապէս տնտեսական անմխիթար վիճակում է ապրել։

Դաշտամշակութեան գործում ընդհանրապէս տղամարդն է գործողը, կանայք միայն կալի մէջ մասամբ օգնում են տղամարդուն։ Ծերունիները՝ հերկում, վարում, ցանում են և կալ կալսում, երիտասարդները՝ մարգ (ածու) կապում, ջրում, հնձում, խոտ քաղում, այգի բրում, առու հանում և կարեոր ու ծանր գործերն են կատարում, իսկ անչափահասները՝ խուրձ կրում էշերով, հող կրում, կամ արտերի համար քութ տանում (բակերում հաւաքւած աղբը, պարարտանիթ)։

Դաշտամշակութեան համար աշխատեցնում են միայն եզ և էշ, առաջինը՝ վարելու և կալսելու իսկ վերջինը՝ բեռներ կրելու։

Ծառերի տունկերի և արմտիքների մշակման գործում նոյնպէս անբաւարար է մնացել։

Որպէս հարկ վճարում է գիւղատիրոջ.—

Հողից ստացած արդիւնքի մէկ երրորդը, որոշ գիւղերում՝ մէկ չորրորդը։

Այդիներից՝ իւրաքանչիւր ջրիբին 100 ռիալ (ջրիբը 1000 մետր քառակուսի տարածութիւն է)։

Ծառերից՝ մէկ երրորդը։

Իւրաքանչիւր մի կովի համար՝ տարեկան 10 ռիալ։

Ոչխարի կամ այծի համար 5 ռիալ։

Ձի կամ մատակի » 10 »

Ջրաղացի արդիւնքի մէկ վեցերորդ մասը։

Ոչ հողագործներից մարդագլուխ 5 ռիալ։

Եզը և էշը, որպէս աշխատող կենդանիներ հարկի ենթակայ չեն։

Ահա թէ Զհարմհալի հողագործը ինչ պայմաններով է մշակում հողը և հարկ վճարում։ Զմոռանանք և այն, որ տարւայ ընթացքում հարիւրաւոր մարդիկ ձրիաբար աշխատում են խանի համար այգի բրում, հունձ անում և զանազան մանր գործեր կատարում. նման գործերը յատուկ են Կիրակի օրերի համար, որովհետև գիւղատէրը դիտէ այդ օրը հայի հանգստի օրն է։ Բացի վերոյիշեալ «օրինաւոր հարկերը» երբեմն էլ գիւղատէրը հողագործից ձրիաբար տանում է ոչխար, հաւ, հաւկիթ և ճոխացնում իր սեղանը։

Հողագործի յարդից ևս գիւղատէրը տանում է տարեկան իւրաքանչիւր հաբրայից 50 լիտր։ Գիւղը բաժանւած է 72 հաբրայի, որ է վեց դօնգ։ Վերջին տարիներում Իրանի կառավարութեան ձեռք առած միջոցների

շնորհիւ, անտեղի հարկերը չէր վճարում։

Այստեղ աւելացնենք Նոր-Զուղայի Սուրբ Ամենափրկչեան Վանքի վճարած տարեկան տուրքը Զհարմհալի գիւղերից քաղուած «Պատմութիւն Նոր-Զուղայի» Բ. հատոր, էջ 144։

«Գաւառն Զարմահալայ երբեմն յաւել երբեմն պակաս տա առ ամն տասնեհինգ բեռ ալիւր, երեք լիտր իւղ, 40 լիտր պանիր, 50 լիտր չորթան և 4 ոչխար»։

2) Բեռն աւանակի է 15 լիտր։

Նէրքք գաւառաց ըստ որում առաքին բարձեալ ի վերա աւանակաց, վասնորոյ իւրաքանչիւր բեռն նէիրանաց է 15 լիտր»։

Մէկ լիտրը հաւասար է 6 կիլոգրամի։

ՀԱՅԱՀԱՏԻԿ ԵՒ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Սերմերի մէջ ամենաառաջին տեղն է բռնում ցորենը։ արտերի երեք քառորդը ցանւում է ցորեն, յետոյ՝ գարի։ սիսեռ, ոսպ, յաճար, կորնդեալ (առւոյտ, կամ եօնջա), քիսին, հոռալ, կտաւատ, շաւդար, կորեկ, նուշի և այլն։ Աֆիոն ցանւում էր միայն Լիվասիան գիւղում, բրինձ և բամբակ չկայ Զհարմհալի հայ գիւղերում։

Բանջարանոցներում ցանում են գետնախնձոր, սեխ, ձմերուկ, վարունգ, լոբի, դդում և արևածաղիկ։

Վայրի բոյսեր առատ են գաւառի դաշտերում ու սարերում գարնան ու ամրան եղանակներին. սար ու ձոր ծածկւում է հազարերանգ ծաղիկներով ու բոյսերով, որից գիւղացիներն առատ պաշար են հաւաքում անասուններին կերակրելու ձմեռային եղանակին։ «Զառահները»[1] այս բոյսերից դեղեր են պատրաստում ու բժշկութիւն անում։

Բոյսերի անուշահամ տեսակներից եփած, կամ հում

1) Վիրաբոյժ։

դորձ են ածում բանջարեղէնի փոխարէն. սրանք են՝ սինձ, քանգառ, խոզնատոլ, ատոլ, բանջար, պռաս, քարդու, մուսիլ, քալաւուզ և ուրիշներ։ Անտառներ չկան Զհարմհալում։ Սինձ բոյսի կաթից ծամոն են պատրաստում, որին տեղացիները ասում են ձութ. ծամում են երիտասարդ տղաներն ու աղջիկները։

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ԵՒ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ

Զհարմհալի գաւառի հայ գիւղացիների ընտանի կենդանիների թիւը անհամեմատ աւելի պակաս է քան հարևան պարսիկներինը, որովհետև վերջինները հնարաւորութիւն ունեն իրենց հօտերն աշնանը քշելու տաք կողմեր և գարնանը վերադառնալ. հայերին պակասում է այդ, բացարձակ երկիւղից, այս իսկ պատճառով էլ ընտրված է իր հօտը, կամ նախիրը միշտ գիւղի մօտերում պահելու, կամ մօտակայ սարերում, իսկ ձմրանը, մօտ 5 ամիս՝ գոմում։ Ուստի հայ գիւղացիների մօտ պահւում է սակաւաթիւ կենդանիներ, որոնք են՝ ոչխար, կով, էշ, եզ, այծ, մատակ և ջորի։ Ոչխարները զատորոշելու համար՝ ամեն ընտանիք ունէր իր դաղման՝ դաղ կամ դրոշմ ականջին, քթին կամ ծնօտին։ Կայ նաև ականջը դանակով ճեղքել, կամ կտրելը։

Տնային կենդանիներին չհարմհալցի հայը այսպէս է կանչում. — Շանը՝ քուչի-քուչի, հաւին՝ ջու-ջու-ջու, ոչխարին և գառին՝ դուժու-դուժու, այծին և ուլին՝ թիթիթիթի, կովին և եզին՝ կոկ-կոկ, էշին և ձիուն՝ բիաբիահ, քուռակին՝ դռռ-դռռ, հորթին՝ գուլու-գուլու։

Քշում են շանը՝ չըխ, կորի, չքսըէ, ռադ էլի. Հաւին՝ քշա-քշա, ոչխարին՝ յիխ, դուժու, այծին՝ թիթիթիթի, կովին և եզին՝ հօ, էշին և քուռիկին՝ հը-քուռի։

Կենդանիներին հայհոյում են. — Շանը՝ չըխ շան շուն, տէրդ մեռնի, փդարսագի անտէր, դուռ էլի. հաւին՝ քշա,

ճիւդ կտրի, գլուխդ ուտես. ոչխարին, այծին, գառին, կովին և եզին՝ հարամ ըլնես, անդանակ ըլնես, դանգի դամ էրթաս. էշին, քուռակին, և ձիուն՝ սատկես դու, ողներդ վիրև դա, անտէր մնաս, սոյդ կտրի։

Թռչունները նմանապէս շատ սակաւ են. իւրաքանչիւր տուն միջին հաշուով պահում է 4—5 հաւ, որոշ գիւղերում կան փոքրաթիւ աղաւնիներ միայն։

ԶԲԱՂՄՈՒՆՔ ԵՒ ԱՐՀԵՍՏ

Զհարմհալի հայ գիւղացիների գլխաւոր զբաղմունքը հողագործութիւնն է, մասամբ և անասնապահութիւնը։ Կան սակաւաթիւ առևտրականներ՝ միմիայն գիւղացիների կարիքների համար, յետոյ գալիս են բանւորներ, դարբին, սափրիչ և հիւսն։ Գաւառից դուրս կան չհարմհալցի բժիշկներ, ատամնաբոյժներ, մեքանիկներ, դրագիրներ և կառավարական հիմնարկներում աշխատողներ։

Կանանց գլխաւոր արհեստն է՝ գորգագործութիւնը. գործում են ընտիր գորգեր, ջեջիմ, կապերտ, ջրաալ (մեծ տոպրակ), խօռ և ուրիշ պիտոյքներ. ամբողջ թելերը մանում են իրենք՝ կանայք, իրենց ձեռքի գործիքներով, որոնք են՝ քարման, իլիկ, ճախրակ և ոլորքրիկ։ Կան ընտանիքներ, որոնք տարեայ ընթացքում գործում են 4—5 հատ ընտիր գորգ։ Պարսկաստանի գորգերի մէջ ամենաառաջին տեղն է բռնում հայերի գործածը, որին ասում են «Արմանի բաֆ»։ Տանտիկինը զբաղւում է նաև տնային աշխատանքներով, այն է՝ բուրդ մանել, հաց թխել, կար ու ձև, ոչխար ու կով կթել, իսկ կալի ժամանակ ցորեն և այլ հացահատիկներ մաքրել և այլն։

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ

Բանւորներ վարձում են գարնան սկզբներին։ Հաւաքւում են գիւղի ծերերը, գալիս քեանթարը, կամ քեադխուդան, կանչում են այս կամ այն բանւորին և որոշում նրա տարեկան ստանալիք վարձը կալի ժամանակ։

Պաշտւանը՝ (հանդապահ) ստանում է իւրաքանչիւր հաբբա մլքից մէկ լիտր ցորեն և մէկ լիտր գարի. հովիւը՝ իւրաքանչիւր ոչխարի համար 3 չորրորդ լիտր ցորեն և 3 չորրորդ լիտր գարի. եզնարածը՝ իւրաքանչիւր եզի համար 2 լիտր ցորեն, 2 լիտր գարի, բաղնիսպանը՝ մարդագլուխ մէկ լիտր ցորեն և մէկ լիտր գարի, իսկ կինը՝ տիկիններին լողացնելու վարձ, իւրաքանչիւրից ամեն անգամ երկու տանի[1] հաց, օրեայ բանւորը, գարնան և աշնան եղանակներին, երբ գործը սակաւ է, ստանում է՝ մէկ լիտր ցորեն, իսկ ամրանը՝ երկու։ Այդեպանի և բոստանչու հետ մասնաւոր պայման է փակւում, այդու տարածութեան, կամ մլքի համեմատ։ Ցիշեալ բոլոր բանւորներին տրւում է յանձնարարական գիւղի քեալանթարի և ծերերի կողմից, որը կոչւում է «Սարխաթ». և ի զօրու է մինչև մէկ տարի, այսինքն յաջորդ գարնան, սակայն լինում են նաև բեկանումներ։ Երկաթագործի վարձը գիւղատիրոջ հաշին է։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Ընդհանուր առմամբ Զհարմհալի հայ գիւղացիների վիճակը ողբերգական է, նա չունի բարեկեցիկ կեանք, չարքաշ է, մշտական հարստահարութեան, կողոպուտի մորեխի հասցրած փնասների, անասունների ժանտախտով մահանալու և հողից լաւ արդիւնք չստանալու հետևանքով միշտ աղքատ է ապրել։ Այստեղ մի օրինակ տանք Զհարմքհալահայ հարստ ընտանիքի սեփականութեան մասին և

1) Տնում թխած հաց։

մէկ էլ աղքատի։ Զհարմհալահայ հարուստն ունի 50—60 գլուխ ոչխար, 1—2 ձի, 2 զոյգ եզ, 3—4 կով, 5—6 էշ, 8—10 հաւ, 2—3 ջրիք այգի, 2—3 հարբա հողագործութիւն, 3—400 ծառ, 6—7 դորգ, 10—12 լիտր պղնձեղէն, տարեկան 250—300 լիտր ցորենի շահ (տոկոս), 200—250 թուման դրամի տոկոս, հողագործութեան գործիքներ և չնչին զարդեղէն։ Իսկ աղքատը մի երկու կտոր փալաս, կամ թաղիք և մի քանի մերկ երեխաներ, որոնց պահում է ամբող տարին կիսաքաղց դրութեան մէջ։

ՀԱՐՍԱՀԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՈՂՈՊՈՒՏ

Հարստահարութիւնից և կողոպուտից Զհարմհալի գիւղացին անմասն չի մնացել. տարի չի անցել, որ այս կամ այն գիւղի հօտը կամ նախիրը աւազակները քշած տարած չլինեն. այս կամ այն գիւղի պարիսպը գիշերով ծակած ու գողացած չլինեն ոչխար կամ ուրիշ անասուն, ամառ չի անցել, որ կալերից ու այգիներից շրջակայքի լօռերը և ուրիշ իլիաթներ[1] խլած տարած չլինեն հայ գիւղացու քրտնաթոր աշխատանքը, երբեմն էլ նման դէպքերում մարդկային կորուստներ պատճառել։

Անպակաս է եղել նոյնպէս արբաբների բեգարը[2]. ինչ բանի կարիք որ ունեցել է գիւղատէրը՝ պահանջել է գիւղացիներից, զանազան մարդիկ խանի կամ հուքումաթի անունը շահագործելով, կեղեքել են գիւղացիներին։ Տես հարկերը էջ.—

Յիշատակում եմ միայն Մուշիդան գիւղի գիւղատիրոջ վերաբերմունքը հանդէպ նոյն գիւղի հայ բնակիչներին։ Մօտ 50 տարի առաջ յիշեալ գիւղի հայ բանիչները այլևս չեն կարողանում տանել խանի անիրաւութիւններն ու անտեղի տանջանքները և վճռում են չեթ։

Լուրը հասնում է խանին, նա մարդ է ուղարկում և բռնագրաւում գիւղացիների բոլոր ունեցուածքը սակաւ-

1) Յեղեր։ 2) Զրի աշխատեցնել։

թիւ ընտանիքներ կարողանում են գիշերով ճողոպրել տանելով իրենց հետ ունեցածի մի չնչին մասը։

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՒ ՆԵՐԱԾՈՒՄ

Զհարմհալի հայերը արտահանում և վաճառում են այն, ինչ որ իրենց տարեկան բերքից կամ այգիներից, տաւարից և ոչխարից գոյանում է. օրինակ՝ տարուայ ընթացքում նրանք կարողանում են վաճառել մի քանի հատ ոչխար ու դառ, դորգ, իւղ, պանիր, ալիւր, ցորեն, գարի և այլ հացահատիկներ։

Ներմուծում են թէյ, շաքար, բրինձ, կտորեղէն, նաւթ (քարիւղ), կօշիկ, գլխարկ, ծխախոտ և ուրիշ մանրը-մունր բաներ։

Արտահանում և ներմուծումը կատարւում է խանութպանների ձեռքով, որոնք ներմուծած ապրանքը փոխանակում են գիւղացիների ապրանքի հետ, ապա հաւաքածը տանում քաղաք և վաճառում։

ՇԷՆՔԵՐ ԵՒ ՎԻՃԱԿԸ

Հակառակ այն բանին, որ հողը ձրի է եղել և ով ինչքան տարածութիւն ուզէր կարող էր ազատօրէն գործածէր, գիւղացիներն իրենց շէնքերը շինել են շատ նեղլիկ, ցածր, կողք-կողքի, ծուռ ու մուռ. փողոցներն անճարակ, ոլորապտոյտ և խորդ ու բորդ։ Երկյարկանի տները թիւը շատ է Զհարմհալում, մի քանի գիւղեր խոնաւութեան պատճառով, մի մասն էլ որպէս սովորութիւն, մի խօսքով տների կանոնաւորութիւն և միաձևութիւն չկայ ամբողջ գաւառում։ Կտուրները կից են իրարու, այնպէս որ շատ տեղեր կարելի է շրջել ամբողջ գիւղի կտուրները առանց իջնելու և բարձրանալու։

Տները շինուած են հողից (աղիւսով և ցեխով) ծեփ-

ւած յարդի խառն ցեխով. հին շէնքերն աւելի ցածլիկ ու պատերը հաստ են քան նորերը, պատերի հաստութիւնը միջին հաշուով մէկ մետր է, իսկ բարձրութիւնը 3—4 մետր իւրաքանչիւր յարկը։ Սովորաբար ստորին յարկը ծածկւած է գմբեթով և երկրորդը՝ փայտով։ Գերանների վրայ ձողեր են շարում, ձողերի վրայ եղէգ (ղամիշ) եղեգի վրայ փռում են ձէնձոն, ապա ցեխով ծեփում։

Տները կարելի է հաշուել 2—3 սենեակներից շինւած,— թոնրատուն, միջիտուն և օթաղ (հիւրասենեակ), պատուհաններից զուրկ են, մանաւանդ թոնրատունն ու մառանը, բայց երդիկներ ունեն, որպէս օդանցք և ծուխը դուրս գնալու համար։

Տների ներսի կողմը զանազան ձևերով է, բայց ամենասովորական ձևն այն է, որ քառակուսի են և պատերի մէջ շուրջանակի քաթա (փեղակաձև) է թողւած՝ ցորեն դարի և ուրիշ հացահատիկներ տեղաւորելու։

Տան մէջտեղումն է թոնիրը, որի վրայ կերակուր են եփում, թէյ պատրաստում, հաց թխում և ձմրանը քուրսի դնում վրան, հաւաքւում շուրջը, ոտքերը քուրսու տակ դնում՝ տաքանալու համար։ Տան մի անկիւնում դարսում են ամանեղէնները, միւսում՝ «տեղերի չարչուն», որի վրա դարսում են տեղաշորեր=անկողիններ։ Տների մեծ մասը սրահ չունեն։

Ամողջ Զհարմհալի հայ գիւղերում կան հետևեալ ադիւսաշէն շէնքերը.—Մամուռան գիւղի պարիսպը, Լիվասիան գիւղի եկեղեցին և բոլոր գիւղերի բաղնիսները։

Գոմերը մեծ մասամբ տների ստորին յարկն է, ուր պահում են ոչխար և միւս անասունները. գոմերի մէջ կան ջրհորեր 8—40 մետր խորութեամբ և կողքին մի փոքրիկ աւազան, անասունների ջուր տալու համար։

Մարագը կազմում է շէնքի մի մասը, որտեղ յարդ, սովդա (չոր խոտ) են պահում անասունների ձմեռւայ

պաշարի համար։

Տներից քչերը առանձին բակ ունեն մի մասն էլ հասարակ ցեխից կիսապարիսպ ունեն, ոչխար կամ տաւարը հաւաքած պահելու։ Ընդհանրապէս բակերը կարելի է բաց հաշուել։ Դարպասները հասարակ տախտակից դռներ են, կամ «չարչուբ» և ունեն փակ կամ փական։

ՏՆԱՅԻՆ ԻՐԵՐ

Ամենաշատ գործածականը տնային իրերի մէջ պղինձեղէնն է չհարմհալցի հայ գիւղացու մօտ. բոլորն էլ գրեթէ կրում են պարսկերէն անուն, որոնք են՝ մաջիմա (ափսէ), լանդառի, լազան, ղազան (կաթսա), տապակ, քեթլի (թէյնիկ), դովրի (պնակ), չամչիկ կամ մաղալա (շերեփ), քաֆգիր (փրփրաքաղ), փիալա (գաւաթ), ջամ (գաւաթ), բադիա (մեծ գաւաթ), օվգերդան (մեծ շերեփ)։

Պղնձեղէնից յետոյ փուածքն է՝ խալի, (գորգ), կարպետ, քաչա, կամ նամադ (թաղիք), դոշակ (ներքնակ), լէհէ (վերմակ), մաշտա, ջնջիմ և քաշած կարպետ։ Յետոյ գալիս են միւս իրերը՝ խախալ, շադրաբ (մաղեր), մանղալ (կրակարան), մաղաշ (ունելի), սալակ (զամբիւղ), լովդա (քթոց), կարաս, կճուճ, տաշտ, կուժ, ջրի տիկ, (մորթուց է պատրաստւած), քուրսի, չարչու և այլն։

Հաց թխելու սարք.— սեղան տախտակ, վարդանա, բաթաթ, փոշաման, մեզար (սփռոց), սմավար (ինքնաեռ), փոչ (թէյնիկ), թասնալբաքի (թէյի բաժակ և պնակ), փայտէ և պղնձէ դդալներ, փիհսուզ[1] (ձէթի ճրագ), կաւէ ճրագ, ճրագկալ (կաւից է շինւած), լամպա, սանդուղա (սնդուկ), դուֆլ (կողպէք), քշերք (կշիռ), քշերքի քարեր, լիտր, կէս լիտր. չարէք՝ կէս չարէք, թուխտ և դահանար, մսխալաքշերք (փոքրիկ պղնձէ, մանր բաներ

1) Ճարպավառ ճրագ։

կշռելու համար), մսխալաքարեր, դանակ սիխ (շամփուր), մախաթ, սղոց, ուրագ, զանդշկեան (շաքար կոտրողիկ), սանդ, ծեծիկ, գուշտ քու (միս ծեծողիկ), հողհանիկ (կեռ բահաձև, որով թոնրից մոխիր են հանում), խեճերկաթ (խաչերկաթ), ակիշ և այլն։

ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հողագործութեան համար Զհարմհալում գործ են ածում հետևեալ գործիքները՝—վեցկի (արօր), քարդվար (ածուներ կապելու գործիք), բահ, դազմա (բրիչ), լուծ, խոփ, փոկ (կաշուց ոլորած, որ արօրի ծայրը միացնում է լծին) և գործէոր։

Հունձի ժամանակ գործ են ածում՝ մանգաղ, դաստխալա (գերանդաձև), բանա (թելից հիւսած ցանցաձև 3 փայտերով խուրձեր կրելու համար) և չեան։

Կալի մէջ գործ են ածում՝ չամ (կալսելու գործիք, որը քաշում են եզները), չամքաշ, շղթայից կամ փայտից, մաղ, շաղրար, խօռ կամ թաչա (թաղիքից հիւռած քսակներ), թօռ կամ ռօհ (ցանցաձև յարդ կրելու համար)։ Հուրսելի, դօղնդա (երկժանի), սեղնդա (եռաժանի), բերանակալ (օղակաձև փայտ, կապում են եզի բերանը, որ շատ չուտի), գովռան (ձողիկ եզներ քշելու)։

Տնային գործիքներն են՝ ջահրա (ճախարակ), քարման, իլիկ, քրքիտ (ատամնաւոր՝ գորգագործութեան համար), քարգահ ոլորքրիկ, մանլար (գորգագործութեան ձող, սիւն և այլն։

ԿՇԻՌԵԻ ՉԱՓ

Պարսկաստանում ամեն կողմ և ամեն գաւառ ծանօթ է և գործ է ածում «ման»ը, կամ բաթմանը, որին հայերն ասում են լիտր։ Մանը՝ 1280 մսխալի, կամ 6 կիլոգրամի. կոտորակն է հետևեալ ձևը. Ա.—մէկ լիտր, 11-կէս լիտր,—1,4 լիտր, կամ մէկ չարէք՝ 1,8 լիտր կամ կէս չարէք, 1,16 լիտր կամ մէկ թուխտ, —1,32 լիտր կամ դահնար,—1,64 լիտր կամ փեհնար։ ապա հասնում է մսխալի հաշիւը. մէկ մսխալը պարսկական մէկ ռիալ արծաթ դրամի կշիռն էր, որը հաւասար էր 3 գրամի, դահնարը՝ 4 մսխալի։

Զհարմհալցիք լիտրի հաշիւը գրում են Այբ ու Բենի տառերի հաշուով, այսպէս Ա. հաւասար է մէկ լիտր, Բ.՝ երկու լիտր, Գ.՝ երեք լիտր և այլն։

Դրամական հաշիւները գրում են թուանշաններով 1, 2, 3, 4։ Կա նաև Զափան (դանթար) բեռներ կամ հակեր կշռելու համար և մսխալաքշեռք՝ մանր բաներ կշռելու համար։

Ամեն տուն կշեռք չունի, բայց ունի իր չափաբանները. օրինակ տանտիկինը գիտէ իր պղնձեայ ամանների որ մէկը ինչքան ցորեն, գարի կամ այլ հացահատիկ է տեղաւորում, դրանով էլ չափում տալիս է իր յաճախորդին։

«Զար» կամ «Գեազ» երկարութեան և կտորեղէնի չափն է. նոյնպէս ընդհանրացած է Զհարմհալում, ինչպէս նաև ամողջ Պարսկաստանում, որը հաւասար է մէկ մետր և ութ սանտիմետրի։ Չափելու համար գործ են ածում կիսագեազ կամ «Նիմզար», պատրաստում են փայտի ձողից կամ երկաթից. չունեցած պարագայում թզաչափ են անում կամ «գեազ անում»—քթի ծայրից՝ ուսի վրայով մինչև ձեռքի մատների ծայրը հաշուում են մէկ գեազ, իհարկէ նորմալ հասակ, իսկ արտերը կամ գետին չափելիս քայլաչափ են անում։ Հեղուկներն ևս չափաբանով է։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Զհարմհալը հաղորդակցութիւնից միանգամայն զուրկ

է եղել. ո՛չ պոստային սպասարկութիւն, ո՛չ հեռագիր, ո՛չ հեռախօս, այնպէս որ միանգամայն կտրած է եղել արտաքին աշխարհից. նոյնիսկ մօտակայ բաղաքներից։ Մի անհրաժեշտ գործի համար գիւղացին պարտաւոր էր վարձել «դասիդ» (սուրհանդակ) և ուղարկել քաղաք կամ այլ ուր՝ տանելու իր նամակը կամ պատգամը, այն էլ ինարկէ ոտքով. աւելի շտապ ժամանակներում՝ ձիով։ Փոխադրութիւնն ամբողջովին կատարւում էր էշերով և ջորիներով։ Իշապան կարաւանները Զհարմհալից իսպահան 9—10 օրում էին գնում և վերադառնում. մի խօսքով մի խուլ անկիւն էր ներկայացնում գաւառը. կտրած ամեն ինչից, մանաւանդ ձմեռային եղանակին: Վերջին երեսնամեակում ինքնաշարժերը մուտք գործեցին գաւառը և փոքր ինչ բարելաւեց դրութիւնը. նմանապէս և հեռագիրը։

Այժմ բոլոր գաւառներում գոյութիւն ունի պոստ—հեռագիր։

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Լուսաւորութեան և կրթութեան տեսակէտից դարձեալ զուրկ է եղել Զհարմհալը, կանոնաւոր դպրոց, մտաւորականութիւն, դեկավար մարմիններ, կրթական միութիւններ և այլ հարկաւոր ու անհրաժեշտ միջոցներ չի ունեցել. ժամանակի կառավարութիւնն էլ այդ ուղղութեամբ բոլորովին անտարբեր է եղել։ Ոչ մի լրագիր, կամ թերթ չեն ստացել հայ գաւառացիները մինչև 1918—19 թւականները։ Առաջին հայ լրագիրը ստացել է Զհարմհալում 1920 թ., դա էր Թեհրանում լոյս տեսնող «Առաւօտ» թերթը, այն էլ Հ. Յ. Դաշնակցութեան խիստ պայքարի օրերին: Այնուհետև շարունակել է և գրեթէ կանոնաւոր կերպով՝ զանազան նուիրատուների կողմից, կամ ուղղակի բաժանորդագրութեամբ։ Այժմ Զհարմհալցի ընթերցասէրներից շատերը բաժանորդ են «Ալիք» և մի քանի իրանեան ու արտասահմանեան հայ թերթերի։ Բացի այս, ստանում են երկու օրինակ ֆարսերէն թերթեր։ Վերջին քսանհինգ ամեակի ընթացքում մեծ յառաջադիմութիւն ունեցաւ Զհարմհալի երիտասարդութիւնը՝ շնորհիւ իր ընթերցասիրութեան։ Կրթասէր ժողովուրդ է նա, եթէ հնարաւորութիւն ունենայ, զոհաբերող է՝ եթէ միջոց ունենայ։

ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ

Զհարմհալի մտաւորական ոյժը կազմած է եղել ժամանակակից հոգևորականներից, որոնք ձմեռային եղանակին հաւաքում էին իրենց շուրջ մի քանի երեխաներ ու դաստիարակում, սովորեցնելով նրանց ժամագիրք, սաղմոս, ս. գիրք նարեկ և յայսմաւուրք, ուրիշ խօսքով ուղղակի խալիֆայական մեթոդով։ Շուրջ 300 տարի չը-հարմհալաբնակ հայերը բաւականացել են այս տեսակով։

Քսաներորդ դարի սկզբներին հիմնել են երեք-չորս դպրոցական շէնքեր, որոնց մասին յետագայ էջերում կանդրադառնանք։ Անշուշտ դպրոցների հիմնելուց յետոյ, դաւառ են ուղարկուել ուսուցիչներ և փոքր ի շատէ կանոնաւորել է դասաւանդութիւնը։

1904—5 ուսումնական տարեայ նշանաւոր ուսուցիչներից այստեղ յիշատակենք Սարգիս Յովհաննիսեանը՝ «Սարգիս վարժապետ», որի օգնականն էր օր. Մաչխարուն Էլիասեանը. նանք առաջին անգամ Լիվասիան գիւղի նորակառոյց «Պոպովեան» դպրոցի դռները բանում են հայ մանուկների առաջ։ Պարոնը, ըստ պատմութեան, Հայաստանից էր եկել ամբողջ գաւառի ժողովուրդը այսօր էլ գովասանքով է խօսում նրա թափած ջանքերի մասին։ Նա բացի ուսուցչական պաշտօնը, պատրաստել է տուել դպրոցի համար մի ընդարձակ ծառաստան. ժամանակ առ ժամանակ շրջել է գաւառի հայ գիւղերը, դասախօսու-

Բժ. Կարո Մինասեանը եւ ծնողները
1925 թ.

Մանասէր Տէր-Սարգսեան եւ ընտանիք
1933 թ.

թիւններ ունեցել ու լուսաւորել ժողովուրդին։ Հիմնել էր նաև մի գրադարան «Պոպովեան» դպրոցին կից մի սենեակում և բաւականաչափ գրքեր հաւաքել ու դասաւորել. գրքերի ու պարբերականների մեծ մասը իր նուիրածն էր, որոնք մինչև 1946 թուականը պահւում էին տակաւին գիւղի հոգաբարձուների մօտ. յայտնի չէ նրանց հայրենիք վերադառնալուց յետոյ ինչ եղան, կամ ուր թողեցին։ Գրքերից շատերի վրայ գրած էր՝ «Նէէր Լիվասիան գիւղի գրադարանին Ս. Յովհաննիսեանից»։

Առաջին ներկայացումը Զհարմհալում կազմակերպել են վերոյիշեալ պ. Սարգիսը և օր. Խաչխաթունը Լիվասիան գիւղում։

Այնուհետև, քիչ տարիների բացառութեամբ, շարունակ ուսուցիչ կամ ուսուցչուհիներ են ուղարկւել Զհարմհալի նորաբաց դպրոցների համար՝ Նոր-Զուղայի Համայնական Խորհրդի կարգադրութեամբ, կամ ուղղակի գիւղացիների միջոցներով, երբեմն էլ գիւղերի առաջադէմ աշակերտներից են նշանակել։

Գաւառում կրթութիւն առած ուսուցիչներից յիշատակենք։—պ. Մանասէր Տէր-Սարգսեան, որի մահուան առթիւ «Ալիք» Օրաթերթի 1934 թ. 25 Հոկտեմբերի համարում գրած էր.—«...Նա գաւառի կրթած, խելօք, խոհեմ, ազնիւ, հասկացող և յարգւած մարդն էր. Զհարմհալը—հայ և պարսիկ նրան կոչում էր «Զհարմհալի փիլիսոփայ»... Երկու տարի շարունակ յաճախում է Լիվասիան գիւղի «Պոպովեան» դպրոցը և դաստիարակւելով ժամանակի նշանաւոր ուսուցիչ Սարգիս Յովհաննիսեանի մօտ, որին համարում էր իր փրկարար հրեշտակը և զարթօնքի ոգին...։ Ուսուցչութիւն է արել Աղբուլաղի ազգային դպրոցում տարիներ շարունակ...։ Զհարմհալի բոլոր գիւղերի ծանրակշիռ և բարդ խնդիրներում ու վէճերում միակ խորհրդատուն էր...։ Ընկեր Մանասէրի, գիւղի այդ շնոր-

հալի մտաւորականի մահը մեծ և անփոխարինելի կորուստ է գիւղացիութեան համար, որ առանց այն էլ աղքատ է մտաւորական ոյժերով։

Այստեղ նշենք մի քանի ուրիշներ։ Հս. Պ. Կարապետ Մանսուրեան (նկարը Զ. Գ. Հայ դպրոցների բաժնում)։ Պ. Մարտիրոս Յարութիւնեան, պ. Օհան Մարդարեան, պ. Աբրահամ Ղարախանեան, պ. Սիմէօն Աւետիսեան, հանգ. Գր. Վէրդեան և ուրիշներ, որոնք տարիներով պաշտօնավարել են գիւղական դպրոցներում։

Վերջին յիսնամեակում Զհարմհալի դպրոցներում պաշտօնավարել են գաւառում կրթուած մի քանի տասնեակ երիտասարդներ, որոնք ամեն ջանք գործ են դրել և զարկ տուել գաւառի լուսաւորման և զարգացման գործին՝ նիւթական սուղ պայմանների տակ, մի չնչին ռոճիկով, երբեմն էլ գրեթէ ձրիաբար։

Հոգևորականութեան թիւը միշտ անպակաս է եղել Զհարմհալում։ իւրաքանչիւր գիւղ ունեցել է 1—2 երբեմն էլ 3 քահանաներ. 1944 թ. գաւառի ինն գիւղերում կային 10 քահանայ և մէկ վարդապետ։

ԸՄԲԻՇՆԵՐ

Զ գաւառում եղել են մի քանի ուժեղ անձնաւորութիւններ, որպէս ըմբիշներ նշենք մի երկուսին։—

Քօնարք գիւղից պ. Մինաս Զօվէլեան։ Սարում երեք հոգի գողեր յարձակւում են սրա վրայ հրացաններով։ Մինասը հանգիստ կանգնում է մինչև 3 գողերը մօտենում են իրեն, ապա յարձակւում է երեքին էլ բռնում, հրացանները կապում բազուկներին և բերում իր գիւղը (որպէս ամօթանք)։ գողերից մէկի քոյրը լսում է և մի բեռ արմաւ նուէր է բերում Մինասի համար և գովաբանում։ Մէկ բեռ ցորեն մէկ մաջմայի (մեծ ափսէ) մէջ մէկ ձեռքով բարձրացնում է։ Մասջիդ-Սուլէյմանում հնդիկ

ըմբիշի հետ մրցում է և մրցանակը շահում։

Մանասէր Զոհրաբեան, մամուքայեցի։—Մանասէրը ցորեն է տանում Գեահրի գիւղը, պարսիկի ջրաղացում աղալու. հերթ չեն տալիս, սա էլ ջրաղացի քարը բարձրացնում է և դուրս տանում ջրաղացից. ասում է «ով ներս բերի՝ առաջ նա իր բեռն աղա». ոչ ոք չի կարողանում, ուստի նա կրկին ներս է բերում և աղում իր բեռը։

Երկաթէ հաստ ձողը ձեռքով ծալում է։ Բահը չոր գետնի մէջ է խփում ձեռքով, որը բաւականի խրւում է հողի մէջ։

Եղել է նաև Գէորգ Բաջառեան՝ Սիբաք գիւղից և ուրիշներ։

Աղանուր Յարութիւնեան (Բէյրի), Մամուքա գիւղից, կռփամարտ, որը թէ Հնդկաստանում, թէ Անգլիայում և թէ Պարսկաստանում միշտ առաջինն է հանդիսացել և պարգևատրւել. եղել է յիշեալ երկրների և ամբողջ հեռաւոր Արևելքի կռփամարտի ախոյեան։

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

1945-46 թւականներին տակաւին Զհարմհալի հայ գիւղերում գոյութիւն ունէին 9 դպրոցական շէնքեր, 9 եկեղեցի, 9 բաղնիս, 11 ջրաղաց և մի բժշկական։ Բաղնիսների, ջրաղացների և եկեղեցիների մասին տեսնել գիւղերի շարքին, իսկ դպրոցները և բժշկականը ստորև։

ԶՀԱՐՄՀԱԼ ԳԱՒԱՌԻ ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Զհարմհալ գաւառի հայ գիւղերի հիմնարկութեան օրից 1608—10 թ. սկսած, ամբողջ 300 տարի դպրոցական շէնք գոյութիւն չի ունեցել գաւառում և հայ ժողո-



1914 — 15 թ. Մամուխա գիւղի դպրոցը

վուրդը բաւականացել է իւրաքանչիւր գիւղի համար ունենալ մի երկու տիրացու-քահանայացուներ, որոնք սովորելիս են եղել իրենց գիւղի քահանայ-ուսուցիչների մօտ, վարժւելով միայն եկեղեցական փոխասացութիւն և ընթերցւածք ու երգեր, և այդպիսով պահել են Մեսրոպեան պնակիտից բղխած մշակոյթը։ Շատ ուշ ժամանակներում, երբ պահանջը զգալի է դառնում, մասնաւոր անձինք սկսում են սովորել նաև ֆարսերէն գրել-կարդալը պարսիկ մօլլաների մօտ։ Շուրջ 50 տարի առաջ Չհարմըրնալի հայ գիւղերում եղել են 6—7 հոգի ֆարսերէն կարդացողներ, որոնք ժողովրդի սիրելիներն ու երևելի անհատներն են համարւել գաւառում։ Չմոռանանք յիշատակել, որ սրանք այն անհատներն են, որոնց համար ֆարսերէն գրել-կարդալը անհրաժեշտութիւն էր կազմում. օրինակ, ժամանակակից քեալանթարների (տանուտէրերի)

Ադրբուլաղ գիւղի դպրոցը 1924 թ.

գաւակները, երբ հայրը յաճախ գործ ունէր գիւղատէրերի, գաւառապետների և իրանցի այլ պաշտօնեաների հետ, ստիպուած էր որդուն ֆարսերէն սովորեցնել. սակայն այս պարագան ապարդիւն չի անցնում, շարժւում է գիւղացիների նախանձը և շատերը հետևում են նրանց օրինակին։ Այսպիսով օր աւուր գաւառում աճում է ֆարսերէն սովորողների թիւը։ Պէտք է յիշել, որ պարսիկ համագաւառացի տգէտ մարդկանցից հալածւում են հայ պարսկագէտները, այն առարկութեամբ, թէ ինչու այլակրօն մի ազգ պէտք է բերան առնի իրենց լեզուն և գիրը։

Նման ըմբռնումով Ահմադաբադ գիւղի տանուտիրոջ որդուն՝ պատանի Յովսէփին սպանում են հարևան գիւղացի պարսիկները մօտ 50 տարի առաջ և ձգում յիշեալ գիւղին կից Ջրհորի մէջ։ Նրան հազիւ 5—6 օրց յետոյ գտնում են, հանում դուրս և ամփոփում։ Սակայն այս ու նման արգելքներն ու հալածանքները չեն կասեցնում գործը. գաւառի ուսումնածարաւ հայ ժողովուրդը գնալով աւելի ուժեղ թափով է ընդառաջում զէպի լուսաւորութիւնն ու զարգացումը։ Ահա այսպիսով, ընկնելով ու բարձրանալով, Զհարմհալի հայ ժողովուրդը հասնում է մինչև գաւառում կանոնաւոր դպրոցական շէնք ունենալու աստիճանին։

1904—5 թուականներին Զհարմհալում հիմնւում են առաջին հայ դպրոցները.—Լիվասիան գիւղում՝ «Պոպովեան» դպրոցը, Վերին-Քոնարքում՝ «Վաչեան», Սիրաքում՝ «Հայրիկեան» և Մամուքայում՝ «Պողոս Բալասանեան»։ Անտարակոյս գաւառում դպրոցներ հիմնելուց յետոյ, ուղարկւում են ուսուցիչ-ուսուցչուհիներ և սկսւում է որոշ չափով կանոնաւոր պարապմունք։ Մինչև դպրոցների հիմնելը Զհարմհալում իգական սեռը բոլորովին զուրկ է մնացել գրել-կարդալ սովորելուց։

Գաւառում դպրոցներ հիմնելը և ուսուցիչ-ուհիներ ու-

ղարկելը Նոր-Ջուղայի Առաջնորդարանի կարգադրութեամբ է եղել մինչև շուրջ քառասուն տարի սրանից առաջ, իսկ դրանից յետոյ՝ գաւառացիների և համանուն գաւառի «Ուսումնասիրաց» Միութեան ջանքերով է կառավարւել։

Նոր-Ջուղայում տպագրւած եկեղ. օրացոյցի յաւելուածում կայ ներքոյ գրւած յիշատակութիւնը Զ. գաւառի հայ դպրոցների վերաբերեալ.—

Սիրաք	գիւղ	«Հայրիկեան» դպրոց	2	ուսուցիչ-ուհի
Մամուքա	»	«Պողոս Բալասանեան»	2	»
Լիվասիան	»	«Պոպովեան» դպրոց	2	»
Քոնարք	»	«Վաչեան» »	1	»

Վերոյիշեալ չորս գիւղերի դպրոցների կառուցումը օրինակ է հանդիսանում միւս գիւղերին և գիւղացիները իրենց սուղ միջոցներով կառուցում են մի-մի փոքրիկ դպրոցական շէնք իւրաքանչիւր գիւղում. Սրանցով Զհարմհալն ունենում է ինն դպրոցական շէնքեր և աստիճանաբար կանոնաւորւում է դասաւանդութիւնը։ 1945 թւին այցելեցի ծննդավայրս՝ Զհարմհալ, այդ ուսումնական տարում գաւառի ինն դպրոցներում կային 15 ուսուցիչ-ուհիներ ու օգնականներ, դպրոցներում կար 400 աշակերտուհիներ՝ ներքոյ գրւած ցուցակի համաձայն։ Դասաւանդում էին Հայ լեզուն, ֆարսերէն, թւաբանութիւն, աշխարհագրութիւն, հայոց պատմութիւն, կրօն և այլ առարկաներ։ Տեղն է արձանագրելու, որ Զհարմհալ գաւառի խղճուկ դպրոցների առաջադէմ աշակերտներից շատերը գիւղի դպրոցն աւարտելուց յետոյ, անցել են Նոր-Ջուղայի կամ որևէ ուրիշ քաղաքի դպրոց և շարունակել իրենց կրթութիւնը ու ձեռք բերել փայլուն ապագայ և անուն։

Հանդուցեալ Մանասէր Տէր-Սարգսեանի նամակի հատուածը.— Աղբուլաղ 1—12—33 թ.

...ինչ վերաբերում է գիւղիս դպրոցի բացելուն, շատ երկար պատմութիւն ունի, գրեթէ եթէ գործը միայ հասարակութեան՝ չի կարող պատահի, որ համաձայնութեան գան և մի բան մտածեն. Մեր կարծիքով, մի քանի անդամներս շատ ջիք ու ջանք ենք թափում այդ առթիւ. կազմում ենք մի միութիւն «Դպրոցասէր» անունն ենք տալիս, բայց ինչքան աշխատում ենք, բացի ուրիշներից նպաստ խնդրելը՝ մեզանից ոչինչ չի գոյանում։

Առաջին պատեհութեամբ մի դիմում գրում ենք պ. Յ. Մաղաթին, Կալկաթա և նրա միջոցով ուրիշ հաստատութիւնների. մինչև օրս ոչ մերժում ենք ստացել և ոչ էլ համակրանք, միայն ըստ ասութեան մեր Մարտիրոս Տէր Մարտիրոսեանի և Տէր Յովակիմ Բաբսեղեանի, որ պարոնը միտք ունէր մի բան տալու։ Էդպէս մի բան և մենք տեսնում ենք որ ուշանում է, կամ անպատասխան մնում. երեք դիմում ևս գրում ենք երեք պարոնների, առաջինը պ. Դաւիթ Դաւթեան, Թեհրանի դպրոցին 150 հազար ռուփի տուողը, երկրորդը՝ պ. Կրէտը և երրորդը՝ պ. Յ. Յարութիւնեանը Չհարմհալցի. հիմա տեսնենք ինչ հետևանք է ունենում։

Որոշած էր Կալկաթայի Կրթասիրածի կողմից Տէր Յ. Բաբսեղեանը գիւղերը անցնէր ու չեկաւ. չգիտեմ ինչ եղաւ։

Երկար երկար գրէ. Ջանիկս, ես էլ պատրաստ եմ երկուտակ պատասխանելու։

Քո՝ Մ. Տէր-Սարգսեան

ԾԱՆՕԹ.— Հնդկաստանից ոչ մի նպաստ չստացաց Չհարմհալի դպրոցների համար։ Աւ. քահ

ՎԻՃԱԿԱՅՈՅՑ ՉՀԱՐՄՀԱԼ ԳԱՒԱՌԻ 1944—45 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻԱՑ ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Գիւղ	Ուսուցիչ-ուհի	Բաժանմունք	Աշակ.-ուհի
Սիրաք	2	Դ.	45
Հաջիաբադ	2	Ե.	104
Մամուքա	3	Ե.	90
Աղբուլաղ	1	Դ.	35
Սինադան	2	Ե.	52
Մամուռան	1	Դ.	35
Լիվասիան	2	Դ.	49
Ներքին Քոնրաք	1	Ե.	32
Վերին-Քոնարք	1	Ե.	38
	15		480

1946 թ. Մայր Հայրենիք ներդաղթեց Չհարմհալ գաւառի վեց գիւղերի հայ ժողովուրդը, մնացին միայն 3 գիւղեր, հետևաբար սոյն յաջորդ 1946—47 ուս. տարում բաց են եղել միայն 3 դպրոցներ՝ Սիրաք, Հաջիաբադ և Մամուքա գիւղերում։

1947—48 ուսումն. տարւայ վիճակացոյցը

Գիւղ	Ուսուցիչ-ուհի	Բաժանմունք	Աշակերտ-ուհի
Մամուքա	3	Զ.	120
Հաջիաբադ	2	Զ.	80
Սիրաք	2	Դ.	60
	7		260

1950 թւականի վիճակացոյցը

Մամուքա	3		85
Հաջիաբադ	1		50
Սիրաք	1		32
	5		167

1951 թուականի վիճակագրությունը

Գիւղի անուն	Աշակերտ-ուհի	Ուսուցիչ-ուհի
Մամուքա	85	3
Հաջիաբադ	36	1
Սիրաք	40	1
	160	5

«Ալիֆ» 1952 թ. 30 Յունիսին տպագրուած

Գիւղի անուն	Շունչ	Աշակերտ-ուհի
Մամուքա	372	85
Հաջիաբադ	170	36
Սիրաք	146	36
1953		
Մամուքա	375	79
Սիրաք	143	44
Հաջիաբադ	175	48
1960		
Մամուքա	156	72
Հաջիաբադ	60	18
Սիրաք	71	9

ՉՀԱՐՄՀԱԼ ԳԱՒԱՌԻ ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1. «Պոպովեան» դպրոցը

1904 թուականին Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ՝ Տ. Բագրատ Վարդապետ Վարդազարեանի հրահանգով Լիվասիան գիւղում հիմնւում է «Պոպովեան» դպրոցը։ Պոպովեանը մի ռուսահայ բարերար, հոգում է դպրոցի շինութեան ծաղքը և նրա գոյութիւնն ապահովելու նպատակով՝ այս դպրոցի անւամբ մի որոշ գումար դնում է ժամանակի յայտնի առևտրական Թումանեան Տան մօտ. ապագայ տարիների ուսուցչի ռոճիկի և այլ ծախսերի համար։ Նա նուիրում է դպրոցին սեղաններ, աթոռներ, նստարաններ և մանկապարտէզի համար հարկաւոր իրեր։ Մի խօսքով բաւական յարմար կահաւորում է ուներում դպրոցը և նիւթականով ապահով. սակայն Թումանեան Տան անանկանալուց յետոյ՝ յիշեալ գրամից մի չնչին բաժին է հասնում «Պոպովեան» դպրոցին։ Այդ գումարով Նոր-Զուղայի Առաջնորդարանի կարգադրութեամբ Փերիա գաւառում գնում են մի փոքրիկ հողամաս, որի հասոյթը, վերջին տարիների արժէքով 200—300 թուման, վճարում էր այս դպրոցին։

«Պոպովեան դպրոցը ամենագեղեցիկն էր Չհարմահալում, կառուցւած գիւղի հարաւային կողմում, գիւղից փոքր ինչ հեռու։ Շէնքի ճակատը աղիւսաշէն էր, փայտածածկ, ունէր չորս դասարաններ, մէկ սենեակ որպէս գրադարան, բեմ, դահլիճ և փայտանոց. ունէր նաև ցանկապատ, ընդարձակ ծառաստան և այլ յարմարութիւններ։ Դպրոցի շինութեան ժամանակ գիւղի բնակչութիւնն իր մասնակցութիւնն է ունեցել. տուել է քանւոր, փայտ, յարդ և ուրիշ պիտոյքներ։ Գիւղի ծերունիներից մէկը այսպէս էր պատմում.—Խաչիկն էր այս շէնքի ուստէն, վարձը վանքից էին տալիս, բայց մենք էլ օրական դանդը երկու քանւոր էինք տալիս, երիտասարդներս էլ հասնում և օգնում էինք առանց հերթի սպասելու»։

Չհարմահալ գաւառում հիմնւելիք դպրոցների, ինչպէս նաև սոյն «Պոպովեան» դպրոցի խնամատարութեան գործը ստանձնած է եղել գաւառի հոգևոր այցելու հովիւ՝ Տ. Եղնիկ Վարդապետը։ Դպրոցի շինութիւնն աւարտելուց յետոյ մնում է լիւասիանցիների հոգատարութեան ու խնամքին։ Բայց հէնց առաջին տարւանից, բացառութեամբ

մի քանի տարիների, Նոր-Ջուղայի Առաջնորդարանի կողմից նշանակել են ուսուցիչ-ուհիներ և ուղարկել գիւղ։ Լիվասիան գիւղի բնակիչներն այժմ էլ գովեստով են խօսում իրենց առաջին տարեայ ուսուցիչ «Հայաստանցի Սարգիս վարժապետի և Խաչխաթուն վարժուհու» տարած աշխատանքների մասին։ Բացի ուսուցչութիւնը, նրանք եղել են Զհարմհալ գաւառի թատրոնի հիմնադիրը։ Առաջին անգամ ներկայացում կազմակերպելով՝ հիացմունք են պատճառել գաւառի հայ ժողովրդին։ (Դժբախտաբար չկարողացանք ստուգել թէ առաջին անգամ ինչ է բեմադրուել Զհարմհալում)։

«Պողովեան» դպրոցը ունեցել է մի ճոխ գրադարան, ժամանակի պահանջների համեմատ, որի գրքերի ու պարբերականներից շատերի վրայ մակագրուած է՝ «Նուէր Լիվասիան գիւղի դպրոցի գրադարանին, Ս. Յովհաննիսեանից»։ Այս բոլորով հանդերձ, ցաւ իսիրտ, պիտի ասել, որ գիւղի ժողովուրդը միանգամայն անտարբեր էր մնացել դէպի իր դպրոցն ու գրադարանը։ հարկ եղած խնամք չէր տարել, որի հետևանքով դպրոցի շէնքը խարխլուել ու գրադարանի գրքերից մեծ մասը կորել էին, իսկ մնացածն էլ մի անկիւնում թափուած մնացել էր փոշու տակ։ 1945 թ. այս գրադարանն ունէր միայն 150 հատոր գիրք բոլորն էլ ոչ լաւ վիճակում։ Գիւղացիների Մայր Հայրենիք վերադառնալուց յետոյ (1946 թ.), չգիտենք ինչ եղան այս և միւս գիւղերի գրադարանների գրքերը։ որոշ անհատներ իրենց մօտ ունեցածը, մեզ հասած տեղեկութեան համաձայն, թաղել են իրենց գիւղի գերեզմանատնում։

2. «Վաչեան» դպրոց.

Նոյն 1904—5 թուականներին է հիմնուում նաև Վերին-Քոնրաք գիւղի «Վաչեան» դպրոցը։ Գլխաւոր նուիրատուի՝ բազուաբնակ հանգ. Աստուածատուր Վաչեանի տիկնոջ՝ Մարիամ Վաչեանի յիշատակին, դարձեալ Նոր-Ջուղայի Առաջնորդական փոխանորդ Տ. Բագրատ Վարդապետի հրահանգով։

Այս դպրոցը կառուցուած է գիւղի ամենայարմար վայրում, մի սառնորակ աղբիւրի մօտ, շրջապատուած է պարիսպով, որի ներսից ու դրսից զարդարուած սաղարթախիտ ծառերով ու կանաչութեամբ։ Ունի 4 դասարան, մէկ դահլիճ, մի փոքրիկ բեմ և խաղավայր։ Այս գիւղի բնակիչներն ևս օգնել են դպրոցի շինութեան ժամանակ. ապա խնամքով պահել-պահպանել էին այս փոքրիկ հաստատութիւնը մինչև 1946 թ. երբ հրաժեշտ տուին թէ՛ գիւղին և թէ՛ դպրոցին ու մեկնեցին հայրենիք։

«Վաչեան» դպրոցը շուրջ կէս դար, տարեկան 100 աշակերտ-ուհիների, դաստիարակութեան ու լուսաւորութեան կենտրոն է հանդիսացել։ Այս դպրոցն ունէր մի փոքրիկ գրադարան, սակայն միանգամայն անխնամ վիճակում, կամ աւելի ճիշտ՝ ընտիր գրքերը գիւղացիներից մի քանիսի սեփականութիւնն էր դարձել։ Առաջին անգամ բեմադրուել է «Փշուր մը խաց»ը և «Պաշտօնս է խոմփալ»։

3. «Հայրիկեան» դպրոց

Երրորդ տեղը գրաւում է Սիրաք գիւղի «Հայրիկեան» դպրոցը։ Ըստ նոյն գիւղի բնակչութեան ասութեան, հիմնուել է 1908 թ. երջանկայիշատակ Խրիմեան Հայրիկի յիշատակին։ Գրամագլխի չգոյութեան պատճառով, Բագրատ Վարդապետը հրահանգում է մի հանգանակութիւն կատարել և գոյացած դրամով Սիրաք գիւղում կառուցել մի դպրոց։ Հանգանակութեան գլխաւոր օժանդակողները լինում են Նոր-Ջուղայի եկեղեցական վարչութիւնները, որոնց վճարած դրամով հնարաւոր է լինում հիմնել այս դպրոցը։ Փոքրիկ, բայց գեղեցիկ շէնք է բաղկացած երեք

սենեակներից, գիւղի հարաւային կողմում. ունի փոքրիկ բակ, սակայն աշակերտութեան համար հնարաւոր է բակից դուրս դպրոցին կից բաց տարածութեան վրայ ևս խաղալ։ Ամառային սեզոնին յիշեալ բակը ծառայում է որպէս սրահ ներկայացումների համար, իսկ շէնքի փոքրիկ սրահը՝ որպէս բեմ։

Այս շէնքից միայն մի պահարան է յատկացրած գրադարանին, որտեղ պահւում է մօտ 100 կտոր գիրք բաւական խնամքով։ Դպրոցի շէնքը իր փոքրութեամբ ու գեղեցկութեամբ հանդերձ՝ մի տխուր պատկեր է ներկայացնում. բոլորովին խարխուլ, ապակիները կոտրատուած ե առաստաղը ծակոտուած։ Յաւալի այս վիճակը, անշուշտ, հետևանք է գիւղի բնակիչների անհոգութեան։

4. «Պողոս Բալասանեան» դպրոց

Մամուքա գիւղի «Պողոս Բալասանեան» դպրոցը նոյնպէս կառուցւում է հանդանակութեամբ, որին իր լայն մասնակցութիւնն է բերում Նոր-Ջուղայի բնակիչ Պ. Բալասանեանը։ Այդ դպրոցը գտնւում է յիշեալ գիւղի հիւսիսային կողմում, հիմնել է 1907—8 թուականին։ Ունէր վեց դասարաններ, բեմ, սրահ, ուսուցչի բնակարան և այլ յարմարութիւններ. առջևում էլ մի փոքրիկ պարտէզ։ Մասամբ շէնքի մեծութեան և մասամբ էլ գիւղի ժողովրդի անտարբերութեան հետևանքով՝ այս շէնքը երկար չի մնում, հազիւ 20 տարի է պահպանում իր գոյութիւնը, բայց շարունակ ունենում է իր ուսուցիչ-ուսուցչուհիները և տարեկան 100—120 աշակերտ-ուհիներ։ Ամենավաստակաւոր ուսուցիչն է եղել Նոր-Ջուղայեցի հանդուցեալ Մկրտիչ Զոհրաբեանը։

Դասաւանդութիւնն այս դպրոցում հնարաւոր է լինում մինչև 1926—27 թ, որից յետոյ շէնքը բոլորովին աւերակ է դառնում և գիւղի ժողովուրդը ստիպւած է լինում մի նոր դպրոցական շէնք կառուցելու։

Գիւղում գոյութիւն ունեցող երեք միութիւնները՝ «Արշալոյս», «Դարաւոր» և «Ասլան» միացեալ ոյժերով 1929 թ հիմնում են մի նոր դպրոց իրենց գիւղի համար, այս անգամ գիւղի հարաւային կողմում և աւելի գեղեցիկ մի վայրում։

Նորակառոյց դպրոցն ունի վեց դասարաններ, մի դահլիճ բաւական կոկիկ փոքրիկ բեմով, յատակն ամբողջապէս ադիւսապատ է և շէնքի ներսը գեաճած։ Մամուքայի դպրոցի այս շէնքը բաւական լաւ խնամքով է պահւած։ Յաճախում են 20—30 աշակերտ-ուհիներ։ Ունի 70—90 կտոր ընթերցանութեան գրքեր։

5. Հաջիաբադ գիւղի Հայոց ազգ. դպրոց

Այս երեք դասարաններով փոքրիկ դպրոցը գիւղ. եկեղեցուն կից մի շէնք է. հիմնել է 1922 թ. գիւղացիների ծախսով և մասամբ գիւղատէր Մանուչէր խան Բախտիարիի օժանդակութեամբ. նա տւել է դպրոցին նաև մի քանի զոյգ դռներ, սեղաններ, աթոռներ և այլն։ Բացի այդ, դպրոցի մատեանում արձանագրել է տարեկան 500 ռիալ նպաստ, մի քանի տարի յետոյ՝ աւելացրել է այս գումարի վրայ կրկին 500 ռիալ և կանոնաւոր վճարել է դպրոցին։

Մանուչեր խանը տեսնելով իր հողագործների երեխաների յառաջադիմութիւնը թէ հայերէն և թէ ֆարսերէն լեզուների մէջ, պատւիրում է գիւղի բնակիչներին կառուցել մի նոր և ընդարձակ դպրոցական շէնք. ընտրում է յարմար տեղ. պատրաստել է տալիս յատակագիծ և 20,000 ռիալ աւանդ է թողնում տանուտիրոջ մօտ, որպէսզի յաջորդ գարնանից սկսի դպրոցի շինութիւնը, բայց գիւղի ժողովրդի անտարբերութեան հետևանքով, երկար ժամանակ ձգձգւում է խնդիրը ու մնում անգործա-

դրելի, մինչև վրայ է հասնում ներգաղթի տարին՝ 1946 թ., երբ Զհարմհալի վեց գիւղերը մեկնեցին Մայր Հայ-նիք։ Մանուշեր խանը յետ է ստանում իր դրամը, որով փակւում է նոր դպրոց շինելու խնդիրը։

Հաջիաբադի դպրոցն ունէր 80—90 աշակերտ-ուհիներ և 60 կոտոր գրքեր։ Հաջիաբաց, Մամուքա և Սիրաք գիւղերի դպրոցներում նորոգութիւններ է կատարւել Զ. Հ. Գ. Ուսումնական Միութիւնը 1954 թ-ին։

6. Սինագան գիւղի Հայոց ազգ. դպրոց

Կառուցած է 1927 թ. ունեցել է երեք դասարաններ, փոքրիկ սրահ ու բեմ։ Յաճախում էին 45—50 աշակերտ-ուհիներ։

7. Աղբուլաղ գիւղի Հայոց ազգ. դպրոց

Կառուցած է 1925 թ., ունեցել է երեք դասարաններ և փոքրիկ բեմ։ Յաճախում էին 35—40 աշակերտ-ուհիներ։

8. Ներքին Քոնարք գիւղի Հայոց ազգ. դպրոց

Կառուցած է 1924 թ., ունեցել է միայն երկու դասարաններ։ Յաճախում էին 35—40 աշակերտ-ուհիներ։

9. Մամուռան գիւղի Հայոց ազգ. դպրոց

Այս գիւղի «Սարդարաղա» կոչած երկու սենեակները ծառայել են որպէս դպրոց, ուր յաճախել են 30—40 աշակերտ-ուհիներ։

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Մինչև 19-րդ դարի վերջերը Զհարմհալցին չգէտէր ինչ է բժիշկ կամ բժշկութիւն. նա բաւականացել է դաւառում գտնւող մի շարք «Ջառոահների» (վիրահատներ)

և այս ու այն պառաւի խորհրդատրած դեղերով իր հիւանդութիւնը բուժելու. կամ սուրբերին դիմելով, մատաղ կտրել ուխտ կատարելով և հիւանդի գլխին Նարեկ ու գրաւոր աղօթքներ կարդալով։

Զհարմհալի հայերի մէջ կան «Ջառոահենց» տոհմը և մի քանի «շքեասթ բանդ»ներ. առաջինները կարծէք թէ ժառանգաբար են առաջ տանում Ջառոահութիւնը, բայց վերջիններն իրարից են սովորում, աւելի շուտ պինդ սիրտ ունեցողներն էին, որոնք կարող են դիմանալ հէւանդի փշրուած ոսկորները կապելիս, կամ դուրս ընկածը տեղը ձգելիս։ Այս Ջառոահները տեղական բոյսերից ու արմատներից մի քանի տեսակ դեղեր են պատրաստում։ Խոտերը հաւաքում են գարնան՝ երբ ծաղիկ կայ վրան։

Խոզի ճարպը, լեղին նմանապէս և կովի լեղին գործ են ածում որպէս դեղ, որոշ ցաւերի, ուռուցքի վրայ «թառհալայ» են դնում, (էշի ցանը խաշում են և կապում վրան)։ Ծանր հիւանդներին և վեներական վերքոտ մարդկանց «քաղնիս են կապում» կամ «մուխ են տալիս», քած էշի ցանը կրակի վրայ լեցնում, վրան մի վերմակ պահում և հիւանդին դնում տակը որոշ ժամանակով։ Մի դէպք է պատահել, վերջին գործողութեան հետևանքով, որ ենթական մահացել է սաստիկ ծխահոտից։ Կար նաև արիւն առնելու և տզրուկ կպցնելու սովորութիւն։ Մէջքի ցաւի համար «սանջու» էին կատարում. հիւանդին նստեցնում էին, սեղան տախտակը մէջքի մօտ բռնում, ապա կախարդը դուրս էր գնում վազէվազ գալիս, ձեռքի վարդանայով խփում էր սեղան տախտակին ու գոչում՝ «հարդան դեալմիսան». ներկաներից մէկը պատասխանում էր «սանջու դաղնդան». առաջինը սպառնում էր. «բէլա վուռռամ քի ջանին չխարամ հա՞։ Սանջուն վախից դուրս էր թռչում հիւանդի քամակից։ Սոյն «բժշկութիւնը սովորել են թուրքերից։

Զ. Գ. ՀԱՅՈՅ ԲԺՇԿԱԿԱՅԱՆԸ

Քսաներորդ դարի սկզբներից Նոր-Ջուղայի Յովսէփ Պողոսխանեան հիւանդանոցի յանձնախմբի կարգադրութեամբ երբեմն շրջուն բժիշկներ են գնացել Զհարմհալ և թեթև բժշկական օգնութիւն հասցրել գաւառի ժողովուրդին, այն է՝ աչքացաւի, պատւաստի, ջերմի ու դողցոցի դեղեր մատակարարել հիւանդներին։

Շուրջ քառասուն տարի էլ Զ. գաւառի հայ ժողովուրդը բաւականացել է վերոյիշեալ բժշկական սիստեմով և, վերջապէս, գաւառի երիտասարդութիւնը, մտաւորականները և նրանք ինչ որ փոքր ի շատ հետաքրքրուած էին՝ մտածում են իրենց ծննդավայր գաւառի բժշկական գործը աւելի հաստատուն հիմքերի վրայ դնել. գաւառում ունենալ մի հիւանդանոց և օգտակար լինել խեղճ ու կրակ գիւղացիութեան։ Այս միտքը իրագործելու նպատակով՝ մի խումբ ջուղայաբնակ չհարմհալցիներ 1940 թ. մի քանի խորհրդակցական ժողովներ գումարելուց յետոյ, կազմում են մի միութիւն։ Նոյն տարուայ վերջերը այս միութիւնն ունէր մօտ 60 անդամ-ուհիներ, բոլորն էլ չհարմհալցի երիտասարդ օյժեր։ Միութիւնն իր անդամներից ընտրում է մի յանձնախումբ՝ ձեռնարկելու հիւանդանոցի շէնքի կառուցման, կամ գնման և այլ անհրաժեշտ գործերի կարգադրման համար։ Յանձնախումբը անմիջապէս մեկնում է գաւառ ընտրելու մի յարմար վայր և սկսելու գործը։ Բարեբախտաբար այդ օրերին Զհարմհալի Մամուռան գիւղի տէրը՝ պ. Հեսամ-էլ Մոլքը յայտարարում է թէ Մամուռան գիւղի մօտ գտնուող իր «Ղալան» վաճառում է։ Յիշեալ յանձնախումբը ժամանակ չի կորցնում, անմիջապէս գնում է այդ շէնքը, անհրաժեշտ թեթև նորոգութիւններ կատարում, ապա հրաւիրում է Նոր-Ջուղայեցի բժիշկ Ամիրխան Հայրապետեանին, որպէս գլխաւոր վարիչ բժիշկ. վարձում է օգնականներ, գնում հարկաւոր դեղօրայք և ուղարկում գաւառ։ Կատարւում է բացման հանդէսը և հիւանդանոցի պաշտօնէութիւնը գործի է անցնում։ Սակայն Բժ. Հայրապետեանը երկար չի շարունակում իր պաշտօնը Զհարմքհալի հիւանդանոցում, դեռ տարին չլրացած հրաժարւում է. Նրա փոխարէն հրաւիրւում է Բժ. Յ. Մանասէրեանին. մի բարեխիղճ, եռանդուն և գործունեայ երիտասարդ, որ նուիրւում է հիւանդանոցի գործին մինչև փակելը, այսինքն երբ 1946 թ. Զհարմհալի վեց գիւղերի հայ ժողովուրդը գաղթեց Մայր Հայրենիք ու մնացին միայն հեռաւոր երեք գիւղերը. սրանք ևս յաջորդ տարին պիտի մեկնէին, այդ պատճառով փակեց հիւանդանոցը և մի քանի ամիս յետոյ շէնքը վաճառուեց։

Յիշեալ բժշկայանի անւամբ հիմնած միութիւնը այնքան էլ լաւ գործունէութիւն չյայտնաբերեց, սակայն հանգանակութիւններ, ձեռնարկներ և այլ չնչին մուտքերը, նմանապէս բժշկայանից գոյացած դեղագին և այցեգին ունեցաւ որոշ չափով, որով հնարաւոր եղաւ վարիչ յանձնախմբի համար մօտ 5 տարի կառավարել, տարեկան 200,000 ռիալ ծախսելով. այս գումարի մի մասը պարտք էր մնացել, որի համար բժշկայանի վարչութիւնը դիմեց Զար. գաւ. Ուսումնաս. Միութեան. վերջինս իր տարեկան ընդհ. ժողովում օրակարգի է դնում, որը ընդունւում է։ Մի առ ժամանակից յետոյ, յիշեալ միութիւնը որոշում է իր ամբողջ մուտքի 30% յատկացնել բժշկայանին։ Ժամանակ չանցած խորհրդակցական ժողովը ե։ ունենում՝ միացնել բժշկայանը Ուսումնասիրաց Միութեան, միասնաբար կառավարի թէ գաւառի դպրոցները և թէ բժշկայանը։ Սակայն, ինչպէս յիշել էինք, վրայ է հասնում ներգաղթը. որով ամեն ինչ փակւում է։ Այս բոլորով հանդերձ բժշկայանն իր

6 տարեայ գոյութեան ընթացքում մեծ օգտակարութիւն ունեցաւ և հարիւրաւոր հիւանդներ բուժեցին այս հաստատութեան մէջ։

ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Զանազան նպատակներով Զհարմհալի հայ գիւղերում 20-րդ դարի սկզբներից կազմուել են միութիւններ ստորև գրուած ցուցակի համաձայն.=

Գիւղի անուն	Միութեան անուն	Հիմն. թուական
Մամուքա	Գարվաղաճոր	1902
»	Զոր-Ասլան	1916
»	Արշալոյս Հ. Յ. Դ.	1919 Յունիս 1
»	Առիւծ	1932—42
»	Օժանդակ—Հ. Յ. Դ.	
»	Արարատ	1936—42
»	Աշոտ—Հ. Յ. Դ.	1916 Յունու. 5
Հաջիաբադ	Առիւծ—Հ. Յ. Դ.	1919 Յունու. 2
»	Աղքատախնամ	1919 Փետրու. 2
»	Ծաղիկ (Կանանց)	1922
Աղբուլաղ	Արծիւ	915
»	Փայլակ	1915
Սիրաք	Արծիւ—Հ. Ս. Դ.	1919 Յունուար 1
Ահմադաբադ	Ազգային և Զօրավար	1919 Յունու. 21
Սինագան	Արանց	1919
Ներք. Քոնարք	Արշալոյս	1915 Դեկտ. 31
»	Նոր-Սերունդ	1918 Սեպտ. 10
Վերին Քոնարք	Կայծեր	1911 Յունու. 18
»	Արծիւ[1]	1914 Փետրու. 7
»	Ընթերցասիրաց	1918 Դեկտ. 1
Լիվասիան	Նպատակ	
Մամուռան	Շանթեր	1916 Մարտ 2

1) Սկզբնական շրջանում կրել «Աշակ. Միութիւն» 1914-ից առաջ։

Վերոյիշեալ միութիւններից ոչ մէկը երկար կեանք ու գործունէութիւն չունեցաւ. ամենատևականը Մամուքա գիւղի երեք միութիւններն եղան, որոնք միացեալ ուժերով իրենց գիւղում շինեցին մի նոր դպրոց, եկեղեցու նորոգութիւնը կատարեցին և մի քանի փոքր բարեգործութիւններ արին։ Ունեցած չնչին գումարներն ևս զանազան անհատների մօտ, որպէս պարտք, մնաց անպահանջելի։

Մասնաւոր տեղ է գրաւում, սակայն, Զ. Գ. Հայ Ուսումնասիրաց Միութիւնը, որի մասին ստորև գրուած տեղեկութիւններն ունենք։

«Ընդարձակ տարեցոյց»ի 1928 թ. մէջ, Զհարմհալի միութիւնների մասին Տէր-Յովակիմ քահ. Բարսեղեանը գրում է։—«Այնպէս որ Հայաստանում ինչքան սար ու ձոր կայ, Զհարմհալում էլ այդքան կուսակցութիւններ»։

Զ. Գ. ՀԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

1930 թ. Մի խումբ Զհարմհալցի երիտասարդների նախաձեռնութեամբ, Աբադանում կազմուեց այս միութիւնը։

Սկզբնական շրջանում, անդամների թիւը սահմանափակ լինելով, թեթև օգնութիւն է հասցնում գաւառին, սակայն հետզհետէ աւելանում են մասնաճիւղերը, որով միութիւնը կարողանում է իր ուսերի վրայ առնել գաւառի հայոց դպրոցների բոլոր հոգսը. այնպէս որ վերջին տասնամեակում Զ. գ. հայ դպրոցները կառավարել և հովանաւորել է այս միութիւնը։ Գովելի և գնահատանքի արժանի մի գործ է կատարել։ Հոգացել է Զ. գ. հայ դպրոցների նիւթականը, ուղարկել է տեսուչ, ուսուցիչ-ուհիներ, դասագրքեր, դրենական պիտոյքներ և այլն։

1946 թ. ներգաղթի համար վճարել է 110,000 ռիալ, օժանդակել է Զ. Գ. Բժշկականին լայն չափով. այսօր

Զ. Գ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ

Սիմոն
Աւետիսեան

Մնացական
Մադաթեան

Սիմոն
Իսրայէլեան

Սարգիս
Մադաթեան



Մելքոն
Իսրայէլեան

Մարտիրոս
Մկրտումեան

էլ շուրջ 700,000 ռիալ կանխիկ դրամ ունի։

Զ. Գ. Ուսումնասիրաց Միութիւնը իր մասնաճիւղերը ունէր Մասչետ-Սուլէյման, Հաֆթքէլ, Աղաջարի, Ահվազ, Անդիմէշկ, Նոր-Զուղա, Թեհրան, Համադան, Բանդար-Շահփուր և գաւառի բոլոր գիւղերում։ Կենտրոնը՝ Աբադան. 1946 թ. ունէր 220 անդամ-ուհիներ։

1945 թ. սոյն միութիւնը գաւառ ուղարկեց բանասէր պ. Արամ Երեմեանին՝ ուսումնասիրելու և կազմելու Զհարմհալ գաւառի Ազգագրութիւնը, սակայն յիշեալ պարոնի հետ համաձայնութեան չեկան, որովհետև ձեռագրի ծաւալը շատ մեծ էր և տպագրութեան ծախսը 6000 թուման, ուստի այդ աշխատանքը մնաց անօգտագործելի։

Տես միութ. նամակը՝ էջ 4։

Նոր-Զուղայի մասնաճիւղը գաւառին մօտ լինելով, կենտրոնական Վարչութեան կողմից 1944 թ. լիազօրութիւն է գտնում՝ վարելու գաւառի դպրոցների վերաբերեալ բոլոր գործերը. վարում է մինչև 1950 թ., որից յետոյ դարձեալ կենտրոնին էմնում ամեն պատասխանատուութիւն։

Ընթերցողին որոշ չափով գաղափար տալու միութեան գործունէութիւնից, ստորև գրում եմ կենտրոնական Վարչութեան 1944—45 տարեշրջանի տեղեկագրի մի մասը, յուսալով ապագայում ևս կարող կը լինեմ աւելացնել նորերը։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Զհարմհալ գաւառի Հայ Ուսումնասիրաց Միութեան
և Կենտրոնական Վարչութեան 1944—45 թ.
Տարեշրջանի գործունէութեան
(Տպագրած «Ալիք» Օրաթերթի 5 Յունիս 1945 թ.)

Զհարմ. Գաւ. Հայ Ուսումն. Միութեան 8-րդ Ընդհանուր ժողովը կայացած 28 Ապրիլ 1944 թ., կայացրեց մի քանի կարևոր որոշումներ, որոնց շուրջ կանդրադառ-

նանք ստորև։ Բացի այդ որոշումներից, վարչութիւնս անշուշտ պարտականութիւն ունէր հսկելու միութեան բոլոր մասնաճիւղերի վրայ, ընթացք տալու գաւառի կրթական գործին և օժանդակելու Զհարմհալի հիւանդանոցին։

Նախքան մեր զեկուցումին անցնելը կուզէինք մատնանշել, որ Ուսումնասիրաց Միութիւնը դուրս է եկել իր նեղ սահմաններից, լայն ծաւալ է ստացել ու դարձել հետաքրքրութեան առարկայ։ Այս փաստը հետևանք է մասնաճիւղերի տարած աշխատանքներին և Զհարմհալի կըրթասէր յառաջադէմ երիտասարդութեան շնորհիւ։

Ցանկալի է որ ամեն Զհարմհալցի, մանաւանդ Ուսումնասիրացի ամեն անդամ խորապէս գիտակցելով այդ, վառ պահի լաւ արժանիքների սէրը և բարձր՝ Միութեան և գաւառի պատիւը։

Վարչութիւնս իր տարեշրջանի ամբողջ գործունէութեան տեղութեան ժամանակ եղել է համերաշխ ու գիտակից իր պարտականութեան, իսկ եթէ այդ գործունէութիւնը եղել է յաջող, քիչ չէ այն մեծ բաժինը, որ սրտադողջ կերպով բերել են բոլոր մասնաճիւղերը։

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Այս խնդրի կապակցութեամբ վարչութիւնս անմիջապէս նամակներ է գրել Ահվազի, Անդիմէշկի, Համադանի, Բանդար Շահփուրի և Նոր-Զուղայի մասնաճիւղերին խնդրելով կարող անհատներ ինկատի ունենալու ուսուցչական պաշտօնով գաւառ անցնելու։ Այս մասին նոյնիսկ Նոր-Զուղայի վարչութիւնը յայտարարեց «Ալիք» օրաթերթում, բայց դժբախտաբար մասնաւոր գործերի աւելի բարձր վարձատրութիւնը թոյլ չտուեց, որ բարձր կըրթութեան տէր ուսուցիչներ անցնեն գաւառ։ Մեզ մնում էր մի միջոցի դիմել և անպատճառ բանալ գաւառի դպրոցները՝ թէկուզ տկար ուժերով։ Շնորհիւ Նոր-Զուղայի մեր մասնաճիւղի ջանքերին, քնարեցին ու նշանակեցին տասնչորս ուսուցիչ-ուհիներ, մէկ վերահսկիչ տեսչով ինն հայ դպրոցների համար և գաւառի դպրոցների դասաւանդութիւնը բնականոն ընթացքի մէջ մտաւ։ Սոյն կազմը համեմատաբար եղել է շատ աւելի կարող, քան էր նախորդ տարեանը։

Բարձր կրթութեան տէր տեսուչ ևս չճարուեց, եղածների ակնկալութիւնն էլ վեր էր մեր նիւթական կարողութիւնից։ Իսկ այդ բացը լրացնելու անհրաժեշտութիւնից դրդուած, Նոր-Զուղայի մասնաճիւղն իր նախագահ պ. Աւ. Եդգարեանի ուսուցչական փորձառութիւնը նկատի ունենալով, ուղարկեց նրան գաւառ, որպէս Լիվասիան գիւղի ուսուցիչ և վերահսկիչ տեսուչ գաւառի դպրոցների։

Ինկատի ունենալով, որ գաւառի դպրոցների համար չափազանց անհրաժեշտ է ունենալ մի բարեխիղճ տեսուչ, որի պաշտօնավարութիւնը երկարատև լինի։ Պ. Եդգարեանի մէջ գտնելով այդ բարեմասնութիւնը, մենք դրել ենք Նոր-Զուղայի մեր մասնաճիւղին, խնդրելով նրա հետ պայմանաւորուել այդ պաշտօնը վարելու 2—3 տարով։

Զհարմհալ գաւառի ինն հայաբնակ գիւղերը 1944—45 թի ուսումնական տարեշրջանին ունեցել են տասը ուսուցիչ, չորս ուսուցչուհի, մէկ վերահսկիչ տեսուչ։ Աշակերտութեան թիւը եղել է 448։ 5030 թուման ռոճիկների դիմաց Ուսումնասիրացը վճարել է 2230 թուման։

Ուղարկել է 500 թուման Նոր-Զուղայի մասնաճիւղին՝ դրենական պիտոյքներ գնելու դպրոցների համար։ Դարձեալ 500 թուման ուղարկել է այդ դպրոցների կահկարասիների նորոգութեան համար։

ԴԱՍԱԳՐՔԵՐ

Գաւառի տեսուչ պ. Եդգարեանը, 14 Դեկտ. 1944 թ. նա-

մակով մեզ յայտնում է.—«Դասագրքերի գալի պակաս կայ գաւառում, տեսնում ենք մի դասարան ունի 10—12 աշակերտ և միայն 2 պատուած, կամ աւելի ճիշտն ասած գործածութիւնից ընկած դասագրքեր»։ Այս անմխիթար կացութիւնը վերացնելու դիտումով, անմիջականօրէն նամակներ գրեցինք Թաւրիզ ու Թեհրան մեզ ծանօթ աղբիւրներին շուրջ 500 դասագրքի պատւէր տալով։ Թեհրանի պատասխանը նշում է թէ 1944—45 թուականի ուսումնական տարին լրանալու պատճառով, առայժմ հնարաւորութիւն չունեն մեր փափագած դասագրքերը հայթայթելու։ Ինչ որ կար և կարող էին հայթայթել, ժամանակին յանձնել են տեղական դպրոցին։ Կայ միայն «Առաջին ընթերցարանը»...»։ Թաւրիզից դեռ պատասխան չի ստացուել»։

Քաղուած 1946—47 թ. Ընդհ. ժողովի զեկուցումից

Յաւ են յայտնում նոր մասնաճիւղեր չունենալու համար. անդամները պակասում են, կենտրոնում ունեն միայն 160 անդամ-ուհիներ. կանանց յանձնախումբը լայն աշխատութիւն է ցոյց տուել

Շահ ունեցել են՝

17 Սեպտեմբեր 1947 թ. թէյասեղանից 24,970 ռիալ

28 փետրու. 1948 թ. տարազահանդէսից 50,000 »

Հնդկահայերը մերժել են օգնել գիւղերին, առարկելով՝ ներգաղթելու են միւս գիւղերի հայերն ևս։

Պարոն Ա. Երեմեանը իր 4 Մայիս 1947 թ. բացիկով յայտնում է՝ Զհարմհալի պատմութեան գրքի ծաւալը 1000 էջ է լինելու, իսկ տպագրութեան ծախսը՝ 60,000 ռիալ, ուստի որոշում է չտպագրել նրա աշխատութիւնը և, համաձայն նրանց միջև կնքուած պայմանագրի, յետ ստանալ ձեռագիրը յիշեալ պարոնից։

1949—50 թ. Զեկուցումից

Անդամ-ուհիների թիւը մօտ 290 է. մասնաճիւղերն ունեն 130 անդամ։ Նոր-Ջուղայի մասնաճիւղը սոյն տարեշրջանում լիազօրութիւն չունի։

1949 թ. Փետր. 21-ի երեկոյթից մուտք	1884	ռիալ
Մարտ 17-ի պարահանդէսից	20,000	»
Ապրիլ 21-ի երեկոյթից	3,337	»
Վիճակախաղից	17,120	»
Յուլիս 28-ի պարահանդէսից	14,000	»
Պարսից կրթ. նախարարից նէր	1,000	»
Սոյն տարեշրջանի ընդհ. մուտքն է	303,897	»
Ելք	99,236	»
Բանքում ունեն	250,463/75	»
Կանխիկ	23,032	»

Մի հատուած «Ալիֆ» օրաթերթի 1952 թ. Ապրիլ 11 համարից

«...Զհարմհալի Հայ Ուսումնասիրաց Միութիւնը, որին անդամակցում են Իրանի զանազան քաղաքներում և գլխաւորաբար Խուզիստանում վերաբնակուած 500 հայրենակիցներ, երկու տասնամեակից իվեր նուիրուած է նոյն գաւառի գիւղական համայնքների կրթական գործին։ Միայն այս տարւայ ընթացքին, ինչպէս տեղեկանում ենք մի մասնաւոր աղբիւրից, Զ. Գ. Ուսումն. Միութիւնը վերոյիշեալ գաւառի գիւղական դպրոցներին յատկացրել է 30,000 ռիալ, վճարելով օգնուցիչների ռոճիկը և հայթայթելով գրենական պիտոյքներ ու շէնքերի նորոգութեան ծախսերը»։

ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆ. ՄԻՈՒԹԻՒՆԻՑ

Զ. Գ. Հայ Ուս. Միութիւնը 1957 թ. հրատարակեց «Պատմութիւն Զհարմհալ գաւառի Հայ Ուսումնասիրաց Միութեան 1930—1955» թ.

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Զհարմհալ գաւառի Հայ Ուսումնասիրաց Միութեան 24-րդ տրջանի կենտրոնական Վարչութեան բարոյական եւ նիւթական գործունեութեան

16 Փետրուար 1961—22 Մարտ, 1962 թ.

Աբադան, 26 Ապրիլ, 1962 թ.

Միութեանս Ծրագիր-Կանոնագրի վերամշակումով, նրա հիմնական նպատակի վրայ աւելանում է նաև հետեւեալ երկու կէտերը.—

ա. Սատար հանդիսանալ հայապահպանման և մատաղ սերնդի հայեցի դաստիարակութեան, նիւթապէս ու բարոյապէս օժանդակելով մասնաճիւղերի տեղի հայ դպրոցներին։

բ.— Հնարաւորութեան սահմաններում օժանդակել բացառիկ ընդունակութիւն ունեցող, ծագումով չհարմբհալցի և չքաւոր այն ուսանողներին, որոնք ցանկութիւն և արժանիքներ ունեն հետեւելու բարձրագոյն ուսման և պաշտօնապէս յանձնառու են լինում ծառայելու՝ հայ մշակոյթին իրենց կրթութիւնը լրացնելուց յետոյ։

Ընդհանուր կանոնների տակ՝ 63-րդ յօդւածով ճշտուած է, որ Միութիւնը կարող է ունենալ իր կենտրոնատեղին։ Այս յօդւածի նպատակն այն է՝ որ Միութեան հիմնադրամի շահագործումով, ձեռնարկների հաստատութիւնով և այլ միջոցներով Մասնաճիւղերի համագործակցութեամբ Միութեան Կենտրոնատեղի Տան ֆոնտ հիմնել և կենտրոնատեղի ունենալ Թեհրանում հետեւեալ նպատակներն հետապնդելու համար.—

1. Միութեան արխիւներն փրկել աստանդական վիճակից։

2. Յարգելի դարձնել Միութիւնը հասարակութեան առջև։

3. Միութեան հետ կապել խաղերի ու մարզանքների հետեւող պատանիներին։

4. Թեհրան եկած երիտասարդութեան հասարակութեան հետ կապելու միջոց տալ, և հասարակական աշխատանքի ասպարէզ բացել նրանց առաջ։

5. Հանդիպումի վայր դարձնել այդ տունը երիտասարդութեան, նրանց յետ պահելով այլասերման վտանգից։

6. Ստեղծել համագաւառացիների մօտ սրտամօտ մթնոլորտ, և նրանց նիւթական զոհողութիւնների փոխարէն, տալ հոգեկան բաւարարութիւն։

7. Ժողովների ու ձեռնարկների համար միայուն տեղ ապահովել։

8. Զարգացնել անդամներին և երեսն հանել թագուն շնորհքներ։

9. Օգտուել արուեստագէտ—մտաւորականներից, ելոյթի առիթ ընծայելով նրանց։

10. Եւ վերջապէս ստեղծելով մի օջախ, նրա շուրջ համախմբել Հայ ոգու և լեզուի նուիրեալներ և ծառայել հայապահպանման։

Խնդրահարցման դեպքերի թիվը գաստրոնոմիական ապրանքների մասնագիտացված խանութներում 11

Գիրք	1960—61 Ուսումն. տարի									1961—62 Ուսումն. տարի								
	Ընդամենը	Հանձնարարված	Ուսանող-ների թվաքանակ	Ս.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Զ.	Ընդամենը	Հանձնարարված	Ուսանող-ների թվաքանակ	Ս.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Զ.
Մատուցում	52	9	3	9	5	3	9	5	9	36	3	4	5	3	6	3	2	10
Հաշվարկում	18	—	2	4	4	2	—	1	5	9	—	1	2	1	1	1	3	
Սիրուն	8	2	—	3	2	—	1	—	—	9	1	3	—	2	2	1	—	—
Ընդամ.	78	11	5	16	11	5	10	6	14	54	4	8	7	6	9	5	5	10

Ա. Մարդասիրական դեպքերը, նեղությունները չեն ցուցադրվել,

Բ. Ամբիոնի և վերմշակման լաշտերների դասընթացներում սխալներ չեն թույլատրվել,

Գ. Ուսանողներին կատարված դիտողությունները 1961 թ. դեկտեմբեր, դարձյալ 6 անգամ է կրկնվել։

Ամփոփ. — Ս. Մարտիրոսյան։

դասընթացների կազմը և ուսանողները

12. Գաստրոնոմ ուսանողների կազմը

Գիրք	1960—61 Ուսումն. տարի			1961—62 Ուսումն. տարի		
	Ուսուցիչների թվաքանակ	Դասընթացների թվաքանակ	Լսող ուսանողների թվաքանակ	Ուսուցիչների թվաքանակ	Դասընթացների թվաքանակ	Լսող ուսանողների թվաքանակ
Սիրուն ճաշակ	» բերան դարձ	5000	53000	Օր. Բեն դարձ Ղանամալյան		74500
Լեռնային	» Մարգարիտ Տեր-Սարգսյան	19000	10000	Օր. Ալմաստ Ղանամալյան		10000
»	» Հայաստանի Փոքրիկ Յովսեփյան	15000	19000	» Մարիետա Ավետիսյան		22500
Մատուցում	Օր. Մարգարիտ Յովսեփյան	14000	23000	Կանգնեցնող տարեկան փոխարինում	Օր. Լեոնիդ Ասլանյան	23000
Կիսկիսի	Ուսուցիչների թվաքանակ	Դասընթացների թվաքանակ	Լսող ուսանողների թվաքանակ	Ուսուցիչների թվաքանակ	Դասընթացների թվաքանակ	Լսող ուսանողների թվաքանակ

1961 թ. Ամանցնկնի — Մարտիրոսյան դեպքերը։ Ամբիոնի դասընթացներ։ Բարդությունները, դարձյալ 1 թվի դեպքերը։

ՏԵՂԵԿԱՆՔ

Ներկայումս սփիւռքահայութիւնն ամենուրեք կառչած իր Ազգային աւանդութիւններին, սովորութիւններին ու ժառանգած բարձր մշակոյթին, աւելի քան երբէք իր բոլոր կազմակերպութիւններով և մարմիններով Հայը հայ պահելու մտահոգութեամբ, աշխատանքի է լծած անսասան պահելու մեր գոյութեան գրաւականը հանդիսացող, Լոյսի ու Յոյսի Սրբոյ տաճարներ՝ Հայ Եկեղեցին ու Դպրոցը։

Նոյն մտահոգութիւններով ու հետևողականութեամբ 1930-ին մի քանի չհարմհալցի երիտասարդներ հիմք են դնում Չհարմհալ գաւառի Հայ Ազ. Միութեանը, որը 33 տարիներ շարունակ լծած իր ծննդավայրի կրթա-ուսումնական գործին, առանց ընկրկումի և ընդհատումի ծառայել է իր որդեգրած նպատակին և իր շուրջը համախմբելով բազմաթիւ անդամ-ուհիներ, ստեղծել է համագործակցութեան ու համերաշխութեան մի ջերմ ու հարազատ մթնոլորտ։

Միութիւնը տարիներ շարունակ իր ուսերի վրայ է տարել աւելի քան 9 հայ գիւղերի ուսումնա-կրթական, և առողջապահական գործը, որը շարունակում է դեռ։ Բայց հանգամանքների բերումով գաւառը դատարկուել է ու այս օր, միայն երեք գիւղեր են մնացել նրա խնամքին, այն էլ ցանցառ բնակչութեամբ, որը որպէս գործունէութեան գլխաւոր ենթահող չի բաւարարում միութեան հետապնդած նպատակին։ Հետևաբար.

Հայապահպանման գործին աւելի լայն չափով ծառայելու ցանկութեամբ, վերամշակման է ենթարկուում Միութեան Ծրագիր-Կանոնագիրը՝ ըստ ստեղծուած պայմանների, որի վերջնական վաւերացման ու հաստատման համար 1962-ին գումարուում է Միութեան Պատգամաւորական ժողովը՝ մասնակցութեամբ բոլոր մասնաճիւղերի (եօթ շրջաններից)։

Պատգամաւորական ժողովը համարեա միաձայնութեամբ, վաւերացնում է վերամշակուած ծրագիր-կանոնագիրը, ըստ որի, մնացած երեք գիւղերի ուսումնական գործին զուգընթաց, այուհետև միութիւնը իր համեստ միջոցներով և հնարաւորութեամբ ծառայելու է հայապահպանման վեհ գործին։ Ու աւելի լայն ծաւալով սպասարկելու բուռն ցանկութեամբ։ Պատգմ. ժողովը որոշում է կայացնում Միութեան Կենտրոնատեղին հաստատել Թեհրանում, ուր կենտրոնացած է իրանահայութեան ճնշիչ մեծամասնութիւնը։

Հիմնելիք Կենտրոնատեղին, Միութեանը յենարան, եկամուտի աղբիւր և միութենականների հաւաքավայրը լինելուց առաւել, դառնալու է հայկականութիւն ներշնչող մի համեստ, բայց հարազատ ու մտերմիկ մի օջախ, յատկապէս երիտասարդ սերնդի համար, որին հնարաւորութիւն և առիթ է տրուելու իրեն հետաքրքրող նոթոյթների, խաղերի, մարզանքների, դասախօսութեանց, ընթերցանութեանց և այլ ձեռնարկների շնորհիւ աւելի ևս կապուել Հայ Մշակոյթին ու Հայ կեանքին։

Գործնականի անցնելով Պատգմ. ժողովը նկատի առնելով միութեան նիւթական համեստ միջոցները, չորս հարիւր հազար ռիալի մի յատկացում է կատարում, որպէս կենտրոնատեղիի ֆոնդի հիմնադրամ, որի լրացման համար համապատասխան կոչով գործի է հրաւիրում բոլոր մասնաճիւղերին։ Ապա յանձնարարում ընտրել համապատասխան մի մարմին Թեհրանում։

1962-ի Ապրիլին ընտրուում է Միութեան Կենտրոնատեղիի Շինարարական յանձնախումբը հետևեալ կազմով՝

Պրն. Սուքիաս Կարապետեան (նախագահ)

» Բարդուղ Բարդուղեան (փոխ նախագահ)

» Մարտիրոս Աբդալեան (քարտուղար)
» Սիմէոն Բաբուէեան (գանձապահ)
» Սիմէոն Աւետիսեան (Կենտ. Վարչ. Ներկայաց.)
» Մնացական Մաղաթեան (մասնաճիւղի Վարչութեան ներկայացուցիչ)
» Ամոս Աջաբեան
» Մկրտիչ Մարտիրոսեան
» Յովհաննէս Տ. Սարգսեան
» Անդրանիկ Անդրէասեան
» Հայկազ Ստեփանեան

Ֆոնդի ապահովութեան համար Կենտ. Վարչութիւնը և Շին. Յանձնախումբը ցայժմ սահմանափակւել են միայն ու միայն միութեան անդամ-ուհիների նուիրատուութիւններով։ Թեհրանի մասնաճիւղի աշխատանքները թողնելով Շին. Յանձնախմբին, իսկ մնացեալ վեց մասնաճիւղերի գործը՝ կենտրոնական վարչութեան։

Նուիրատուութիւնների աշխատանքները սկսւել են 1962-ի Օգոստոսից և ընթացքի մէջ են։ Այս աշխատանքին համընթացք Շին. Յանձնախումբն զբաղւել է նաև յարմար մի հողամաս գնելու գործով, որը լիապէս յաջողւել է և արդէն իսկ գնւած է 920 քառ. մետր տարածութեամբ մի հողամաս հայաբնակ շրջանում, Թախտէ Թաւուս պողոտային կից։

Մինչ այժմ միայն Թեհրանում մեր միութենականներից շատերը սիրով ու գնահատելի նուիրումով ընդառաջել են միութեան կոչերին և արձանագրել իրենց յանձնառութիւնները, որով յայտնում ենք մեր սրտագին գնահատանքն ու շնորհակալութիւնները։

Լիայոյս ենք, որ հայապահպանմանը նախանձախնդիր իւրաքանչիւր հայ, նկատի առնելով միութեան ընդհանուրին, մասնաւորապէս հայ մատաղ սերնդին ծառայելու իր այս յօժարակամ պատրաստակամութիւնը, իր բարոյական և նիւթական աջակցութեամբ կը քաջալերի ու կը խրախուսի սկսւած գործը։

Զարմ. Ուսուցասիրաց Միութեան
Շինարարական Յանձնախմբի
Նախագահ՝ ՍՈՒՔԻԱՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Քարտուղար՝ ՄԱՐՏԻՐՈՍ ԱԲԴԱԼԵԱՆ

ԲՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

Բնութեան պատահարները յաճախակի կրկնւել են Զհարմահալ գաւառում և հայերը գաւառ հասնելու օրից ենթակայ են եղել այդ պատահարներին։ Մեր ժամանակի ծերունիները միայն յիշում են 1870 թ. սովը, մի քանի անգամների երաշտը և անասունների ժանտախտը ու պատմում են մանրամասնութիւններ, սոսկալի պատկերներ և տխրալի զէպքեր։ «Օխտը տարի անձրև չեկաւ, ցորեն չէր ճաքւում, մարդիկ իրարու ձեռքից հացը խլում ու փախչում էին, շատերը քաղցից մեռան, ամեն անասունի միս, հալալ թէ հարամ, ուտում էին, բանջարեղէնն էլ պակասել էր ու անասունները անկեր էին մնացել»։ Վերոյիշեալ տարիների սրտաճմլիկ պատկերը տակաւին խեղճ գաւառացիների աչքի առջևն է, որի համար էլ դեռ նա երգում է Ֆարսերէն լեզուով մի երգ.—«Սալ բորօ քե բար նագնարդի...» — Տարի գնա, էլ յետ չգաս...

Դժբախտ ժողովուրդը համբերութեամբ տարել է այսպիսի սոսկալի օրեր առանց արտաքին օգնութեան, յետոյ աստիճանաբար բարեփոխւել է նրանց կեանքը ու կրկին զարկ են տւել իրենց հողագործական միակ աշխատանքին։

Այստեղ աւելացնենք միայն վերջին մի քանի սև տարիների պատկերը։ 1946 թւականին ցուրտը փչացը-

նում է Զհարմհալի հունձքը։ 1917 թ. սարսափելի մորեխ է գալիս և ուտում հացահատիկները, այգիները, կանաչութիւն ու բուսականութիւն։ Աշնանը մորեխը «քոռ» (ձագ) է դնում, իսկ յաջորդ գարնան ձագն է երևում, որ իր բազմութեամբ սնացնում է դաշտ ու ձոր և ուտում ամբողջ բուսականութիւնը, որի պատճառով գաւառի ժողովուրդի դրութիւնն աւելի է վատթարանում։ Գործող ձեռքերը դիմում են պանդուխտութեան, մնում են միայն ծերեր, կանայք և երեխաներ։ Սաստկաշունչ ձմեռւայ հետ իրենց սև օրերն են քարշ տալիս ու սպասում գարիբնեբի վերադարձին ու մի կտոր հացի։ Տնեղէն, տաւար և ուրիշ պիտանի առարկաները բոլորը ծախել՝ ու լիտրը 35—40 ռիալով հացահատիկ գնել, ոմանք էլ իրենց այգիները դրաւ դրել ու մի քանի լիտր պարտքով ցորեն վերցրել։ Տարբերութիւն չէին դնում հացահատիկների ընտրութեան մէջ, թշուառ սովահարները գնում և ուտում էին ինչ էլ որ գտնէին, մինչև անգամ դառն սերմերը օրերով ջրում պահում էին, ապա եփում ուտում, իսկ գարնան կերակրւում էին գլխաւորապէս վայրի բանջարեղէններով։

Օտարութիւն գնացողներից շատերը գարնանը վերադարձան հիւանդ։ Խուզիստանի և Բասրայի շրջանում եղողներից ոմանք մեռան սաստիկ խօլերայից, մի մասն էլ անսովոր այդ շրջանի կլիմային, դարձան հիւանդ ու տկար, բերելով իրենց հետ մի չնչին դրամ, իրենց ընտանիքի մի քանի շարաթւայ հացը։ Գիւղերում էլ եղան սովամահներ, սակայն ժողովուրդը «մի կերպ ապրեց» մինչև նոր հունձքի ձեռք գալը։

Սովի ժամանակ որոշ չափով օգնեցին գիւղատէրերը։ տալիս էին «մուսադա» (նպաստ), որպէսզի առատ տարիներում գանձեն հողագործներից։

1918 թ. Զհարմհալում երևում է անասունների ժանտախտը (գովմարգին) ոչնչացնում է անասուններին և միանգամայն քայքայում գիւղացիների տնտեսական վիճակը։ Յաջորդ տարին բաւական լաւ հունձք են ունենում, սակայն ցորենի արժէքը ընկնում է, որի պատճառով էլ խեղճ գիւղացին չի կարողանում հատուցանել սովի և «գովմարգու» տարիների մնացած պարտքերը, որոնք իրենց տոկոսով օր աւուր աւելի են ծանրաբեռնում խեղճ գիւղացու ուսերը։

Զհարմհալ գաւառի ժամանակի գրագէտներից մի քանիսը երգեր են յօրինել սովի, ժանտախտի և իրենց կրած այդ օրերի տառապանքների մասին. հրատարակում ենք միայն պ. Արշալոյս Տէր-Յովհաննիսեանի շարադրածը, միւսները գրեթէ նոյն բովանդակութեամբ էին և առանձին արժէք չեն ներկայացնում։

ՍՈՎ

Հազար ինն հարիւր տասնվեց թուին
Սաստիկ հարուածներ տիրեց մեր երկրին,
Երկինք չտուեց անձրև ու քամին,
Գետինն էլ կտրեց իր բոյսն ու բարին։

Ցամքեց գետեր, աղբիւրի ջրեր,
Զորացաւ ցանած սերմերի բոյսեր,
Ծաղկից զրկւած մնացին սարեր։
Օ՜հ, դարձաւ մոխիր մարդեր, արօտներ։

Մտածում ենք վատ հետևանքը,
Նայելով դէպի Զարիս ու Ֆալաքը։ (բախտի անիւ)
Տեսանք մարախին, իր արշաւանքը
Եւ ապագայէն խիստ հալածանքը։

Նրա բազմութեամբ օդը բռնւեց,
սար ու ձոր համայն, դաշտը ծածկւեց,

Որտեղ սր նստեց՝ էլ չը շարժեց,
Մինչ բոլոր բերքից գետինը մաքրեց։

Մարդուն տեսնելիս դաշտում կամ հանդում,
Անվախ, աներկիւղ վրայ են թափւում,
Բաց տեղը մարմնի արագ կծռռում,
Հացը սեղանից խլում են ուտում։

Օ՜հ, այդ տեսնելիս՝ սարսափ է տիրում.
Խեղճ մարդը անբախտ օրերն է սգում,
Թէ ի՞նչ պիտ տեսնէ իր թշւառ կեանքում։
Աշխարհ տակն ու վրայ, կամ իրարանցում։

Ինպառ չքացաւ ուտելու պաշար,
Զենեցին եղ, կով, ոչխար շարիշար,
Հարուստներ ընկան աղքատների շար.
Աւելի դառն, սաստիկ չարաչար։

Մարդիկ շարժւեցին յերկրէ ի յերկիր,
Հաց որոնելու եղան ուխտագիր,
Շատեր գնացին դէպի Գեարմասիր.
Օ՜հ, որքան կորան առանց վերնագիր։

Ի՞նչ պիտի անէ տնանկ եղածը,
Որ վերջացրել է իր ունեցածը,
Չի կարող գործել ձեռքի եկածը,
Մուրալ կամաչի, կըսկսի լացը։

Սովը սաստկացաւ ահռելի կերպով,
Խալար ցորենը ծախւեց այս գնով,
Ահա մի հարիւր վաթսուն թումանով.
Այն էլ չէր ճարւում ոչ մի տեղ լտրով։

Էլ հաց չմնաւ շատերի բերան,
Քանի ամիսներ միայն խոտ կերան,
Ոմանք վհատւած ու թափառական,
Ծանր ցաւերով իջան գերեզման։



Պարոն Արշալոյս Տէր-Յովհաննիսեանի գեղարուեստը.— Սոյն տիպը նկարել է 1925 թ. շրջանում, որին ուշադրութիւն դարձրեց Էջմիածնի կենտրոնական գրադարանի ծաղիկ է մատրիր, Ցնորամիտ Ս. սը ամայ ջամայ Արշալոյսը կամ Նիկոմեդիայ ս ատեգրամ իսանդրով, լեվոնեան մատենադարանի բան վանդակ չէ մեր, Ա. քան.

Սովը վերջացաւ, մահը չքացաւ,
Բերքը շատացաւ, կեանքը զօրացաւ,
Չարը հեռացաւ սէրը բազմացաւ,
Նեղութիւնն անցաւ, լայնը մօտեցաւ»:

Մի խումբ Զհարմհալցի դիտակից երիտասարդներ, որոնց գլխաւորում էին՝ պ. Մ. Տէր-Սարգսեանը, պ. Աբշալոյս Տէր-Յովհաննիսեանը և պ. Ծատուր Սարգսեանը նման ցաւալի երևոյթների առաջն առնելու համար 1919 թ. կոչ են ուղղում գաւառի բոլոր գիւղերին՝ գաւառի անունով կազմելու մի համայնական վարչութիւն

Ահա այդ կոչը.

«..... գիւղի Արժանապատիւ քահանաներին,
Մեծապատիւ Քեալանթարներին և
Յարգելի հասարակութեան

Մենք, տեսնելով ու զգալով, թէ քաղաք և թէ գաւառի ամեն տեղ տեսակ-տեսակ կարգեր ու կանոններ կան, թէ իրենց պաշտպանութեան և թէ բոլոր ազգային խնդիրների վերաբերեալ գործերի համար։ Եւ ինկատի ունենալով այն հանգամանքը, որ միայն Զհարմհալն է, որ աննախանձելի դրութեան մէջ է գտնւում. ամենայն մասամբ, թող մի փոքր սթափւենք և իմանանք թէ մարդկային սերնդի մէջ մենք ո՞ր աստիճանի ենք ընկած և ի՞նչ նողկալի դրութեան մէջ ենք։

Այն, ինչ որ մարդկայն մտքերից վեր է և մեր ձեռքը չի հասնի՝ այն ոչինչ, թող գոնեայ մեր ձեռքի եկածն անենք։ Ահա թէ ինչ է ցոյց տալիս մեր ցանկութիւնը։

Մեր նպատակն այն է, որ կազմւի մի միութիւն ամբողջ Զարմահալում և նոյն միութիւնը գործի ազգային՝ հարկ եղած դէպքերում. իհարկէ իր ուժերի ներածին չափ և ըստ արժանեացն։

Ա.—Դիմում անել այն ժամանակ, երբ մարդիկ նեղ

վիճակի մէջ են գտնւում և սովամահ լինում։

Բ.—Հոգ տանել եկեղեցական հաշիւներին։

Գ.—Աշխատել որ Զհարմհալի դպրոցները փակ չմնան։

Դ.—Մտածել բժշկի մասին և այլն»։

Սոյն դիմումը մնաց անհետևանք և երբէք Զհարմհալի ժողովրդի համար. երբէք «Համայնական Վարչութիւնը» չկազմւեց շնորհիւ գաւառացիների անհամերաշխութեան։

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Լուսինը տաղ է, նա չէ վախենում, շրջում է դիշերը։ իսկ արևը աղջիկ է, մօր տւած մի բուռ ասեղներով ծակում է իրեն նայողի աչքերը, ասում է Զ. Գ. Հայ ժողովուրդը։ Արևի կամ լուսնի խաւարումները վերագրում են «չարքեր»ին, որոնք մեծ խմբերով հաւաքւում են, դէմ են ընկնում արևին կամ լուսնին և խանգարում լոյսը։

Լուսնի վրայի բծերը՝ դիմագիծն է ցոյց տալիս։ Ամեն մի «պոչ քաշող» աստղի հետ մեռնում է մի մարդ։ Դարման գողը երկնակամարում մի շարք աստղեր են։ Գիսաւոր աստղը պատերազմ է նշանակում։ Կայծակ իջած մարդու գաւակները վէրքեր բժշկելու զօրութիւն են ստանում։ Նրանք չախմախով ու չախմախքարով (գայլախազ) կայծ են արձակում գանազան վէրքերի վրայ, որով ժամանակի ընթացքում «բժշկւում են վէրքերը»։

Երկիրը գունդ է, մի եզան պոզի վրայ է հենւած, երբ եզը յոգնածութիւնից ուզում է փոխի գունդը՝ մի պոզից միւս պոզը, առաջանում է երկրաշարժ։

Ա Շ Ո Ի Ղ Ն Ե Ր Ը

ա. Աշուղ Յարութիւնի.— Զհարմհալի Հայ աշուղներից ամենատաղանդաւորն ու հռչակաւորն է Աշուղ Յարութիւն

օղլին (Յովհաննէս Յարութիւնեան), որը մի յատուկ տեղ է գրաւում հայ աշուղների պատմութեան մէջ։

Նա ծնուել է Զհարմհալի Ասադաբադ գիւղում 1760 թ։ Մի առ ժամանակից յետոյ ծնողների հետ անցել են Ահմադաբադ գիւղը և զբաղուել հողագործութեամբ։ Զմեռային եղանակներին նա յաճախել է գիւղի խալիֆայական դպրոցը՝ ժամանակի քահանաներին աշակերտելով, սակայն որպէս մի տաղանդաւոր և աշխատասէր աշակերտ, միշտ առաջնակարգ տեղ է ունեցել իր դասընկերների մէջ։ Այսքանով վերջանում է նրա դպրոցական կեանքը։

Յարութիւնը դեռ պատանի հասակից, սիրել է աշուղական արուեստը. աշակերտել է ժամանակակից վարպետների մօտ և շուտով հմտացել՝ անգիր տնելով բաւական թւով երգեր ու սոհրաթներ։ Նա երազում տեսնում է Ս. Կարապետին և վճռում է գնալ ուխտի, որպէսզի աշուղական շնորհք ստանայ ու այդպէս էլ անում է։ Նախ գնում է Ս. Էջմիածին, ապա Ս. Կարապետ, որտեղ կատարում է իր փափագը և կրկին երազում Ս. Կարապետը մի բեռ կորեկ տալիս, որ շալակած բարձրանայ սարը։ Թէ ինչքան է տևում նրա Ս. Էջմիածին և Ս. Կարապետ գնալն ու վերադարձը՝ յայտնի չէ, միայն ծերունիների պատմութեան համաձայն, այսքանը գիտենք, որ նա Ահմադաբադից մեկնում է աշնան կէսերին և վերադառնում է գարնան վերջերին, իր հետ բերելով սաղաֆէ խաչեր, որոնք նուէր է տալիս իր ազգականներին ու բարեկամներին։ Այնուհետև շարունակում է իր արուեստը, ձեռք առնում չուանդուրը, Երգեր է յօրինում և սկսում է շրջել գիւղից-գիւղ, քաղաքից-քաղաք և գաւառից-գաւառ։ Նա մրցում է շատ աշուղների հետ և միշտ յաղթող հանդիսանում։ Մրցել է նաև սանդիբարանցի տաղանդաւոր երգիչ – քահանայ՝ Տէր-Կարապետ Օհանեանի հետ և մրցանակը շահել, սակայն զղջացել է իր կոպիտ պատասխան-

ների համար և ներողութիւն խնդրել – «Ինչ լաթում վար իւզնդան» խօսքերով, քանի որ նա՝ Տէր-Կարապետը քահանայ էր։

Նա ունի մի դաֆթար, որի մէջ նա հաւաքել ու պահել է իր երգերը, թէ հայերէն և թէ թուրքերէն։ Այս տետրակը այժմ գտնուում է նրա թոռ՝ Յարութիւն Աշուղեանի մօտ[1], Մամուքա գիւղում։ Նրա երգերից յայտնուում է, որ ծանօթ է եղել պարսից բանաստեղծների գործերին՝ Սաադիի, Հաֆեզի, Ֆէրդովսու և ուրիշների։

Յարթուն օղլին ապրել է 80 տարի և վախճանել է Մամուքա գիւղում։ Մահուանից առաջ նա զգում է, որ մահը մօտենում է, կանչում է իր եղբայրներին և հարազատներին, ձեռք է առնում չուանդուրը, նւագում է և երգելով իր վերջին օրհնութիւնը տալիս իր հարազատներին, որից յետոյ կնքում է իր մահկանացուն։ Նրա գերեզմանը Մամուքա գիւղի հին հանգստարանի արևմտեան կողմումն է, որի վրայ դրուած է մի անտաշ տապանաքար։

բ. Աշուղ Ալպահվերդի. – Ծնուել է Զհարմհալի Լիվասիան գիւղում 1820 թ։ Գրել-կարդալ սովորել է իրենց գիւղի քահանայի մօտ և աշակերտել ժամանակի յայտնի աշուղ Յարութուն օղլու մօտ. սովորում է աշուղական արուեստը. Գնում է Ս. Կարապետ ուխտի, որ իր մուրազին հասնի. վերադառնում է հայրենի գիւղը և ամուսնանում։

Աշուղական արուեստով նա շրջում է զանազան քաղաքներ, գնում է մինչև Կովկաս, Բաղդադ, Բասրա և այլ տեղեր ու կրկին վերադառնում է։ Աշուղը ականատես է լինում 1866 թ. երկրաշարժին, 1880 թ. թանգութեան և երգի նիւթ դարձնում այդ դէպքերը, որոնք կան իր երգերի շարքում։

---

1) 1946 թ. հրատարակեց պ. Կարօ Աշուղեանը իր ծախսով։

Վախճանուում է 90-ական թուականներին, մարմինն ամփոփած է Վերին-Քոնարք գիւղի հանգստարանում։

Նա ունի մի դաֆթար գրած իր ձեռագրով, բաղկացած է 36 քառածաւալ թղթից և պարունակում է 38 հայերէն երգեր և 21 թուրքերէն։

Այս դաֆթարը գտնուում է բանասէր պր. Ա. Երեմեանի մօտ։ (Տես պ. Ա. Երեմեանի «Պարսկահայ Նորագոյն աշուղներ» էջ 27)։

գ. Աշուղ Աւետիք Յովհաննիսեան.—Ծնուել է 1860-ական թուականներին Փերիա գաւառում։ Երիտասարդ տարիքում նա իր ընտանիքը փոխադրում է Զհարմհալի Հաջիաբադ գիւղը և զբաղուում հողագործութեամբ։ Աշուղական արուեստը սովորել է այս ու այն ժամանակակից վարպետների մօտ։ 1913 թ. աշնանը երեք հոգի իր համագիւղացիների հետ ճանապարհուում է Ս. Կարապետ ուխտի։ Նախ գնում են Ս. Էջմիածին, ընկերներից երկուսը վերադառնում են այնտեղից, ինքն ու միւս ընկերը՝ Յակոբ Ամբարչեանը (յետագայում Եսայի վարդապետ) գընում են Ս. Կարապետ և Ս. Երուսաղեմ։ Աշուղ Աւետիքը մի կարճ ժամանակ մնում է այնտեղ, ուր և կնքում է իր մահկանացուն։

Նա զուրկ էր կրթութիւնից, բայց գիտէր բաւական թուով հայերէն և թուրքերէն երգեր ու պատմութիւններ (սօհբաթներ)։ Հմուտ նուագող էր որով և ուրախացնում էր իր շրջապատողներին և ունկնդիրներին։

դ. Աշուղ Մատթէոս Նորաւեան.—Ծնուել է Զհարմըհալ գաւառի Լիվասիան գիւղում 1875 թ.։ Պատանի հասակից նա իր զարգացասիրութիւններով ուրախացնում է գիւղի խնջոյքներն ու հանդէսները, հաջող ձայնով երգում է հայերէն ու թուրքերէն երգեր։ Ապա ուշադրութիւն է դարձնում չունդուր սովորելուն, ժամանակի այս

կամ այն վարպետների մօտ վարժուում է նուագելու արուեստը. թէև բոլորովին անդրադէտ, բայց տաղանդաւոր մի երգիչ է դառնում։ Քսան տարեկան հասակից մինչև մահը նա անընդհատ անցնում է իր սազից և շրջում է գանազան գաւառներ ու քաղաքներ, ինչպէս նաև Բախտիարի, Ղաշղայի, Լարիջի, Բօյրահմադի և այլ վրանաբնակ ցեղերի մէջ մի խօսքով շրջում է գրեթէ ամբողջ Պարսկաստանը և ամեն տեղ իր սազով ու երգով ուրախացրել է։

Աշուղ Մատթէոսը առաջին կնոջից ունեցաւ միայն մի արու զաւակ։

Ահա թէ ինչ էի գրել նրա մահուան պատճառով «Ալիք» օրաթերթում, 9 մարտ 1945 թ.։

ԱՇՈՒՂ Մ. ՆՈՐԱՅԵԱՆ

1941 թ. Սեպտ. 7-ին իր մահկանացուն կնքեց Զըհարմհալի վերջին աշուղ Մատթէոս Նորաւեանը, իր ծնընդավայր՝ Լիվասիան գիւղում։

Հանդուցեալը միանգամայն զուրկ էր կրթութիւնից, սակայն բնատուր տաղանդի շնորհիւ՝ անգիր գիտէր բաւական թուով երգեր, հէքիաթներ կամ սօհբաթներ. «Քեօր օղլի», «Թհար-Միրզա», «Բայեաթ-Միրզա», «Աշուղ-Ղարիբ», «Շեհրի-Մեհրի», «Արաբ-ուզանգի» և այլն։ Լեզուն սահուն էր և իր ազդեցիկ եղանակի պատճառով էլ, որ «մէջլիսում» աշուղ Մատթէոսը «սօհբաթ էր ասում», ամբողջ հանդիսականները լաւած ուշադրութեամբ էին լսում քաղցրահնչիւն չունդուրի և երգի միախառն ելեւէջները։

Ամբողջ 50 տարի շարունակ հանդուցեալն իր անընդհատ սազով շրջել է գիւղից-գիւղ, քաղաքից-քաղաք, նոյնիսկ Բախտիարի, Բօյրահմադի, Ղաշղայի և այլ ցեղերի մէջ ու ամեն տեղ զարգացրել իր «սօհբաթներով», Խորթութիւն ու խտրութիւն չկար նրա հոգում, որ տու-

նը որ մտնէր, թէ հայի, թէ պարսիկի և թէ այլ ցեղի, միևնոյնն էր իր համար, բոլորին հարազատ, բոլորին սիրելի։

Աշուղը միշտ զգում էր իր մէջ մի պակաս, այն է՝ կրթութիւնից միանգամայն զուրկ լինելը և նոյնիսկ գրել-կարդալ չգիտնալը. այս պատճառով էլ վճռում է իր սուղ միջոցներով, ամեն ջանք գործ դնել ու իր միակուճար զաւակին կրթել քաղաքի դպրոցում և հէնց փոքր հասակից նրան տանում է Նոր-Ջուղա և դպրոց տալիս։ Մխիթարական այն է, իր կենդանութեան օրով, աչքը բաց, տեսաւ որդուն դպրոցն աւարտած ու գործի մտած։

Հանգուցեալը իր մահւան ժամանակ կտակել է, իր ընկեր սազը հէնց իր հայրենի տան պատին կախած թողնել մինչև իր որդին օտարութիւնից վերադառնայ ու իր ձեռքով պատից իջեցնէ։

Հանգիստ իր աճունին։

Աւ. Եդգարեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Զհարմհալում առաջին անգամ 1905 թ. Լիվասիան գիւղի նշանաւոր ուսուցիչ՝ Սարգիս Յովհաննիսեանը և ուսուցչուհի՝ օր. Խաչատուն Էլիազեանը կազմակերպում են մի ներկայացում. դժբախտաբար ժամանակի աշակերտները, որոնք մասնակցել են այդ ներկայացմանը, չեն յիշում թէ ինչ անուն էր կրում այդ, միայն այսքանը են պատմում թէ բեմը ներկայացնում էր մի լերան ստորոտ, որտեղից բղխում էր մի աղբիւր և այդ աղբիւրի մօտ նստած հայ օրիորդը երգում էր «Պարզիր աղբիւր, խանի տղին ջուր տանեմ»։

Սրանից յետոյ միւս գիւղերն էլ հետևում են սրանց օրինակին և ամեն տարի ներկայացումներ կազմակերպում։ Հետզհետէ սիրող-ուհիների թիւը աւելանում է Զհարմհալում և յաճախակի թատրոններ ունենում,

Երաժշտական արուեստը մուտք չի գործել Զհարմհալում. ոչ մի ձայնագրադէտ չի եղել դաւառում, ամբողջ երգիչները մէկը միւսից սովորել է բերանացի. ոչ հայկական նոտաներ (խաղեր) և ոչ էլ եւրոպական նոտաներ։ Հոգևոր երգերն էլ եկեղեցիներում երգում էին շարականի վրայ առանց ձայնանիշները ճանաչելու։

Երաժշտական գործիքներից գործածական են՝ դհոլ, զուռնան, չուանդուրը, հաֆարանդը (սրինգ) և թմբուկը։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆ

Զհարմհալ գառառի հայ ժողովրդի մէջ այնքան էլ զարգացած չէ ժողովրդական բանահիւսութիւնը. պատճառը պարզ է, որ դարեր շարունակ կտրուած հայրենի հողից ապրել է մի մռայլ կեանք և որը հնարաւորութիւն չի տուել նրան օտար հորիզոնների տակ իր մշակոյթով, մանաւանդ բանահիւսութեամբ զբաղելու։

Ունենք փշրանքներ, որոնք հրատարակում ենք ստորև։

ԱՌԱԾՆԵՐ

Յինչուգ շուշանը զարդարի, ժամերը կարձակի.
Կատի խաղը՝ մկան մահը.
Կուժ քի ասեմ՝ փարչ դու լսէ.
Ես տղա, դու աղա, քա մեր աղունը ո՞վ աղա.
Պարտքը տալով, մեղքը լալով.
Ծուռ կանգրե, շիտակ խօսա (շիտակ գիվան արա).
Թան չէ, թացան չէ, ամեն մարդու բան չէ.
Գողը գողից գողացաւ, Աստուած վերեը զարմացաւ.
Պառաւը մեռաւ՝ տեղս լէնացաւ.
Ես եմ Ջաղացից գալիս, դու ես ասում փաստա չկայ.
Էշ հեծնելը մէ անում ունի, ցած գալը՝ երկու.

Շատ դատողին շալ շարիկ, քիչ դատողին զառ շարիկ.
Դուս քահանայ, տուն սատանայ.
Ցինչուդ երեխէն չլայ, մէրը ծիծ չի տայ.
Ցիրուշի հացով փոր չի կշտանայ.
Կերթայ սրի եարէն, չի երթայ լեզուի եարէն.
Օնչով իր թանին թթու չի ասի.
Աստծու պահած գառը գելը չի տանի.
Օձի խածածը ալա չանից կը վախենայ.
Աստուած թէ ագռաւին լսի, վարթիվորին ձուն կուգայ.
Օձը դաղցից կը փախչի, դաղձը օձի բնի առաջ կըբուսնի.
Շիտակ խօսողի գտակը ծակ է.
Եզը վեր ընդաւ՝ դանակաւորը շատացաւ.
Ձին ու ջորին կուեցին՝ էշը մէջտեղից գնաց.
Ծուռն ակոսը մենձ եզից է.
Աղուէսը բնի առջևը թոզ կանի.
Լաւ է ասեն գէշ, քան թէ ասեն էշ.
Մի ձեռը ծափ չի տայ.
Երես տաս՝ աստառ էլ կուզի.
Դանակը օսկոռին է հասի.
Անտէրի տէրն Աստուած է.
Կակուղ լեղուն օձը բնից կը հանի.
Ամեն ամպ դոռալուն՝ անձրև չի գայ.
Գիժը մէ քար գձեց հորը, հարուր խելօք չկարացան հանէին.
Կրակին բըզբըզես մուխը կը շատանայ.
Էշն ինչ գիտի մուշկն ինչ է.
Սևին սապոնն ինչ կօնի, խևին խրատը.
Էծն իրա մկըկալով գարուն կը հասնի.
Ուրաքն իրա կոթը չի տաշի.
Եզն իրա համար քխին չի վարի.
Քեզի մէ ասեղ տուր՝ դրկիցիդ մէ մախաթ.
Ամեն մարդ կրակն իր բաղջի տակն է քաշում.
Աղբսի դունչը հաղոդին չհասաւ՝ ասաւ նառաս է.

Հէրտէրն համիշա ձէթով գաթա չի ուտի.
Կովը մեռաւ, խաբը վերջացաւ.
Քամու բերածը՝ քամին կը տանի.
Եքքա քարով նշանին չես կարա տայ.
Մէ ձեռքով երկու ձմերուկ չես կարա բռնես.
Ըխտի խաղը կարմջին դուքայ.
Հոր ուշունցը տղի համար օխնանք է.
Արած լաւութունը չի կորչի.
Խաչը տէրը կը գօրաւորի.
Մանեն ման արած, պատին կախ արած.
Ճրագն իրա տակը լուս չի տայ.
Հացդ տնիցդ վեր կալ՝ հնդերդ գեղից.
Գեառոտ էծը վիրի աղբրից ջուր կը խմի.
Կտրուած հացը էլ իրար չի կպչի.
Դարտակ կարասը մենձ ձէն կը հանի.
Տան տիրոջն օրշնեա տէր չկայ.
Ցինչուկ չգայ յեղինը, չի յիշուի յառչինը.
Տէրդ մեռնի քաղցած գէլ, էշն էլ կերար՝ քուռակն էլ.
Ծուռը բեռը մանդզիլ չի հասնի.
Մեծ քարը չափելու նշան է.
Լաւութիւն արա՝ քցի ծովը,
ծովը չիմանայ՝ Աստուած կը հասկանայ.
Որդին էրթայ՝ հէրք հետը, դաղը էրթայ տէրը հետը.
Քեզի կը տանեմ ծովը՝ ծարաւ յետ կը բերամ։

ՕՐՀՆԱՆՔՆԵՐ

Աստուած քեզի շատ պահի։ Աստուած քեզի դայիմ ձեռով պահի։ Աստուած քեզի երդար ումբը տայ։ Շատ ապրես։ Ծլես, ծաղկես։ Զօրանաս, ծնունդդ օխնած։ Աստուած քեզի օշնի։ Օշնեես դու։ Ձեռդ համիշայ լիքն ըլնի։

Աստուած քեզի դաթ տայ։ Ձեռդ դալար մնայ։ Օղորմի հորդ։ Օղորմի մորդ։ Հացդ տաք ըլնի, ջուրդ՝ սառը։ Լաւ դովրան ունենաս։ Մենձ անուշի տիրանաս։ Աստուած քու հախկը տայ։ Ումքրդ շատ ըլնի։ Ինչ անեմ չունենաս։

Կանայք իրարու.—Ցաճկի լուսով ապրես։ Շէն կենաս։ Ախպրտանքդ ապրեն։ Խէր տեսնես։ Ագիզդ ապրի։ Բարով կապես խիզանիդ կարմիր-կանանչը։ Քի բարի հոքի։ Յեզիդ օրը խէր ըլնի։ Վոդդ քարի չառնի։ Ծախկած տուն ըլնես։ Բաղ ու դուռրդ լիքն ըլնի։ Օնչում մուխտաջ չըլնես։ Աստուած խիզանիդ շատ պահի։ Տէրդ գլխիդ ըլնի։

Անպսակներին.—Բարով կապեն կարմիրդ։ Թաղ ու պսակի արժանանաս։ Օխտը տղի հէր ըլնես։ Վաղ օր չը տեսնես։ Աչ երթաս՝ աչի, ձախ երթաս՝ աչի։ Աստուած քու մաթլաբը տայ։ Աստծու օշնութիւնը քու վրայ ըլնի։ Լաւ դովրան ունենաս։ Ծախկած ծառ ըլնես։

Երեխաներին (փաղաքշական).— Ջանիդ մեռնեմ։ Ղուրբանդ երթամ։ Գլխովդ մանդամ։ Բոյիդ դուրբան։ Ագիզ դառս։ Դարդդ տանեմ։ Անուշիդ մեռնեմ։ Աչքերիդ մեռնեմ։ Վոդիդ տակը մեռնեմ։ Սաղադդ երթամ։ Ցաճկիս լուսը։ Սրդիս լալա։ Ղաղէդ ու բալէդ առնեմ։ սրտիս ճրագ։

ԱՆԷԾՔՆԵՐ
(Տղամարդիկ)

Խէր չտեսնես դու։ Անիծուես։ Ոչ խէր ու խոշի քաշես։ Աչքդ դուս գայ։ Դարդ ու բալէս բգիդ։ Ղադաբալէս ծծիդ։ Աստուած քու ջուղաբը տայ։ Անասուն։ Ջանդ դուս գայ։ Հացդ հարամ ըլնի։ Լեղի ուտես։ Գետինը մտնես։ Հայլան։ Իշու կտոր։ Իշու գլուխ։ Հացդ ջէյրանի կըռնակ ըլնի։ Յեզ էդնէն չհասնես։ Բոյդ գետինը մտնի։ Իշու քուռակ։ Շան լակոտ։ Շան բերած։ Լակոտ հարամզադայ։ Տաւար աւանակ։ Շան ցնդնած։ յաճկդ քօռանայ։ Սաղ-սաղ թաղեմ Շան թուլա։

Կանայք սիմեանց.— Ցաճկդ քօռանայ։ Լաչիկդ սև կարբի։ Լաչիկդ քամուն տանի։ Սև լաչիկ դցես։ Սև գայ գլխիդ։ Ծամդ ու մազդ կտրի։ Ֆայզնդի երես չտեսնես։ Ցաճկդ ընից դուս գայ։ Պիպիկդ քօռանայ։ Մուր ու լեղի ուտես։ Ցաւ ուտես։ Գունդուրմա դարդ հանես։ Գուզուն դարդ հանես։ Ցաւով մեռնես։ Անուշդ քարին գրի։ Գօրբեզօռ ըլնես։ Դեղին դանակ ուտես։ Կարմիր գուլուլ ուտես։ Խէր ու խոշի չքաշես։ Ծամդ խուզեմ։ Նամակաւոր զարիբիդ երեսը չտեսնես։

Աղջիկներն իրարու.— Քօղդ սև կարի։ Պսակդ սև ըլնի։ Պամբրիդ քամուն տանի։ Անանուշ, Մազդ կտրի։ Սև գայ գլխիդ։ Մազդ խուզի։ Պլոկես դու։ Լոճկես դու։

ԵՐԴՈՒՄՆԵՐ
(Տղամարդիկ)

Աստուած վկայ։ Խիզանիս յարևը։ Տէրտէրի օծումը։ Տէրտէրի կարքը։ Իմ յարև։ Սուրբ ժամը։ Գառ պատարագը։ Ճշմարիտ։ Քու յարև։ Աստծուն այեան է։ Սուրբ խաչը։ Էս շում ու զարիբը։ Էն Քրիստոսը։ Ս. խաչը վկայ։ Տէրտէրի կարգը վկայ։ Վալլա։

Կանայք.— Իրա յարև։ Տղիս յարև։ Էս տաճար թունդիրը վկայ։ Հացան հրեշտակը վկայ։ Գառներուս յարև։ Մէր Մայրամը վկայ։ Քրիստոսը։ Վիրգին Աստուածը։ Սուրբ մասը։ Սուրբ Օվանէսը։ Էն խաչը։ Սուրբ Կարապետը։ Էն ժամը։ Սուրբ յեղեղեցին։ Սուրբ աւետարանը։ Տէրտէրի ձեռքի կարքը։ Ս. զանգաձէնը։ Աստծու յարև։ Ախպոյս յարև։ Ցինչուք լուս չքաշեմ։ Խէր չտեսնեմ ագեր սուտ ասեմ։ Քօռանամ ագէր սուտ ասեմ։

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Յերգան աղիք, ծերը ծաղիկ։ — Աղուհացի եօթն շաբաթ-ւայ պասը և Զատիկ, կամ ճրագի պատրոյգը, որի ծայրը վառուում է։

Երկու ախպէր էն սարի յէդե իրար չեն տեսնում։ — Արև։

Օրըրեմ գուլայ, ձեռ չտաս՝ չիլայ։ — Սազ։

Յերգ՝քից վեր ընդնի չի կոտրւի, ջուրն ընդնի կը կոտրւի։ — Թուղթ և ձիւնը։

Օխտն օր դատեմ, մէկ օր ուտեմ։ — Կիրակի։

Անջուր ջաղաց, անկրակ բաղաջ։ — Մեղր։

Յինչուգ յիրիդուն հողի հետ խաղլիս է, քշերը տանը օսկու պէս փայլում է։ — Խոփ։

Հինգ ախպէր տուն շինեցին, ախէրը անծածկ թողեցին։ — Ճաղեր ու գուլպա։

Ալ եղնիք, պալ եղնիք, կանդրած պաշարած եղնիք։ — Պատ։

Մուրթը մարաք՝ լիքը տաշեղ։ — Բերան և ատամներ։

Ունդուլ է, մունդուլ է, ջուխտ յանդաջը կունդուլ է, համ զիլ է, համ թուլ է։ Գորտ։

Էլին էլին, դրին սէլին, տարան-բերին, յարունը գեղը բաժանեցին, օսկոռը տունը թաղեցին։ Խնոցի։

Ջիկի-չիկի մկրատ եմ, յամեն ինչու հասրաթ եմ։ — Դրամ։

Իստի պուպուզ, խնդի պուպուզ, քեալանթարի յառչնը պուպուզ։ — Գլգլան, դալիան։

Էն ինչն է որ ամէն բանի պէտք է։ — Անուն։

Զորս ախպէր են, ինչ վազում են իրար ետևից չեն հասնում։ — Ջրհորի անիւը։

Քեզի ղրկեմ կունդուլ մսէ քարի, օխտը ծակ վրէն շարի, մանին գտիր ու ետ արի։ — Գլուխ։

Զորսը հողին, ութը կողքին, երկու բդիչ, մէկ տըմտըմբիչ։ — Շունը։

Էն ի՞նչն է աշխարք բլչի վրէն չի կոտրւի, երկու սարի մէջ ընկնի կը կոտրւի։ — Ոջիլ։

Կապոյտ խալին փռած է, ոսկին վրէն շարած է։ — Երկինք և աստղեր։

Պստի կճուճ, համով ապուր։ — Ընկոյզ։

Կաշին քանդես էրծաթէ, էրծթի մէջ օսկի է։ — Ձու։

Բոլոր, բոլոր մէջը ծակ, էշ ես՝ թէ չասես գտակ։ — Գլխարկ։

ԵՐԳԵՐ

Մէ տղայ ունեմ

Մէ տղայ ունեմ նազ անի,
Մօնթերու ճալւեր ունի,
Տէրտէրի քաքուլ ունի,
Թել-թել քամուն չտանի։

Գօլս եմ

Գօլս եմ գօլգօլս ես,
Նոդլամանիս դուլաբն ես,
Եաղութիս փշրանքն ես,
Ալմազիս գլխանքն ես,
Սովդագեարիս ձաքն ես,
Ղալամքարիս թագն ես,
Դու իմ սիրուն տղէն ես,
Դու իմ օսկէ ջղէն ես։

Դան արա

Դան արա, գանդան արա,
Ղոչ գառը քի մատաղ արա,
Օսկոռը քի սայեա արա,
Մէջը նստէ դիւան արա։

Ախչիգս

Ախչիգս ախչա ունի,
Համամի բօխչա ունի,
Զառով սանդուղչա ունի,
Մայթու գնայ՝ տուն ունի։
Համամ գնացած ախչիկ,
Փայ ու բաժինքով ախչիկ,
Վօդներդ վլացած ախչիկ,
Ջուրաբ ջհազով ախչիկ։

Ովսանա

Ովսանա ջան, Ովսանա,
Յուրախ զագիկ լուսանայ,
Հէրդ գայ Հնդստանա,
Բեռներ բերի՝ քաթան ա։

Ախպէր

Ախպէր, ախպէր ջան ախպէր,
Մէջկդ գօլստան ախպէր,
Կապա կարեմ՝ կարճ գուքայ,
Դուզմա շարեմ՝ խաչ գուքայ,

Կարմիր կովանդ ի՞նչ արիր,
Մառի տակը դում արիր,
Շերեփ-շերեփ կթեցինք,
Գդալ-գդալ բաժնեցինք,
Յամմեն ծառին մին փշատ
Իմ ախպրտանց ումբրը շատ:

Ազիզ, ազիզ

Ազիզ, ազիզ, տուն արի,
Զաքմէքդ չարաադարի
Ղայլանդ չաղ արի,
Թանբաքուդ վարթի արի
Զուրդ գոլաբի արի,
Կթակդ դանդի արի,
Տուն արի ազիզ, տուն արի։

Վիրեւ ըլնենք կտուրը

Վերև ըլնենք կտուրը, տեսենք
Վով է գալիս, վով է գալիս,
Ցիրեք ձիաւոր է գալիս,
Վո՞յն է սիրուն, վո՞յն է
սիրուն,
- Նարինջ ձիաւորն է սիրուն,
Վո՞յն է սիրուն, վո՞յն է
սիրուն,
– Ճերմակ գդակաւորն է սիրուն,
Վո՞յն է սիրուն. վո՞յն է
սիրուն,
— Կանաչ կապաւորն է սիրուն,

Ախպօրս հաւնիք

Ախպօրս հաշնիք սազով է,
Հայսի՞ բերինք՝ նազով է,
Հայսի նազը քաշեցինք,
Գլխին թրմա քաշեցինք։

Կտուր-կտուր վարեցինք

Կտուր-կտուր վարեցինք,
Մէ սիրուն ախչիկ ճարեցինք
Գնացինք, տեսանք քնած էր։
Վայթն երեսին փռած էր,
Գաթէն ծոցը փխլած էր,
Նուռը ջերը փնջնած էր,
Խնձորը ձեռը խածած էր,
Աբէրշում խալին փռած էր,
Ախչիգը վրէն նստած էր,
Օսկէ ջամը կոռծած էր,
Էրծթէ նռներ շարած էր,
Ախչիկը թուխ էր պաչեցինք,
Խնձորը փուխ էր կծեցինք։

Ես ախչիկ եմ թել եմ մանում

Ես ախչիկ եմ թել եմ մանում
Յուշ ու միտքս քեզ եմ
անում,
Պատիկ տղայ, մի նեղանայ,
Էդ հանաքին չեմ դիմանայ։

Լուսացաւ

Լուսացաւ, լուսն է բարի,
Սեղան տարանք սուրբ
Նազարին,
Զուրբան իմ ախպօր
բազարին։

Հարաճի քամուն

Հարաֆի քամուն գալիս է,
Զուխտ դռնամէջ տալիս է,
Խանում խաթուն դուռը բաց,
Վարթան խանդ գալիս է։

Զառով կապէն

Զառով կապէն հաքել ես։
Թրմա շալը կապել ես,
Զաղցի կտուր կանգնել ես,
Սիրուն եարիդ մաշել ես։

Ես Եղնազարն եմ,
Դուքան բազարն եմ,
Գիւլ լալազարն եմ,
Սրբուհի հէյրան,
Ալագեօզ ջէյրան,
Առնում ես ասա,
Չես առնում ասա։

Ես Եղնազարն եմ.
Հօրդ ադաշն եմ,
Աղբօրդ համեաշն եմ,
Մօրդ ղարդաշն եմ,

Ախչի հանաք ես անում,
Սիրտս էլ չի դիմանում,
Ինչքան տանջես հերիք է,
Ինչ ես խելահան անում։

Գետի ջուրը լամ տալէն
Երկու խնձոր ծափ տալէն,
Կարմիր կովը մաացու,
Կանաչ խառէն քիսայու,
Ես քու նանին հաշնացու,
Դու իմ նանին փեսացու։

Ես ախչիկ եմ նազան եմ,
Կը նշանուեմ սուլթան ու
խան եմ,
Եփ պսակուեմ՝ քօռ տրիժան եմ:

Քամուն գալիս հով ու հալին,
Նանը ղուրբան էրնած կալին։
Ձեռիդ մանգաղ կապուտ
բիստի,
Ղովդէն ձեռդ արի իստի։

Տղէս մենձըցաւ

Տղէս մենձըցաւ,
Իրան ճանչցաւ,
Խելքը բոլորեց
Առաւօտ լուսացաւ,
Տղէս վերկացաւ,
Նստեց, վլացուեց,
Քաքուլը սանդրեց։
Աստծուն գոհացաւ
Վազեց ժամադուռ,
Հաքաւ զառ շարիկ,
Կոնդնեց դէմ տաճար,
Քաղցր ձէնովը՝
Երգեց շարական։

Մէ տդիս տէր-տէր չինեմ,
Մէգիս վայթապետ կըշինեմ,

Էն մէգիս սայդաւագ կը
շինեմ,
Էջմիածին կը կանդնեցնեմ։

Էջմածին

Էջմիածին բանցը սաբ է,
Տաճարները մալմալ քարէ,
Հզարան հիւանդի ճաբ է,
Բժշկարան Էջմիածին։
Ուխտ են գալիս բուրեց
բուր,
Դու էտոնց խօրուրթը տուր,
Ուխտ ու դիլագ, Էջմիածին։
Էջմիածին խօրըյթարան,
Վայթապետ Առաջնոյթարան,
Դաս տիրացու մոնթարան,
Հոգեւոր դաս, Էջմիածին։

Տղէն գնաց վանք,
Առաւ իրա կարք,
Քցեց զառ շուրջալ,
Կանգնեց դէմ տաճար,
Քաղցր ձէնով կարթաց,
Սուրբ աւետարան։

Փոքրիկ աղջկայ երգը

Գիզ գիզ բամբակ,
Աբրէշումէ զանգակ,
Մամա, մամա ինչ գործեմ,
Պստիկ խալիչայ գործեմ,
Գձեմ կտուրի ծէրին,
Քամին տանի ու բերի,
Իմ պապիցը լուր բերի։

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

((Տղամարդիկ)

Դանդով փորդ կը վիթեմ։
Հէնց քացի կուտամ օր օխտը մանլաղ էրթաս։
Նաշըդ կը փռեմ։ Շան զաւակ եմ թէ քեզի չսպանեմ։
Թէ ձեռս կընգնես՝ հօքիդ կը հանեմ։
Շան լակոտ։ Մենձ թիքէդ յանդաճդ կը շինեմ
Բահով միջէդ կը կիսեմ։ Հէնց կուտամ օր նաշըդ վառի։
Գնա գուռ էլի։ Օխտը պոռտիդ փայը կամ։
Պիալ չանես օր. մէ դմբուզ տամ սաղ չես մնայ։
Յում հետ ես խօսում։ Դէն գուռէ, օր կուտամ մեռ-
նես։ Ազէր գիրս ընկար՝ խօ գիտեմ ինչ կօնեմ։
Շան թուլի, ձէնդ կտրում ես՝ թէ տամ։
Դէ տուր, թէ չտաս՝ հօրդ տղէն չես։

Հէրդ գոռբէգոռ կօնեմ։
Շան բէրած, շան ցնդնած, աչքիս առջևից նայածդ էլի։
Քեալլէդ խուրդ կօնեմ։
Իշու քուռակ, խաֆա էլի։
Բամփ կուտամ օր սաֆ ըլնես։

ԵՐԳԻՇԱԿԱՆ

Ախպէրս գնաց Ղումիշա,
Տկի ձին էր ալաշա,
Գեղ կանգրէցին թամաշա,
Բոյթ ու բամբակ-աբրէշում,
Գեղի խիզան ախպօրս շուն։

Հայը ի որթի հոգին սուրբ,
Օրէն սատկի հզար թուրք,
Հայիցը՝ մէ ճուտ,
Էն էլ ըլնի սուտ։

Սանա, սանա Ովսանա,
Մազեր ունես մէ բանա,
Քամար ունես մէ դանա,
Միճկիդ քաշեմ վայդանա,
Յո՞ւրիր ասում վայ նանա։

Բէգզադ հայս,
Կանչեմ՝ դաս,
Ծեծեմ՝ լաս,
Էրթաս նանիդ խաբար տաս։

Լուսը լուսացաւ, հարսը
վեր կացաւ,
Մի հաց դոդացաւ, կեսուրն
իմացաւ,
Տուեց թուլացաւ, դարվազէն
բացաւ
Գնաց թուրքացաւ, օչով
չիմացաւ։

Մէ ուլ ունեն՝ նարի,
Ուտում է հոռալ ու գարի,
Մորթելուս քեզի կօսենք
արի,
Թէ եկար ու չասիր բարի,
Գլուխդ կուտանք մենձ քարի։

Առուի թմբի դաղձ ու մաղձը,
Դըրկիցներու օխտը հացը,
Ղազան եռայ, որ ես մեռայ։

Էյ սուրբ եկեղեցի,
Դու տեղդ ծանդը կեցի,
Էս անիրաւ կովը մորթեցի,
Միսը խաշեցի,
Կաշին էլ խնոցի շինեցի։

Կամ

Ալա մոգին,
Զաթուն պոգին,
Խիզանս կերան խորխոգին,
. . . . լոռի բոզգին*)։

ԱՂՕԹՔՆԵՐ

(Եկեղեցու զանգակների ձայնը լսելիս)

Օրհնեալ է Աստուած, որհնեալ է սուրբ զանգաձէնը։
Երգըրպագանեմ լուս գերեզմանին
Քրիստոս եկաւ վեր աշխարհ, աւերեց դժոխք, շինեց դրախտ,
Կաթնով ախպուր, քարէ տաճար,
Ես ունեմ Աստծուն վճար,
Աստուած անի իմ հոգուն ճար։
Մեղա՜, մեղա՜յ, հազար մեղայ։

Եա սուրբ կուս Մէր Մայրամ Աստուածածին.
Ուրախ սրտով փափագ գամ,
Պարգերես ջուղաբ տամ,
Տէր մեր Յիսուս Քրիստոս, ամեն։

Կամ

Եա սուրբ զանգնձէն, քու ձէնը հասնի Աստծուն,
Աստծու լուս օղորմութունը գայ յերդիր աշխարհի վրայ։
Օրհնեալ է Աստուած։

*) Վերջինիս համար պատմում են թէ չհարմհալի մի հայաւ. Շանդեանը գողանում է լոռի երինջ կովը, մորթում ու տալիս ուրեխանները ուտում են։ Լոռը գտնում է գող հային, բայց հայն ուրանում է և ասում.—«Եթէ կուզես մեր ժամով երդում կուտամ, որ քո կովը ես չեմ գողացի»։ Նա էլ հաւանութիւն է տալիս։ Գընում են եկեղեցի, հայը ծնրադնում է և ասում յիշեալ երդումը, Լոռը կարծում է թէ հայն իսկապէս անկեղծ է երդւում, թողնում է ու հեռանում, ասելով «Քիխա քաս է,

Քնելու ժամանակ

Եա շում ու զարիբի Աստուած,
Եա մէր Մայրամ Աստուածածին,
Աշխարհի խէր խաղաղութիւն,
Իմ մեղքերուն թողութիւն։
Զարն ինձանից հեռանայ,
Հարգիզ չունեմ բարութիւն,
Իմ հոքուն արքայութիւն,
Մայրամ Աստուածածին կուս Մայրամ,
Դու բարեխոս էլի քու միածին որթուն։

Առաւօտեան լուացվելուց եւ «Հայր մեր» ասելուց յետոյ.

Բարի լուսի տուող Տէր, քեզ ունեմ յոյս, Դու չկորցնես, Դու աշխատում տաս իմ գործին, աշխարի խաղաղութիւն տաս ու իմ մեխկին թողութիւն։ «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա» Սաղմոս։

Զար աչքի աղօթքներ

Երուսաղեմ մէ գոլ կայ
Գոլի մէջը մէ ծառ կայ,
Ծառի վրայ մէ ճուխկ կայ, ճխկի վրայ մէ բուն կայ,
Բնի մէջը մէ ձու կայ, Ձի մէջը մէ ձաք կայ
Ձաքը թև առաւ թռաւ, Աստուած տեսաւ զարմացաւ.
Օրհնեալ է Տէր մեր Յիսուս Քրիստոս, ամեն։

Կամ

Աշխարհումը մէ ծով կայ, ծովի մէջը մէ գոլ կայ,
Գոլի մէջը մէ ձուկ կայ, յաճկեր ունի արագի,
Մազեր ունի գրողի, օցը կթի, օցը մէրի,
Զար նիաթին չար փուշ պատի, չար աչքը տրաքի։

Կամ

Յուսին, Յուսին, Մայրամ գնաց,
Ի սուրբ կուսին Որդին ուսին.

Էրուած եմ, Աւ դանակը,
Խորուած եմ. Կտրէ չար յանկը։
Չար աչկը չար փուշ պատի, չար նիաթը տրաքի։

Մանօր.—«Չար յանկի» աղօթքը պէտք է սովորեն կանայք՝ տղամարդկանցից, իսկ տղամարդիկ՝ կանանցից։ Ոչ ոք չգիտէ բացատրութիւնը թէ ինչու, կամ որտեղից է այս սովորութիւնն սկսւել։ (Աւ. Քհ.)

Աչքի հատի աղօթք

Հաւն ի թառը, Հաւն ի թառը,
Հատն ի ջուրը, Հատն ի ջուրը,
Հալի հատը, Ընկնի աստղը
Ընդնի ջուրը։ Հալի հատը։

Մանօր.—Մի քանի աղջիկներ հրաւիրւում են հիւանդի գլխին աղօթելու, դնում են մի ման ջուր հիւանդի առջև և շրջապատում են նրան՝ մի բոցավառ ցախ ձեռք առած, աղջիկները հերթով արտասանում են վերոյիշեալ մի քանի խօսքերը և կրակը տարուբերում են հիւանդի գլխի շուրջ։ Հաւատում են որ վերջին երկու խօսքերը ասելիս աչքի հատը (սպիտակ թաղանթը) ընկնում է ջրի մէջ։ Աւ. քհ.

Զարմանալ դաւառի գրեթէ ամեն մի գիւղ ունէր իր աղօթող կինը, կամ տղամարդը, որոնք չնչին վարձատրութեամբ աղօթում էին հիւանդների վրայ։ Սրանք սովորում էին տղամարդը՝ կնոջից և կինը՝ աղօթք գիտցող տղամարդից։ Հայ գրքացներ ու կախարդներ հայ գիւղերում երկու կամ երեք հոգի աւել չկային, որոնց մասին զանազան բաներ էին պատմում. օր. Լիվասիան գիւղում «Շէշանգոշտի» (վեց մատ ունեցող) Մանասէրը «Չադուով դարին վեր էր հանում պատը, նմանապէս և

որդին՝ Մկրտիչը։ Մամուքցի Կարապետը կարողանում էր քարերը կուեցնել խոյի նման և այլ նման կախարդութիւններ։

«Ախտարք»ներ գոյութիւն ունէին շատ մարդկանց մօտ, մինչև անգամ հոգևորականների տներում, սակայն ամեն մարդ կախարդելու «շնորհք» չէր ստացել։

Վար ու ցանքի աղօթք

Անուշն ի Աստծուն, Տէր Աստուած դու տաս բարաքաթ, տաս աճուն, որ բոլոր յերգնային թռչուններն ու յերգրային սողուններն ուտեն, բազմեն, շատնան ու էտոնց էւելնորթը մեզի, մենք ուտենք ու փառք տանք քեզի։

Անուշն ի Աստծուն,
Դու տաս աջողում.
Էս մի բուրը անցվորականին,
Էս մէկն էլ թռչուններուն,
Էս էլ աղքատներուն,
Ըլուն թռչուն, կէրէք իմ ցանքից կշտացէք։
Ու իմ ցանածին բարաքաթ տուէք։

ԽԱՂԵՐ ՈՒ ԵՐԳԵՐ

Ընտրում են երկու հոգի «Սանլար». զոյգ-զոյգ ձեռք ձեռքի բռնած «դուս» են գալիս, ափերի մէջ դաղած մի-մի փայտի, կամ քարի կտոր և դիմում են սանլարին ասելով.

— Սանլար, սանլար,
— Ով դա քի մանլար,
Վով քար, վով փէտ։

Սանլարներից մէկն ասում է քար, միւսը՝ փայտ։ Նրանք ափերը բաց են անում. իւրաքանչիւր սանլար տա-

նում է իր մօտ նրան, որի ափի միջի առարկայի անունը է տալ. այսպիսով իւրաքանչիւր կողմ ընտրում է իր մարդիկը. ապա «ֆառ» (վիճակ) են գնում, որին որ ֆառն ընկաւ, նա իր ընկերների միջից կը նշանակէ մի «դմբա», բոլորն էլ մի ձեռքով իր հակառակ կողմի ոտքի մատների ծայրից բռնած՝ ցատկելով պիտի յաղթեն դիմացիներին և ճանապարհ բանան որ դմբէն գնայ հասնէ նշանակած կէտին։ Եթէ դմբէն այս խաղը երեք անգամ յաջողեց, նշանակում՝ է յաղթեցին։ Պարտուած կողմը պարտաւոր է շալակով տանել յաղթողներին մինչև այն կէտը, ուր դմբէն էր գնում։ Կրկին շարունակում են խաղը մինչև յոգնելը։ Եթէ դմբէն չի յաջողում, «դմբութիւնը» անցնում է հակառակ կողմին։

Ընտանիքներում, կամ խմբակներում չհարմհալցիները խաղում են նաև նարդի, քարտի զանազան խաղերը, տող, դամա, (վերջին երկուսը քարերով և փոքրիկ փայտի կտորներով՝ դետնի վրայ գծած գծերով։

Լոցտակ

Վերոյիշեալ ձևով ընտրում են իրենց մարդիկը։ Զոյգ-զոյգ, ձեռ-ձեքի բռնած սկսում են հալածել դիմացի զոյգերին, մինչև բաժանեն մէկին միւսից. երբ բաժանում են մէջքին խփում են մի քանի անգամ և ասում՝ «էրած է» ու հեռացնում են շրջանից։ Այսպէս մինչև բոլոր հակառակ կողմի խաղացողները յաղթեն և կրկին սկսեն խաղը։

Քոլֆոլաբար

(Գլխարկ փախցնել)

Նոյնպէս ընտրում են մարդիկը։ Ֆառ են գնում, որ կողմին որ ֆառն ընկաւ՝ պիտի պառկեն. ձեռքերի ու ծնկների վրայ պառկում են դետին, աշխատում են ոտքի ծայրով խփել հակառակորդին, որ իր գլխարկը չիլէ, երբ մէկին խփեցին, նրանց խումբը յաղթած է։

Լախs

Խաղը վերոյիշեալ ձևով է, բայց խաղացողը աշխատում է ընկերոջ ձեռքի «լախտը» խլել։ Գետնի վրայ լայն շրջագիծ են քաշում ու լախտաւորները այդ գծի ներսը կանգնած՝ ջանանում են ոտքով խփել հակառակորդին, իսկ հակառակորդը, եթէ յաջողում է խլել նրա ձեռքի լախտը (թոկ) դրանով մի քանի լաւ հարուած է հասցնում և գծից դուրս անում։ Երբ բոլորին էլ գծից դուրս են քշում, միւս կողմը անցնում է գծի մէջ ու կրկնում են խաղը։

Արուրմա

Այս խաղին մասնակցողների թիւը որոշ չէ. կարող են խաղալ երկու հոգի, կամ աւելի, մինչև տաս-քսան հոգի։ Ֆառ են գնում, վիճակը որ մէկին որ ընկաւ, ձեռքերը ծնկներին դրած կեռացած պիտի մնայ, իսկ միւսները թռչեն նրա վրայով։ Իւրաքանչիւրը մի շրջան վերջանալուց յետոյ, մէկ քայլ հեռանում է տեղից, մինչև բաւական դժուարանում է թռչելը. խաղացողներից որ մէկը որ չկարողացաւ մի ոտիւնով թռչի՝ նա կը պառկի։ Խաղը կը շարունակուի կրկին։

Նուրին - Նուրին

Երաշտ տարիներում, երբ անձրևի կարիքը շատ է գիւղացիների համար, մի խումբ երեխաներ հաւաքւում են, մի ցախաւել վերցնում, երկու բազուկների տեղ ձողեր են դնում և շոր հագցնում տիկնիկի նման. գլխին էլ լաչիկ դցում, ապա մանուկներից երկու հոգի բռնում են

Նուրի-Նուրինի թեներից շրջագայում են դռնեդուռ ասելով.

Նուրին – Նուրին եկել է
Աչքա հուրին եկել է,
Շալէ շապիկ հագել է,
Քօլքէ գոտիք կապել է։
Եղ բերէք պոռտին քսենք,
Ալուր բերէք՝ գլխին ածենք
Մեր Նուրինի փայը տուէք,
Ուտենք, խմենք, քէֆ անենք։

Տանեցիները ջուր են ածում Նուրինի գլխին, մի փոքր ալիւր մէկ հատ ձու, կամ իւղ տալիս երեխաներին։ Վերջինները շրջագայութիւնը վերջացնելուց յետոյ՝ իրենց հաւաքածը կերակուր են եփում և ուտում։ Երեկ Աստուած էլ խղճում է ու անձրև տալիս իրենց արտերին։

Տէր - Օվանէս

Երկու պարագլուխներ ձեռքերը կամուրջ շինած կանգնում են, միւսները շարքով այդ «կամուրջի» տակից անցնելով ասում են.

– Տէր Օվանէս։

Կամուրջ կազմողները պատասխանում են։

— Պատրուք ու կէս։
— Զուռնով երթամ թէ դափով.
— Դափով.

«Դափ, դափ, դափ» ասելով շարանը անցնում է. պտտելուց ձեռքերը խաչաձևում են ու մէկը միւսի յետևում կանգնում. պարագլուխը ասում է.

— Յանդ լուս, օր տղայ ես բերի,
— Յանկի լուսով ապրես,
— Բարով կապես կարմիրը,
— Արի էրթանք դաշի,
— Զան չունեմ,
— Զան կուտամ։
— Հաց չունեմ,
— Հաց կուտամ,
— Ղաթըղ չունեմ,
— Ղաթըղ կուտամ,
— Ջուր չունեմ,
— Ջուրդ ածա չանախդ,
— Զանս կարճ է,
— Քաշէ յինչուդ յերգննայ։

Սկսում են քաշել շարքի կանգնողներին, մինչև որ խաչաձևած ձեռքերից մէկը բացւի և կտրւեն իրարից։

Յարեւ - Յարեւ

Անձրևային եղանակներին, երբ երեխաները տանը երկար մնալուց ձանձրանում են, դուրս են վազում, խումբ կազմում և երգում են.

— Յարև, յարև դուս արի, Խմորը քացախել է,
Հէրն ու մէրդ էկել են, Պառաւը սատակել է,
Թուր ու թֆանք բէրել են, Թոնդիրը խշկեել է,
Գոմշի ոտը կոտրել են, Էրէխէն էլ լացել է։

ՀԱՅԱՏ

Զհարմհալի հայ ժողովուրդը դաւանանքով Լուսաւորչական է առանց բացառութեան և պատկանում է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցուն։ Ամենայն սրբութեամբ պահպանել է իր մայրենի լեզուի հետ և իր դաւանանքը։ Ջերմեռանդ քրիստոնեաներ են։ Տէրունական և սրբոց տօները հանդիսաւորութեամբ տօնում են և երբեմն էլ այս կամ այն սրբի անունով մատաղ կտրում։ տօն օրերին անպատճառ պիտի ներկայ լինեն ժամերգութեան։ Ուխտի են գնում դանազան սրբերի անունով կառուցած ուխտատեղիները, երբեմն էլ աւելի հեռաւոր վայրեր՝ Նոր-Ջուղա, Ս. Էջմիածին, Ս. Կարապետ և այլուր։ Քրիստոնէական օտար դաւանանքներ չեն կարողացել մուտք

գործել Զհարմհալ և փորձողները հալածել են։

Ամենափոքրիկ գիւղն անգամ ունեցել է իր եկեղեցին և ծխատէր քահանան. ամէն առաւօտ և երեկոյ պարտադիր էր ժամասացութիւնը։ Եկեղեցիներում պահւում են սրբոց մասունքներ, խաչեր, աչքաւոլունք։ Լեզու, Ծունկ, Կպրիանոս, Նարեկ գիրք. ուխտաւորներին զոհացում տալու, օրինակ, եթէ երեխան ուշ է ոտք ելնում, կամ ոտքերը տկար են, նրա համար մայրը ուխտ է խոստանում այս կամ այն սրբի ոտը ու հէնց այդ սրբավայրից կամ եկեղեցուց վերցնում է մի Ծունկ-ոտք. նոյնպէս եթէ լեզուն չի բացւում, լեզու են վերցնում, եթէ ընդհանուր տկարութիւն է՝ խաչ են վերցնում։

Կպրիանոսը գրում էին «Նորընծա»ները քառասունքի ժամանակ, երկար բարակ երիզանման թղթի վրայ. ըսկիզբը մի սրբի նկար կամ աւետարանիչի, յետոյ բժշկութեան աւետարան ու աղօթքներ է գրած. այս երիզը փաթութ էին անում և մի «եաբլուղի» մէջ դնում, հիւանդների թևին կապելու։

Ուխտաւորը, երբ իր «խորհուրդը» կատարում է, սրբավայրից վերցրած խաչը կամ լեզուն կամ թաշկինակը դարձնում է զոյդ և վերադարձնում պատկան սրբավայրին։ Այստեղ աւելացնենք Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ՝ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Այվատեանի կանոնագիրը, որի պատճէն մնում է Ս. Ամենափրկչեան վանքում։

«Ա. հսկել Զհարմհալ գաւառի գիւղերի եկեղեցիների բարեկարգութեան և բարելաւութեան վրայ և առանց զանցառութեան ու թերացման կատարել ս. եկեղեցու ժամերգութիւնը։

Բ. Քահանաները պարտին առանց զանցառութեան մի մատեանի մէջ արձանագրել ամեն մի ծնունդ, մկրտութիւն, պսակ և մահ։

Տէր Սիմէօն քահ. Եղգարեան



Տեր Յուսիկ քահ. Տ. Սարգսեան

Գ. Քահանաները պէտք է աշխուրջ լինեն և հսկեն երեցփոխների վրայ, որ եկեղեցական հաշիւները ճշտութեամբ և կանոնաւորապէս արձանագրեն։

Դ. Պսակադիր քահանան մինչև որ գործակալից թոյլտրութիւն չստանայ, իրաւունք չունի պսակելու։

Ե. Գործակալ քահանաները իրաւունք ունեն գիւղերում պատահած անախորժ խնդիրները քննելու և վճիռ արձակելու։

Զ. Պէտք է հոգ տանեն բոլոր քահանաները գիւղերում գտնուող ազգային դպրոցների բարգաւաճման գործին։

Է. Գործակալները պարտին իրենց պաշտօնը արժանաւորապէս կատարել և չթերանալ»։

ՏՕՆԵՐ

Ա. Նոր Տարի (Յունուար 1)

Տարեմուտ օրը, կամ մի օր առաջ, տանտիկինը «Տարի» (անխմոր հաց) է թխում, որի մէջ ածում են չա-

Եպիսկոպոս Ամբարչեան

միչ, ընկոյզ կամ նուշ և երեսին «գոշաբ» քսում։ Պատրաստում են նաև նօխուդէ քֆտա (սիսեռից) և չիր են եփում, որպէսզի Նոր-տարի շնորհաւորողներին հիւրասիրեն։ Տարեհացի մէջ մէկ հատ պղինձէ արծաթէ դրամ են դնում։ «Տարի»ի միջի դրամը գտնողը այդ տարւայ բախտաւորն է համարւում։

Առաւօտեան ժամերգութիւնը վերջանալուց յետոյ, քահանան, տանուտէրը և ծերունիները խմբով գնում են նախ տէրտէրի տունը, տէրտէրի աջը համբուրում, միւս անդամների հետ ձեռք սեղմում ասելով՝ «շնորհաւոր ըլնի ձեր Նոր տարին, ուրախ գատիկ հասնէք» և այլ բարեմաղթութիւններ անում։ Տանեցիք հիւրասիրում են վերոյիշեալ «պասովէն» կերակուրներով ու թէյով։ Յետոյ խումբը գնում է տանուտիրոջ տունը, այստեղ էլ միւսներին հերթաբար շնորհաւորում են Նոր տարին։

Կանայք ևս իրենց հերթին գնում են շնորհաւորելու ազգականների ու բարեկամների Նոր տարին։

Նոր տարուց մի օր առաջ դպրոցները փակում են մինչև «Ութօրէքը վերջանայ։

Բ. ԾՆՈՒՆԴ. «ՋՐՕԽՆԻՔ»

Թաթախ երեկոյեան բոլոր տներում եփւում է փլաւը։ Խոստովանքի զանգի ձէնը լսելուն պէս ծոմ պահողները շտապում են եկեղեցի. միւսներն էլ հետզհետէ գընում են աղօթքի, մնում են մինչև յաւարտ Պատարագին, ճաշակւում են ու վերադառնում իրենց տները. պաս են բանում, սակայն մսեղէն չեն ուտում, որովհետև «Նաւակատիք» է։

Կերակրից յետոյ, երեխաները մի-մի թոկի ծայրից թաշկինակ կապած շրջում են կտուրից-կտուր, թաշկինակը կախում են երդիկից և երգում.—

Ցնծացէք, ուրախացէք,
Պարկը բացէք,
Մէ բուռ ածէք։
Յալելուիա՜, յալելուիա՜։

Տնեցիք մի բուռ աղանձ, փշատ կամ չամիչ, երբեմն էլ մի քանի շայի մանր դրամ կապում են թաշկինակի ծայրին։ Կտեր կանգնողները քաշում են վեր ու վազում մի ուրիշ հարևանի երդիկը։

Հարմհալում Ծնունդեան և Յարութեան տօներին կար մի գովելի սովորութիւն—այն էր՝ գիւղի տանուտէրը և ծերունիները նաօրօք հաշիւ կը տեսնէին թէ իրենց գիւղում քանի չքաւոր ընտանիքներ կային և կհոգային նրանց «Ազիզ օրւայ» իւղ ու բրինձ, ալիւր և այլ բաներ։

Միւս օրը «Ցնձում» է, Խաչը պիտի գձեն ջուրը, միւռոն թափեն, և այլ արարողութիւններ լինեն եկեղեցում։ Առաւօտեան ժամի 2-ին, լուսաբացից շատ առաջ, եկեղեցու զանգակները զօղանջում են։ Հսկումն է, բոլորը շտապում են եկեղեցի։ Եկեղեցում նորահարսները, աղջիկներն ու փոքրիկները մի-մի վառած մոմ ձեռքերին կանգնում են վերջին շարքում. հարուստները «թուփ» են վառում իրենց նորահարսների առջև.—թուփը թափում են մոմից, մի քանի ճիւղեր ունի ջահանման. «քուրջ» ևս ասում են։

Շարունակւում է ժամերգութիւնը մինչև խաչը ջրից հանելու ժամանակը։ Քահանան քարոզը վերջացնում է առանձին բարեմաղթութիւններով. նախ հոգևոր դասին, սկսած Ս. Էջմիածնից, Վեհապետ Հայրապետի, պատրիարքների, եպիսկոպոս և բոլոր հոգևորականաց։ Երկրորդ բարեմաղթութիւնը՝ թագաւորաց, իշխանաց և ազնուականաց, իսկ երրորդը՝ հասարակաց։ Վերջում յայտարարում է՝ «Համեցէք, ով որ խորհուրդ ունի, թող մօտ գայ խաչքաւոր դառնայ»։ Խաչքաւորին ժամաշապիկ են հագցնում,

բարձրանում է բեմ և քահանան խաչը դնում է նրա գիրկը։ Ժողովուրդը մոտենում է ու համբուրում խաչը, խըմում են մի փոքր մեռոնաջուր և դուրս գալիս եկեղեցու բակը։

Քահանան շուրջառով և տիրացուները ժամաշապիկով, խաչքաւորն էլ խաչը գրկած «Արեգականն արդարութեան» շարականը երգելով, գնում են խաչքաւորենց տունը, այստեղ դիմաւորում է կարմիր կամ սպիտակ քողով ծածկուած «Սանամէրը» համբուրում է խաչը և քաւորից վերցնում ու նստում իր տեղը։ Քահանան ու տիրացուները այստեղ երգում են «Լուսի լուսոյ» շարականից մի երեք տուն, վերջացնում, քահանան «Պահպանիչ» է ասում. բարեմաղթութիւն անում, շնորհաւորում են Ծընունդ և Մկրտութիւն Քրիստոսի, ապա նստում են թէյ վայելելու, կամ ճաշ ուտելու։

Գ. Ս. ՍԱՐԳԻՍ

(Առաջաւորաց պաս)

Սուրբ Սարգիսը յարգուած ու սիրուած մի սուրբ է Զէյթունալի հայերի համար, որովհետև նա «Ատենահաս» է. դրա համար էլ ս. Սարգսի պասը բոլորն էլ պահում են, շատերը «միաժամ» են պահում, այսինքը օրական միայն մէկ ճաշ են ուտում, այն էլ պասովէն, ամբողջ առաջաւորաց շաբաթապահքի ընթացքում։ Մարդիկ էլ կան որ ամբողջ հինգ օր ոչինչ չեն ուտում. երկուշաբթի առաւօտից մինչև ուրբաթ կէսօրին, որ կէսօրւայ ժամն արձակւի, տուն գնան ու «փոխինդ» ուտեն։

Նախկինում գպրոցականներին էլ խստիւ արգելւած էր պաս ուտելը և օրական ծոմ չպահելը մինչև կէսօր։ Եղեռնի փոքրիկները առաւօտեան անսւաղ պիտի եկեղեցի գնային, այնտեղից «Մոնթանոց», դասերը վերջացնելուց յետոյ, մօտ կէս օր, կրկին եկեղեցի, որից յետոյ թոյլատրւում էր գնալ ճաշի։ Ամբողջ հինգ օր Ս. Սարգիս շաբաթապահոց օրերը, կէսօրին կատարում էին ժամերգութիւն և հաց բաժանում։ Զալաքին (անխմոր հաց) թխում և եկեղեցի էին բերում նրանք, ովքեր «խորհուրդ» ունենային։

Մինոյն օրերում գիւղացիները պատրաստում էին «դեղու մատաղ»ի համար. ընտրւում են երեք-չորս հոգուց բաղկացած մի յանձնախումբ, սրանք շրջում էին գիւղի տները և հաւաքում ցորեն, գարի, դրամ կամ ուրիշ հացահատիկներ. այս հաւաքածուով գնում են մատցու կով, ոչխար կամ այծ և ուրբաթ կէսօրին զոհում են եկեղեցու բակում։ Կտրած մատաղների միսը՝ գիւղի ընտանիքների թւի հաւասար բաժին են դնում. ապա եկեղեցու զանգակները հնչեցնում, որպէսզի բոլորը լսեն և դան իրենց բաժին մատաղը տանեն։ Եթէ գիւղում հարևան գիւղերից եկած հիւրեր կան, նրանք ևս իրենց հաւասար բաժին են ստանում։ Մասնաւոր անձինք զոհում են մի-մի աքլոր։

Ս. Սարգսի անունով շինւած եկեղեցիներում Շաբաթ օրը բաւականաչափ ուխտաւորներ են լինում։ Զէյթունալի հայերը հաւատում են, որ Ս. Սարգիսը այդ գիշեր սպիտակ ձին նստած շրջում է ամենքի տները ու ալիւրին «բարաքաթ» տալիս։ Շատերը այդ գիշեր մի պնակով ալիւր էն գնում իրենց փեթակի վրայ, որ նրա ձիու ոտքի հետքը կարողանան տեսնել յաջորդ առաւօտեան։ Աղջիկները «աղի բլիթ» են ուտում և քնում, քնած ժամանակ իրենց ջուր տւող տղան՝ դառնալու է իր նշանածը։

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բարեկենդանը, կամ ըստ Զէյթունալի բարբառի «Բարեգէնդաք»ը, սկսւում է Ս. Սարգսի տօնից անմիջապէս յետոյ։ 15 օր բարեկենդան է։ Այս ժամանակամիջոցում

հիւրասիրութիւնները են ունենում հերթաբար, ուտում խմում, քէֆ են անում մինչև աղուհացի սկսելը։

Բարեկենդանի պարապ օրերին կազմակերպում են զանազան խաղեր, մեծերը առանձին, փոքրերն էլ առանձին, բաւական զւարճալի օրեր են ունենում։

Բուն բարեկենդանի Շաբաթ և Կիրակի օրերը սովորութիւն է, բոլորն էլ իրենց ննջեցեալների համար «պաշտում» են կատարում, որովհետև ամբողջ աղուհացայ ընթացքին Հանգստեան շարական չի երգւում և հոգեհանգիստ չի կատարւում, հետևաբար ննջեցեալներն ևս պաս են մնալու։

Բարեկենդանի վերջին օրերում Զհարմհալի ունևորները իրենց գործածելիք իւղից, բրինձից, ալիւրից և մսից բաժին են ուղարկում աղքատներին։ Մինչև բարեկենդանի վերջին օրը՝ Կիրակի, պէտք է վերջացնեն բոլոր իւղալից ու մսալից կերակուրները և հանգիստ խըղճով «պաս բռնեն»։

«ՄԵՆՁ ՊԱՍ»

Աղուհացի առաջին օրը, Երկուշաբթի, բոլոր հասակաւորները եկեղեցի են գնում, աղօթում և լսում ճաշուն՝ «Լացարուք»ը։ Ժամասացութիւնը վերջանալուց յետոյ, հերթով գնում են քահանայի տուն պաս շնորհաւորելու, ապա՝ տանտիրոջ և ժողովրդի։ Իսկ կանայք լւանում են իրենց տնային բոլոր իրեղենները, որովհետև այսօր կարդացւել է «Լացարուք – սրբեցարուք»ը և ճենճահոտը իրենց տանից պիտի հեռանայ։

«Արի, արի, թթու մախոխ,
Կորի գնա ճենճերահոտ»։

Զահել հարսներն ու աղջիկները, կուժերը ուսած գընում են աղբիւրից ջուր բերելու, վերադարձին մի-մի փունջ կանաչ խոտ ձեռներին տուն են հասնում և շնորհաւորում են իրենց ծնողների, կեսուր-կեսրայրի և մեծերի պասը։

Զհարմհալում մոռացած է արդէն նախբաթողի պաս, հոբթաթողի պաս, սակայն յիշւում է «Գարեխշի պասը», որ արդէն գարին հասնելու վրայ է և շուտով կը հնձեն։

Աղուհացայ ընթացքում Զհարմհալի բոլոր եկեղեցիներում կատարւում է առաւօտեան ինններորդ ժամի և երեկոյեան խաղաղական ժամերգութիւնները։ Երբեմն էլ հսկում են կատարում։

Միջինքի կիրակին առանձին արարողութիւն չունի։

ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Լուսաւորիչ Գրիգորի երկու տօներն էլ հանդիսաւորապէս տօնում են, Պատարագ է մատուցւում, բոլորը եկեղեցի են գնում և այդ օրը սուրբ պահում։

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ծաղկազարդ կամ «Ձառգարթար»ը Զհարմհալում մեծ հանդէսով են տօնում։ Լուսաբացից շատ վաղ եկեղեցու զանգակները զողանջում են և ժողովուրդը շտապում է ժամ։ Հսկումն է, դարձեալ նորահարսները, աղջիկները և մանուկները մի-մի մոմ կամ «բուրջ» վառած կանգնում են եկեղեցու վերջին շարքերում՝ մինչև ժամասացութեան վերջանալը։

Երբ եկեղեցում բաժանւում է «ծառգարթարը», երեխաները մի կամ մի քանի ճիւղ ձեռքերում բռնած դուրս են գնում եկեղեցուց և սկսում են շրջել գիւղի տները՝ ծառգարթար հաւաքելու։ Ամեն մի տուն մտնելիս երգում են.—

— Ծառգարթար, ծառին զարթար.
Սև եղին՝ սև սամաթել,
Կարմիր եղին՝ նոզուլ ու կոճակ,

Հնգերս ընկաւ ծոմն ու ծառաւ.
Ապրի ձեր դաքւորցուն,
իմ փայ ծառդարթարը տուէք։

Տանեցիները մի բուռ չամիչ, փշատ, աղանձ, կամ ուրիշ «եմիշ» են տալիս ու ճանապարհ ձգում։ Այսպէս հերթով շրջագայում են բոլոր տները, երգում ու բաժին ստանում։

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Երեկոյեան ժամերգութիւնը կատարւում է եկեղեցիներում իսկ Տըրնդէզը՝ բակում, որտեղ նախապէս հաւաքած են լինում խարոյկի համար վառելանիւթի մի դէզ։ Քահանան տալիս է նորապսակների ձեռքը մի վառած մոմ, նրանք էլ շրջան կազմած դէզի շուրջը սպասում են «Կեցո»ին։ Սկսելուն պէս, ամեն կողմից, ձեռքերի վառած մոմերով վառում են խարոյկը։ Քահանան ու տիրացուները երգում են «Քրիստոս փառաց թագաւորն» իսկ ջահելներն թռչում են կրակի գլխից։ Կրակի մոխրից տանում են իրենց տները և ածում ալիւրի փեթակի, գոմի, հաւաբնի ու շտեմարանի շէմքերին, որ Աստծու բարաքաթը անպակաս լինի։ Եթէ բոցավառ ցախ, կամ մոմի լոյս բերել են եկեղեցուց՝ դրանով էլ վառում են ճրագները։

Հաւատացած են, որ խարոյկի ծուխը որ կողմից գնայ՝ տարեայ այդ կողմի բերքը անփնաս և առատ կը լինի։

ԱԻԱԳ ՇԱԲԱԹ

Աւագ շաբաթայ բոլոր ժամասացութիւններին ունկընդրում է Զհարմհալի հայը քիչ բացառութեամբ, մանաւանդ Դոնաբացէքի, Աւագ հինգշաբթի։ Ոտնալուայի և Խաւարում գիշերը։

ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Առաւօտեան ժամի տասին պատարագ է մատուցւում եկեղեցիներում. ապաշխարողները խոստովանում ու ճաշակութիւն են ստանում։

Երեկոյեան, Ոտնալուայի ժամանակ, կրկին գնում են եկեղեցի. տանտիկինը իր հետ տանում է թարմ կարագ, մի քանի հատ հաւկիթ, մի քանի հատ մոմ և մի փոքր խունկ։ Վերջին երկուսը եկեղեցում գործածելու, կարագը՝ ժողովրդին բաժանելու, իսկ հաւկիթները՝ քահանայի զատկաբաժին։

Եկեղեցու բեմի վրայ սպիտակ սփռոցի վրայ դրուած է կոնքը՝ հինգ-վեց հատ մոմերով լուսաւորուած, ջրի սափորը, մի փոքր բամբակ, ղենջակը, հաւաքած կարագից մի փոքրիկ պնակով և աթոռը, որի վրայ պէտք է նստեն աշակերտները և լուացւի իրենց ոտները։ Աշակերտները ժամաշապիկ հագած, պատրաստ կանգնած են սեղանի աջ ու ձախ կողմերում։

«Զբօրհնեաց կանոն»ը վերջանալուց յետոյ՝ քահանան կապում է ղենջակը, նստում աթոռի առջև ու հերթով լուանում աշակերտների ոտքերը։ Դպիրները երգում են «Այսօր անճառ» շարականը։

Մինչև քսաներորդ դարի սկիզբները սովորութիւն էր լուանալ գիւղի ծերերի ոտքերը և ոչ աշակերտութեանը։

Արարողութիւնը վերջանալուց յետոյ, քահանան կարդում է աւետարանը դէպի տրևմուտ, վերջանալուց յետոյ դարձնում են դէպի արևելք, երգւում է «Կեցեն», ասում է պահպանիչը, ապա իջեցնում են։ Ժողովուրդը մօտենում է համբուրում քահանայի ձեռքի աւետարանն ու խաչը, ստանում մի փոքր կարագ, երեսն ու ձեռքերը շիելու, որպէսզի այդ տարին երջանիկ լինի իրենց համար։

ԽԱԻԱՐՈՒՄ ԳԻՇԵՐ

Երեկոյեան ժամի 9-ին ծանր զոդանջում են եկեղեցու զանգակները, ժողովուրդը հաւաքւում է եկեղեցի, «Սաղմոս քաղում». — Ութ կանոն սաղմոսը բաժանում են մի քանի հոգու, որ ամբողջապէս քաղեն (կարդան)։ Երբ վերջանում է ամբողջ 150 գլուխ Սաղմոսը, քահանան օրհնում է ժամը և սկսւում է ծանր, աւելի ճիշտ ողբաձայն ժամերգութիւնը։ Յետոյ կատարում են Խաչելութեան կարգը և վերջում կարդում են Աւագ Ուրբաթի «կտակը»։ Ժամասացութիւնը տևում է մինչև առաւօտեան ժամի մէկից երկուսը. որովհետև «կատարումն ամենայն գրելոց» է։

Աւագ Ուրբաթ օրը կանայք լուացք չեն անի, բաղնիս չեն գնայ, որովհետև «Զուրը մեռելներինն է» այդ օրը։

ԶԱՏԻԿ

Թէ «Թաթախ» երեկոյեան և թէ Զատիկ առաւօտեան ժամերգութիւնը այնքան էլ տարբերութիւն չունի Ամենընդեան տօնից. նոյն նախատօնակը և հանդիսաւոր Պատարագն է մատուցւում։ Կեթակրեղէնաց պատրաստութիւնն էլ գրեթէ նոյնն է, փլաւ, ձկնեղէն, ձուեղէն, բայց ոչ մսեղէն։ Աւելանում է ձու ներկելը։ Ամբողջ աղուհացի ընթացքում, պահքի պատճառով հաւաքւած հաւկիթները ներկում են զանազան գոյներով. գլխաւորապէս՝ կարմիր։ Թաթախ երեկոյեան, երբ եկեղեցուց վերադառնում են տուն, իւրաքանչիւրը մի հատ կաւկիթով պաս է բանում, ապա ընթրում։

Կիրակի առաւօտեան եկեղեցին արձակելուց յետոյ իրարու շնորհաւորում են. — «Զեզ և մեզ մեծ աւետիք, Քրիստոս յարեաւ ի մեռելոց». կամ շնորհաւոր սուրբ յարութիւնն Քրիստոսի», որին պատասխանում են.— «Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»։

Երիտասարդները և պատանիները հաւաքւում են գիւղի հրապարակում և ձու խաղում, իսկ Չահել աղջիկներն ու հարսները քիչ հեռւում «Շարքօղչա» պարում։ Մինչև երեք օր գործի չեն գնում։

Սոյն խաղերը կրկնում են կանաչ-կարմիր Կիրակի օրը (կրկնազատիկ)։ Զատիկը ամենամեծ տօնն է Չհարմքհալի հայ ժողովրդի համար։ Մինչև Համբարձում երեկոյեան զանգերը խփելուց յետոյ կանայք որևէ գործ չեն անում «հաւկուր է»։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Համբարձման նախօրեակին, Զորեքշաբթի երեկոյեան դէմ, Չհարմհալի հայ աղջիկներն ու հարսների գիւղից խումբ-խումբ դուրս են գնում մօտակայ աղբիւրի կամ բլուրի վրայ, փոքր ինչ զբօսնում, պարում, ծաղիկ քաղում ու վերադառնում իրենց բնակարանները։

Հինգշաբթի առաւօտեան, մինչև Պատարագի արձակելը, տանտիկիններն արդէն պատրաստել են զանազան անուշահամ կերակուրներ, փլաւ, կարագ, գաթա, քամած մածուն, թէյի սարք և ինչ որ հարկաւոր է Համբարձման տօնի սեղանը ճոխացնելու համար։ Միւս կողմից էլ երիտասարդները թամբում են ձիերը, համետում էշերը և «քաշած-խուրջինը» ձգում վրան։ Կերակրեղէնները և այլ հարկաւոր բաներ լցնում են խուրջինների մէջ. փոքրիկներին և կանանց նստեցնում վրան ու «Սար են գնում»։ Մօտակայ բարձր սարերից մէկի վրայ, մի կաթնահամ աղբիւրի մօտ իջնում, տեղաւորւում են խումբ-խումբ։ Փոքրիկ վրաններ են սարքում արևի ջերմութիւնից պաշտպանւելու համար, մածունը և կարագը դնում են աղբիւրի պաղ ջրի մէջ և «սմավարը գձում» ու սկսում են թէյ վայելել։

Չահելները՝ հարս, աղջիկ, տղայ բարձրանում են սա-

ըի գագաթը ծաղիկ փնջում, լոլոգ, խավրծիլ, պռաս և այլ բոյսեր քաղում և վերադառնում են աղբիւր։

Բացւում են սեղանները (սփռոցները) շարում վրան «Աստծու տւած նաղ ու նահմաթը», հրաւիրում են իրենց ազիզ բարեկամներին, կենացներ խմում, օրհնութիւններ ու բարեմաղթութիւններ ասում, ապա ճաշում։

Ճաշից և թէյից յետոյ հասակաւոր կանայք «փեսատես» են գնում, որը փոխարինւում է «հարսատես»ով, տանում են մի կտոր շաքար, մի փոքր նուշ ու չամիչ կամ ուրիշ քաղցրեղէն։ Փեսացուն կանգնում է տեղից, զոնքանչը իր տարած քաղցրեղէնը լցնում է նրա գրպանը, համբուրում է թուշը, խնամոնց հետ մի բաժակ թէյ խմում և վերադառնում է։ Նմանապէս տեղի է ունենում Համբարձման «հարսնատեսը»։

Երեկնապահին, երբ արևը թեքւում է և օդը զովանում, սկսւում է խաղերը՝ դհոլ-զուռնայով և ձիարշաւը, պարերը, երգել ու գւարճանալը։ Երգում են ՉԱՆ գիւղում և վիճակի երգեր։ Վիճակահանութիւն չկայ Զհարմհալում։ Մայրամուտին վերադառնում են գիւղ։ Այս դաշտահանդէսին չեն մասնակցում ծերերը, պառաւներն ու քահանաները. նրանք մնում են գիւղում։

Միւս տօները առանձին ծիսակատարութիւն, կամ հանդիսաւորութիւն չունեն, բացի Վարդավառի ջուր սրբսրկելու սովորութիւնը և Աստւածածնի Վերափոխման օրը՝ «Աղոթօրհնէք»։

Այստեղ աւելացնենք Վերին Քոնարքցի պ. Ղազար Գէորգեանի «Համբարձումը գիւղի» գրւածքից մի հատւած.—

Համբարձման տօնին լոյսը չծագած
Ամենքի տան մէջ նոր կեանք է մտած.

Ելնում են ուրախ ջահել տղաներ
Վազում, համեստում իրենց գրաստներ։
Հարուստ թէ աղքատ՝ օր առաջ եփած
Իրենց կերակուր. կապած-կապկպած,
Բերում են բառնում ու վրան նստում,
Շարքեր են կազմում ու ճամբայ ընկնում։
Գնում են ուրախ, ասում, ծիծաղում,
Հանաքներ անում, անվերջ քրքջում.
Եւ շատ անգամ էլ ծանօթ ընկերներ
Գրկում են իրար, քաղում համբոյրներ։
Կէսօրւայ ճաշին սեղան բաց արած,
Նստում են մէկ տեղ, իրենց հետ բերած
Պէս-պէս կերակուր իւղալից, անուշ,
Քաղցր հալւաներ, գաթէք կարմրաթուշ։
Ճաշը լրացած, կերած, կշտացած,
Տղայ ու աղջիկ մէկ խօսքի կանգնած,
Գնում են, խնդրում, զուռնաչուն բերում,
Սազով, թմբուկով խաղլիս են, պարում։
Երբ երեկոյեան արևը կամաց,
Ուզում է իջնել սարիցը դէպ ցած,
Ողջ խումբը նորից էշերը նստած,
Դառնում է դէպ գիւղ յոգնած ու դադրած։

Վերին Քոնարք Ղազար Գէորգեան
31—1—36

ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Մինչև քսաներորդ դարի սկզբներին Զհարմհալում, ինչպէս նաև պարսկահայ միւս գաւառներում, արգելւած է եղել տղայ և աղջիկ իրարու ծանօթ լինեն, կամ նախապէս իրարու տեսած, սիրած լինեն և նշանւեն. այս

բանը բոլորովին վերապահված էր ծնողներին։ Որևէ աղջիկ, որին տղայի ծնողները հաւան էին՝ նա տղայի բախտն էր, տղան իրաւունք չունէր ծնողների ընտրութեան դէմ լինելու կամ առարկելու. մի խօսքով բաց աչքով, բայց կոյր-կոյր ամուսնանում էին։ Նոյնպէս էլ աղջկայ իրաւունքը իր ծնողներինն էր. որևէ մէկի հետ ամուսնացընելը իրենց քմահաճոյքն էր, որը մեծ դժբախտութիւնների պատճառ էր դառնում։ Շատ դժբախտ դէպքերի ականատես ենք եղել, կամ լսել ենք շատերից, որոնց յիշատակելն այստեղ աւելորդ ենք համարում. միայն նշենք, որ այդ ձևով ամուսնացողներից դեռ առաջին տարին չբոլոցած, լքել են կին, ծնողներ, տուն տեղ ու միանգամ ընդմիշտ հեռացել։

Հազիւ 40—50 տարի է, ինչ սովորութիւն է դարձել տղայ աղջիկ իրարու տեսնելը, հաւանելը և նշանուելը։

Այժմ անցնենք Զհարմհալ գաւառի այժմեան սովորական ծեսին։ Երբ տղան և աղջիկը իրարու սիրում են ու «խօսք տալիս», յայտնում են իրենց ծնողներին։ Տղայի ծնողները իրենց մօտ բարեկամներից, կամ ազգականներից մէկին ուղարկում են աղջկանց տուն «խնամախօս»: Գնացողը ներկայանում է հետեւեալ ձևով.— Հասնում է տեղ, սովորական բարևից յետոյ՝ նստում, փոքր ինչ զրուցում և «խօսք է բանում»։ «Ինամի Գրիգոր, կամ քաւոր,— ասում է նա,— ես առաջի անգամ չէ օր էկել եմ ձեր տունը, բայց էս անգամ, Տիրոջ կամքով, մէ ուրիշ նպատակի համար է. էկել եմ խնդրեմ, ձեր բոլորի հաւանութեամբ և Աստու օգնութեամբ մէ ծաղիկ քաղենք ձեր բաղից»։ Տանտէրն արդէն գիտէ իր հիւրի գալու նպատակը, բայց հէնց առաջին անգամ խօսք չեն տալիս, այլ պատասխանում են.— «Շատ լաւ կը մտածենք և ձեզ լուր կը տանք. եթէ նեղութիւն չի լինի համեցէք մեզ մօտ միւս կիրակի օր» կամ մի ուրիշ օր են նշանակում։

Մի փոքր զրուցելուց յետոյ, հիւրը մնաք բարև է ասում և հեռանում։ Եթէ աղջկայ ծնողները և աղջիկը սկզբից չեն սիրում տղային, հէնց առաջին անգամ պատասխանում են նրան այսպէս.— «Աստուած ձեր տղին պահի ձեզ համար, մեր աղջկան էլ մեր համար»։

Երբեմն էլ պատահում է այս գնալ-գալը երկար ժամանակ շարունակւում է ու յաջող կամ անյաջող արդիւնքի հասնում։

Որոշած օրը խնամախօս գնացողը կրկին գնում է աղջկանց տուն, անշուշտ նրանք էլ նախօրօք խորհրդակցում են իրենց ազգականների ու բարեկամների հետ։ Այն տեղ հաւաքւած են լինում աղջկայ մօտիկ ազգականները։ Խնամախօսը կրկնում է խնդիրը և սպասում պատասխանի։ Բազմականները նայում են աղջկայ ծնողներին, կամ մեծ պապին ու մամին (եթէ ունի) տեսնեն ինչ են պատասխանում։ Նրանք, հիւրերին յարգելու համար ասում են.— «Ճիշտ է, աղջիկը մերն է, բայց ըխտիարը (իրաւունքը) այսօր մեր տան մէջ եղող բոլորինդ է։ Ներկաներն էլ, իրենց հերթին ասում են.— «Ըխտիարը մեծ պապինն ու մամինն է, հօրն ու մօրն է»։ Այսպէս մի քանի անգամ «ըխտիար» անելուց յետոյ, ի վերջոյ իրաւունքը տրւում է մէկին, որպէսզի խնամախօս եկողին մի պատասխան տայ։ Նա, որին տրւել է «ըխտիարը», ասում է «Շատ լաւ, հիմա որ իրաւունքը տւեցիք ինձ, ես էլ բոլորիդ կողմից խնամուն ասում եմ՝ շնորհաւոր լինի, աչքներդ լուս, Աստծու օրհնութիւնը իրենց վրայ լինի, հազար տարեկան դառնան»։ Խնամախօս եկողը գրպանից հանում է իր հետ բերած մի կտոր շաքարը, որի վրայ կարմիր կանաչ թելով կապած է մի կանաչ ակնով մատանի, գնում է մէջտեղ. բերում են աղջկան, խնամին վեր է կենում տեղից, մատանին դնում է նրա մատը, որպէս «քէլգա», ճակատը համբուրում և օրհնում է։

կոտրում են շաքարը, կէսի վրայ նոյնպէս կարմիր-կաթել կապում ու վերադարձնում են խնամոնց՝ ի նշան համաձայնութեան։ Շաքարի միւս կէսով իրենք թէյ են խմում հիւրերի հետ միասին և ուրախանում։ Սա կոչւում է «քալէ առնել» (խոստում)։

Տղայենց տունը անհամբեր ոպասում են խնամախօս գնացողի վերադարձին։ Նա գալիս է, խնամոնց յետ ուղարկած շաքարի կտորը մէջտեղ դնում, աչքալոյս տալիս. բոլորն էլ ուրախանում են, բերած շաքարով թէյ են խըմում և շնորհաւորում։

Յաջորդ օրւանից բոլոր ազգական-բարեկամները և դրացիները գալիս են շնորհաւորանքի։

Կայ նաև «հաս և չհաս» արենակցական և խնամիական արգելքներ։

ԽՆԱՄԱՊԱՏԻՒ ԿԱՄ ՓԵՍԱՏԵՍ

Խնամոնց խոստումն առնելուց մէկ շաբաթ յետոյ, տղայի ծնողները պատրաստութիւն են տեսնում «խնամապատիւ անելու»։ Պատրաստում են կերակուրներ, թէյ, քաղցրեղէն, պտուղ և այլ բաներ։ Նշանակած օրը աղջկայ ծնողները, իրենց բոլոր բարեկամների ու ազգականների հետ միասին գալիս են։ Քիչ յետոյ աղայի բարեկամներից մէկը ներկաներից խնդրում է, որ իրաւունք տան փեսացուն ներկայանայ. «ձեռ պաչի»։ Երբ արտօնութիւն են գրտնում, փեսացուն դուրս է գալիս, նախ քահանայի և տանուտիրոջ ձեռքն է համբուրում, յետոյ աներոջ և միւս հիւրերի։ Նրանք էլ փեսացուի երեսն են համբուրում և օրհնում։ Սկսւում է ուտել-խմելը։ Ճաշից կամ ընթրիքից յետոյ առաջ են բերում խնամոնց բերած «թաբաղը»։ Թաբաղի մէջ կայ՝ մի գլուխ շաքար, մի քանի զոյգ գուլպայ, թաշկինակներ և ուրիշ ընծաներ։ Անցնում է առաջ աղջկայ մեծ մամը, կամ մի պատւաւոր հիւր և սկսում է բաժանել իւրաքանչիւրին «իր պատւի լայեղ» մի բան։ Խնամիքն էլ շնորհակալ են լինում, աչքալուս տալիս և գնում են։ Իսկ կանանց դասը, որ մի առանձին սենեակում է, թէյից առաջ բերում են փեսացուին, մէջտեղ կանգնեցնում. նախ զոքանչն է վեր կենում տեղից, ճակատը համբուրում, իր բերած մետաքս թաշկինակը կապում է վզից, մի կտոր շաքար դնում ծոցը, քաղցրեղէն կամ չամիչ ածում գրպանը, կրկին համբուրում ու գնում է տեղը նստում։ Ապա միւսները հերթով հետևում են նրան. իրենց բերած «շիրինին» ածում են փեսացուի գրպանը։

Կանանց խմբին ևս բաժանւում է նէբը, որոնք ըստանալուց յետոյ շնորհաւորում են և գնում։ Եթէ խնամիքը ուրիշ գիւղից են եկել, մի երկու օր հիւր են մընում խնամոնց մօտ ապա մեկնում։

Անցեալում հարսնացուն սկեսուր-կեսրայրի, տագերների և նրանց մօտաւոր ազգականների ու քաւորի հետ «լալ» է եղել, չի խօսել նշանած օրւանից մինչև մի քանի տարի պսակելուց յետոյ, կամ մինչև մահը։

ՀԱՐՍԱՏԵՍ

Այնքան էլ տարբերութիւն չունի հարսատեսի սովորութիւնը փեսատեսից, այստեղ միայն աւելանում է «բելդահը», որը պատրաստում է տղայի մայրը։ Մի մեծ մատուցարանի մէջ դնում են մի գլուխ շաքար, որի վերայ կանաչ-կարմիր թելով կապած է լինում հարսնացուի մատանին և մի շարան կանթած արծաթ դրամ։ Շաքարի շուրջը դնում են 6 — 12 հատ դաթայ, երկու պնակ քաղցրեղէն, մոտ մէկ լիտր կանաչ չամիչ, նուշ և ուրիշ մրգեղէն, 20 — 40 հատ ներկած հաւկիթ, մի պնակ հալւայ։ Մատուցարանը սաւանում են մետաքս թաշկինակով։ Բերում են նաև մօտիկ ազգականները մի-մի փրքրիկ «փայ»,

առանձին-առանձին մատուցարանների մէջ։ Երբ բոլորը պատրաստ է, կանանց թափորը շարժւում է դէպի խնամոնց տունը։ հարուստները՝ դհոլ զուռնայով, տղամարդկանց խումբն էլ միացած, երգելով ու պարելով։

Երբ հասնում են խնամոնց դուռը, խնամիքը բոլորը դուրս են գալիս ընդառաջ, ձեռք սեղմում ու ներս հրաւիրում նրանց։ միւս կողմից էլ փաքարը (գգիր) փող է կանչում»—1-5 ռիալ նուէր է տալիս իւրաքանչիւր մէկին։ Նա դրամը ափի մէջ առած ձեռքը բարձրացնում է օդի մէջ և ձայնում.—«Շէն կենայ խնամին մէ լաւ օսկի»։ դրամը դնում է պարողի ափի մէջ, կամ լաչիկի ծայրին կապում։ Ապա բոլոր մատուցարանները վերցնում են պարողների գլխից ու ներս տանում։ Թէյ են խմում, թէյից յետոյ խնամիքը խնդրում են որ հարսին դուրս բերեն։ Հարսնաքուրը, կամ մօտիկ ազգականը բռնած հարսնացուի բազկից բերում է։ Սկեսուրը վեր է կենում ճակատը համբուրում, վզից կախում է բերած վզնոցը, քաքցրեղէն ածում գրպանը ու գնում նստում է իր տեղը։ Միւս բարեկամներն էլ իրենց բերած քաղցրեղէններն ու նուէրներն են տալիս նոյն ձևով։ Յետոյ հարսնացուին տանում են տղամարդկանց մէջլիսը։ Առաջ սկեսուրը բարձրանում է տեղից, համբուրում է և փող կապում—2-10 թուման դնում է պնակի մէջ, որը հարսնաքուրը պատրաստ ունի իր ձեռքում. ապա բոլոր տղամարդիկն էլ 1-2 թուման նուիրում են։ Այ բոլոր դրամները հարսնացուն կանթում է և աւելացնում է իր վզնոցի վրայ։ Վզնոցը շարում են ուլունքներով երկու-երեք հատ ուլունք են դնում և մէկ արծաթ դրամ՝ մինչև շարանը լրանայ, Բայց մէջտեղում դնում էին «Շաղերով 5 ռիալանոց»։ Վզնոցը լինում էր երեք—վեց շարք։ Հարսատեսք վերջանալուց յետոյ, ճաշում էին, թէյ էին խմում ու վերադառնում։

ՓԱՅ ՏԱՆԵԼ

Տարեայ գլխաւոր տօներին, այն է՝ Ծնունդ, Բարեկենդան, Զատիկ, Համբարձում, Վարդավառ և Աստուածածին, սկեսուրը հարսի համար «փայ» է ուղարկում։ Փայը բաղկացած է լինում մի քանի դաթայից, մի քիչ քաղցրեղէն, կամ չամիչ և մի պնակ հալւայ։ Փոքրիկ մատուցարանի մէջ դրած, երեսին թաշկինակ քաշած ուղարկում են հարսնացուին։

Հարսնացուի մայրն էլ, փոխադարձաբար, նման տօներին փեսացուի համար է ուղարկում։

Մօսեցեալները առ նուազը մնում են վեց ամիս, ապա պսակւում են. երբեմն էլ տևում է մինչև երկու տարի։ Կար նաև մանկութիւնից նշանելու սովորութիւնը, բայց արդէն վերացել է։

ՀԱՐՍԱՆԻՔ

Զհարմհալի հարսանիքները մեծ մասամբ տեղի են ունենում աշնան վերջերին և ձմեռը, երբ գիւղացիութիւնը իր դաշտային ամեն աշխատանքները վերջացրած հանգիստ է առնում։

Հարսանիքից մէկ շաբաթ առաջ տղայի և աղջկայ ծնողները «չիթի» (հրաւիրատոմս) են ուղարկում հարեւան գիւղերի իրենց բարեկամներին, որի մէջ, անշուշտ, նշանակած է պսակի օրը և թւականը։ Հրաւիրեալները գալիս են մի օր հարսանիքից առաջ. երեկոյեան սկսում է «զօղեր»։ Մորթում են մսացուն, պատրաստում են իւղ, բրինձ և այլ հարկաւոր իրեր։ Նախօրօք «նախշում» են հարսանքատունը. տան սև առաստաղի վրայ և որմերին ալիւրով զանազան ծաղիկներ, թռչուններ և թփեր են նկարում։ Տան մուտքի հանդիման, վերի պատից կախում են մի մեծ գորգ կամ «քաշած կարպետ», որի վերի երկու ծայրերին կախում են մի-մի հաց, որ թագաւորն

ու թագուհին «ռուզով լինեն»։ Գետնին դնում են մի բարձ որ թագաւորը և հարսը կանգնեն վրան։

Հարսանիքը Ջհարմհալում

Նոյն օրը փեսացուն քաւորի և փեսաախբօր հետ գընում են գիւղի նոր ննջեցեալ ունեցողների տունը, ձեռք համբուրում և իրաւունք խնդրում ամուսնանալու։

Բարկակտրեք.—Փեսացուի ծնողների կողմից մէկ-երկու հոգի ուղարկւում է հարսնացուի ծնողների մօտ «բարկակտրէք»ի։ Գնացողները սովորական հարց ու բարևից յետոյ՝ խօսք են բանում, թէ նախ իրաւունք տան խնամիքը հարսանիքի պատրաստութիւն տեսնեն, երկրորդ՝ աղջկայ ծնողները ի՞նչ պահանջ, կամ առաջարկ ունեն։ Նրանք էլ նայած աղայի տնտեսական կարողութեան, ասում են, օրինակ, 5 լիտր բրինձ, մէկ ոչխար՝ մորթելու համար, 2 քեալլա (գլուխ) շաքար, 10 լիտր շիրինի (քաղցրեղէն, չամիչ, փշատ, կամ նօխուանչի—բոված սիսեռ) և մի 50 թուման դրամ։ Փոքր ինչ սակարկութիւ-

Կանայք հարսանիքում պարելիս

նից յետոյ, համաձայնութեան են գալիս, որոշւում է քանակը և գալացողները վերադառնում են։

Զողվի իրիկուն.—Հարսանիքատէրը երեկոյեան «կանչ» է ուղարկում։ Երկու երիտասարդներ շրջում են գիւղի բոլոր տները և հրաւիրում հետեւեալ ձևով. «Ինամի կամ քաւոր Մատթէոսն ասում է համեցէք, այս իրիկուն արիք միասին զողվ անենք»։ Տան մեծաւորը պատասխանում է.—«Աչքներդ լուս, Աստուած շնհաւոր անի, բարով կապենք կարմիրդ, բարով միւսների կանչը ման գաս. բարի է, կը գանք»։ Հրաւիրողը բարի գիշեր է ասում և անցնում է միւս տները։

Թագաւորի և հարսնացուի մայրերը արդէն ցերեկով անձամբ շրջել են և հրաւիրել կանանց՝ նոյն փոխադարձ օրհնութիւններով ու բարեմաղթութիւններով։

Երեկոյեան հաւաքւում են ջահելները, երեխաներն ու մօտիկ ազգականները և ընթրում են։ ապա նստում գիւղի սաղը. պարում են մինչև մի երկու ժամ, ուրախանում և գնում են հանգստանալու։

Դամբորահամամ. — Թագաւորի և հարսի բաղնիս տանելը: — Առաւօտեան վաղ խաչեղբայրը գալիս և խնդրում է «Դաքւորին համամ տանի». երբ իրաւունք է գտնում ծնողներից, կամ մեծաւորներից, թագաւորին, փեսաեղբօրը և մի քանի հոգի էլ հասակակիցներ վերցնում է իր հետ և գնում են գիւղի բաղնիսը. լողանալուց յետոյ գընում են խաչեղբօրանց տուն, այնտեղ թէյ են խմում և ճաշում: Գալիս է սափրիչը, սափրում է նախ թագաւորին, յետոյ՝ միւսներին. սափրելու ժամանակ նէր է պահանջում թագաւորից, նա էլ մէկ կամ երկու թուման վճարում է։

Թագաւորենց տանը, թագաւորի հագուստները դնում են մի ափսէի մէջ մի փոքր չամիչ, կամ փշատ էլ ներքնում, դնում են մի ջահել աղջկայ կամ հարսի գլխին. փչում է սազ ու դափը. հարսներն ու աղջիկները պարելով գնում են քաւորենց տուն. երիտասարդները խմբովին բարձր ձայնում են.—

«Դաքւորի երեսը պարզ,
Տղամարթիքն ապրած,
Դաստ-բըդաստ,
Դուշմանը սաստ,
Ձին վազգուկ,
Թուրը կտրուկ,
Երկնքին ցօղ, գետնէն պտուղ... հո՛յ շօբո՛շ, հո՛յ շօբո՛շ...

Հասնում են խաչեղբօրանց տուն. հագուստ բերող աղջկան կապում են մէկ ռիալ, կամ աւելի դրամ և առնում են փեսայի հագուստները նրա գլխից, ներս են տանում տուն և հագցնում թագաւորին։ Գլխարկի վրայ կապում են խոչաձև մի մետաքսեայ թաշկինակ, ի նշան թագի։ Փչում են սազ ու դափը, թագաւորը տանից դուրս է գալիս ու կանգնում. նրա աջ կողմում՝ խաչքաւորը, իսկ ձախ կողմը՝ փեսաախպէրն է կանգնում։ Սկսւում է

«Դաքւորատեսը». բոլոր բարեկամ կանայք ձեռքերին պատրաստ ունեն մի ափսէի մէջ՝ երեք կտոր դանդ, երեք թէյի պնակ չամիչ կամ քաղցրեղէն. թագաւորի ճակատը համբուրում են, մի կտոր դանդ դնում ծոցը, մի պնակ չամիչ ածում գրպանը, երբեմն էլ մի փոքրիկ թաշկինակ կապում վզին ու հեռանում, հերթը տալով ուրիշներին։ Այստեղ «տեսնում են» միայն խաչեղբօրանց մօտիկ բարեկամները, միւսները գնում են թագաւորենց տուն։

Թափորը շարժւում է դէպի թագաւորենց տուն կըրկին երգելով, պարելով և սազ ու դափ ածելով։ Հասնում են դաքւորենց դուռ. այստեղ լրացնում են «Դաքւորատես»ը, ովքեր որ խաչքաւորենց տանը չեն «տեսել» այստեղ իրենց դանդն ու չամիչը բերում նուիրում են։ Վերջանալուց ու նուագը դադարելուց յետոյ, թագաւորը, խաչեղբայրը և փեսաղբերը մտնում են տուն ու կանգնում «փարդի առջև». իսկ թափորը սազանդարին ու դափաչուն առած գնում են հարսին «համամից դուրս բերեն»։

Հարսը նմանապէս իր ազգականների մօտ է լինում. թափորը հասնում է այնտեղ, հագցնում են, գլխին կարմիր քող գձում և տանից դուրս բերում, Հարսատեսը այնքան էլ տարբերութիւն չունի «դաքւորատես»-ից. միայն թագաւորի մետաքս թաշկինակի փոխարէն՝ հարսին նուիրում են լաչիկ։

Ինչնում են բակ ձին պատրաստ է, վրան էլ մի նախշուն «խուրջին քաշած» և բաշը զարդարած մի չափայ թաշկինակով։ Հարսին նստեցնում են, զգիրը բռնում է սանձը, դանդաղ շարժւում են դէպի հօրանց տուն՝ նուագելով, պարելով ու «շօբոշ» ձայնելով։ Դարպասի մօտ իջեցնում են ձիուց. այստեղ էլի շտրունակւում է «լաչիկ կանչել»ը։ Բարեկամները մի կամ մի քանի ռիալ դրամ տալիս են զգիրին, նա էլ ափի մէջ առած, ձեռքը բարձր բռնած կանչում է. — «Շեն կենայ (օրինակի համար) Մի-

նաս Օվանէսի, մի լաւ լաչիկ է բերել հարսին»։ Վերջանում է, ներս են տանում հարսին ու կանգնեցնում «փարդի առջև»։

ՆՇԱՆ ՏԱՆԵԼ, ՆՇԱՆ ՕՐՀՆԵԼ ԵՒ ՇԻՐԻՆԻ ԲԱԺԱՆԵԼ

Միևնոյն օրը կատարւում է նշան տանել ու բերելը։ Նշանը պատրաստում են մի մեծ ափսէի մէջ, կենտրոնում մի դանդ, որի վրայ կապած են հարս ու թագաւորի մատանիքը՝ մեռաքսէ կանաչ կարմիր թելով։

Տղայի ծնողները իրաւունք են խնդրում խնամիներից և նւագով, պարելով ու «Դաքւորի երեսը պարզ» կանչելով նշանը տանում են խնամանց տուն։ Դռան առջև «փող են կապում» նրան, որի գլխին դրած է նշանը ապա վերցում ներս են տանում ու դնում են բազմականների առաջ։ Քահանան իրաւունք է հարցնում և սկսում նշան օրհնել։ Նշանօրհնէքը վերջանում է քահանայի պահպանիչով. բոլորը աչքալուսանք են տալիս, նոր զոյգերը փոխանակում են մատանիները, յետոյ բաժանում են շիրինին։ Բոլոր ներկաներին տալիս են մի-մի թէյի պնակ չամիչ կամ փշատ, կամ մի ուրիշ միրգ։ Շիրինին տղայի հաշւին է։

Աղջկայ ծնողները վերադարձնում են խնամանց նշանը նոյն ձևով. այնտեղ ևս շիրինի են բաժանում, բայց նշան օրհնել չկայ։

Ծաղկի իրիկուն, որը կոչւում է նաև Դաքւոր լուսացած իրիկուն։ Սովորական ձևով հրաւիրում են գիւղի բոլոր հասարակութեան թագաւորենց տուն, նաև լանգառի մէջար և գդալ։ Քաւորենց տանից բերում են «քաւորածաղիկ»ը, որը թագաւորի կողմից ուղարկած մի գլուխ դանդն է՝ այժմ զուգած։ Ափսէն դնում են պարողներից մէկի գլխին, շօրշ կանչելով, պարելով, դափ ու զուռնայի նւագով գնում են թագաւորենց տուն։ Նոյն ձևով է նաև

փեսաախպօր ծաղիկը։ Երբ հասնում են դռան առջև, գգիրը վերցնում է ափսեները, փող կապում բերողներին՝ թագաւորի կողմից ու ներս է տանում, դնում բազմականների առաջ և իրաւունք խնդրում ծաղիկ կանչելու։ Իրաւունքը տրւում է. առաջին հերթին բարձրացնում է խաչեղբօր ուղարկածը և բարձր ձայնով ասում.— «Շէն կենայ քաւորը, մի լաւ ծաղիկ է բերի թագաւորին»։ Յետոյ՝ փեսաախպօր բերածը, նմանապէս քահանայի, տանուտիրոջ և հասարակութեան։ Բացի խաչեղբայրը, փեսաախէրը թագաւորի անեռանք, միւսները բոլորն էլ տալիս են մէկ կամ մի քանի թուման դրամ, որ գգիրը «կանչելուց» յետոյ ածում է մօտը դրած պնակի մէջ. վերջում յանձնում են թագաւորի ծնողներին. եթէ ծնողներ չունի՝ խնամակալին, կամ մօտիկ ազգականին։ Ափսեների տակում լինում է մի երկու բուռ չամիչ. այդ էլ գգիրը տանում է իր «խիզան»ին։

Ծաղիկը կանչելուց անմիջապէս յետոյ, ընթրում են. քահանան օրհնում է սեղանը, նւագում են «հացի սազը»։ Այս բոլոր արարողութեան ժամանակ թագաւորը, խաչեղբայրը և փեսաախպէրը կանգնած են լինում «փարդի առաջ», բայց աշուղի սօհբաթն սկսելուց առաջ, իրաւունք են տալիս դնան ընթրեն, մի փոքր էլ հանգըստանան։

Մէջտեղ է գալիս աշուղը իր չունդուրով, աչքալուսանք տալիս և խնդրում հանդիսականներից մի «սօհբաթ» ասի, «Ջամիաթին» ուրախացնի։ Իրաւունքը տրւում է. նա ձեռքում բռնած չունդուրի, նախ մի «երիշլամա» է ասում (խրատա-բարոյական մի ոտանաւոր), ապա՝ «սօհբաթը։ Սօհբաթները գլխաւորապէս լինում են՝ «Աշուղ-Զարիբ», «Ռեհան-Սարդար», «Խան-Զօբան», «Թահար-Միրզա», Արքաբ-Ուզանդի» կամ ուրիշներ։ Վերջացնելուց յետոյ՝ Աշուղ Յարութիւն Օղլու յօրինած «յառաջ խնդ-

բեմ աստծանէ, որ ձեզ օգնական ըլլենայ, փեսայի և հարսի վրայ Աստծու շնորհ ըլլենայ» երգով։ Վերջում աղուղը չունգուրը մատեցնում փեսային, քաւորին, փեսաախպորը և յետոյ բազմականներին, որպէսզի ստանայ իր նուէրը. նրանք էլ մի քանի ռիալ դրամ են նուիրում։ Իսկ թագաւորի կողմից ստանում է իր վարձատրութիւնը։

Սօնքաթից յետոյ, հասակաւորները գնում են հանդըստանալու և ջահելները մնում են «ծառ գովելու»։ Նստում ու պարում են մինչև լուսաբաց, երբ թագաւորի մայրը բերում է «ծառը»։ Մի փոքրիկ մատուցարանի մէջ մի քիչ չամիչ, մի կտոր դանդ, կամ մի երկու հատ սերկևիլ է դրած, դնում են մէջտեղ, հասակաւորը կամ պատուաւոր հիւրը ծանր եղանակով մեներգում է.—

«Օրհնեալ է Աստուած, օրհնեալ է Յիսուս, օրհնեալ է Քրիստոս. Դաքւոր ի՞նչ բերենք քէ նման։

Քո կանաչ յարեի նման,

Էն սուսան սմբուլը, որ բացւել է,

Բացւել է քու կանաչ յարեի նման»։

Կրկնում են երեք անգամ, յետոյ խմբովին թնդացընում են—Սուրբ Կարապետայ օրհնութիւնով, օրհնութիւնով, ծառս ի ծաղկեցաւ. ծառ ծաղկեցաւ, ճիւղք բազմեցաւ կանաչ ու կարմիր։

Այսպէս երգում են բոլոր սրբերի անունով և յետոյ մեծաւորը կրկին մեներգում է.—«Գնացէք բերէք սելով սեղան, ծառ գովողին փայ է պիտի»։ Սրանով վերջանում է. ափսէի միջի չամիչը բաժանում ներկաներին, թէյ և նախաճաշ են տալիս։

ՊՍԱԿԻ ՕՐ

Լուսաբաց է արդէն, կանայք շաղախել են հինէն մի փոքրիկ գաւաթի մէջ, գաւաթը դրել են փոքրիկ ափսէի մէջ և մի հատ մոմ վառել կողքին։ Փչում են սաղ ու

դափը · հինայի մատուցարանը դնում են մի հարսի կամ աղջկայ գլխի և շրջել կանչելով ու պարելով գնում են հարսենց տուն։ Տան դռան փող են կապում հինա պարացնողին, հինէն գլխից վերցնում և ներս են տանում։ Հարսը կանգնած է փարդայի առաջ։ խնամիքը նրա ծնողներից «ռուսխաթ» են հարցնում, իրաւունքն ստանալուց յետոյ, թագաւորի քոյրը, կամ մօտ ազգականներից մէկը, հինէն ձեռին մօտենում է հարսին, ճակատը համբուրում է և գաւաթի հինայից, իր մատների ծայրով, խաչաձև քսում է հարսի երկու ափերի մէջ, յետոյ հարսը իր ձեռքով առնում է գաւաթի հինայից և շփում ձեռքերը. ապա՝ ներկայ եղող հարս-աղջիկները վերջացնում են գաւաթի հինան՝ քսելով իրենք ձեռքերին։

Փոխադարձաբար աղջկանց կողմից հինա են տանում թագաւորին նոյն ձևով։

Առաւօտեան պատրաստւում են թագաւորին տանել աներանց տուն «ձեռ ձեռ» տալու հարսնացուի հետ։ Տանից դուրս է գալիս թագաւորը, աջ կողքին է խաչեղբայրը, ձախ կողքին՝ փեսաախպերը, կայնում են իրենց դռան մօտ, փչում է գուռնան և դափը, կանայք մօտենում են կարմիրը կապելու։ Մայրը առնում է «կարմիր»ը ձեռքում պարում է, յետոյ գալիս մօտիկ, երեք անգամ կարմիրը շրջում է թագաւորի վզի շուրջ, համբուրում և տալիս է մի ուրիշին. նա էլ նմանապէս. մի քանի ձեռք անցնում է կարմիրը մինչև մէկին վիճակւում է կապելը։ Վերջինս կարմիրի վերին ծայրի կէսը անց է կացնում թագաւորի աջ ուսագլխի հագուստի մէջ։ Վերջանում է այստեղի արարողութիւնը. թափորը շարժւում է դէպի խնամոնց տուն, նւագով, պարելով և շրջել կանչելով. նրանց հետ տանում են նաև հարսի պսակի հագուստները. այստեղ կրկին փող են կապում հագուստներ բերող աղջկան և գլխից վեր առնում շրջերի մատուցարանը։

Քահանան պատրաստ է «Հանդերձ օրհնելու» կարգը կատարելու։ Բերում են հարս ու փեսային. աղջկայ հայրը բռնած նրա բազկից յանձնում է սկեսրարին հետեւեալ խօսքերով.— «Ինամի, էսքան տարի (օրինակի համար Անուշը) իմ աղջիկն է եղել, հիմի երկուսինս է դառնում, թէ ես լաւ չեմ կարողացել պահել, յոյս ունեմ դուք աւելի երջանիկ կը պահէք։ Աստուած ձեր սէրն անպակաս անի, Հայր Աբրահամու օրհնութիւնն իրենց վրայ լինի»։ Վերջացնում է իր օրհնութիւնները և աղջկայ ձեռքը յանձնում է սկեսրարին։ Նա էլ իր հերթին բաւական օրհնութիւն ու բարեմաղթութիւններ է անում, ապա հարս ու թագաւորը չոքում են, քահանան կարգը վերջացնում է, ձեռք-ձեռքի տալիս, մի քանի խրատական խօսքեր ասում և առաջարկում է եկեղեցի գնան։ Հագցնում են հարսի հագուստները, գլխին գձում են սպիտակ քող, վերայից էլ կարմիր «պամբիրի» (մեծ քառակուսի թաշկինակ)։ Տանից դուրս են բերում հարս ու թագաւորին. այստեղ էլ կապում են «կանաչը» ճիշտ կարմրի ձեռվ. ապա պարելով ու շօրշ կանչելով, նաև «Արդ հրամանաւն Աստծային» սազի նւագով գնում են եկեղեցի։ Եկեղեցու բակում դադարեցնում են նւագը, հարս ու թագաւորը մտնում են եկեղեցի։ Պսակի արարողութիւնը վերջանալուց յետոյ, հարս ու թագաւորին տանում են տուն՝ սազի նւագով և «Արեգական» երգելով։ Երբեմն էլ աղջկայ ծնողները փափագ են յայտնում պսակից յետոյ հարս ու թագաւորին և բոլոր հանդիսականներին հրաւիրել իրենց տուն, ճաշ տալ յետոյ ճամբել։ Պսակը կատարւում է թոյլատրւած օրերը միայն, ըստ եկեղեցական կանոնի, կամ օրացոյցի։

Սովորութիւն է նաև, երբ հարս ու թագաւորը տան դարպասից մտնելու ժամանակ ոչխար են զոհում նրանց առջև և մի պնակ քաղցրեղէն (նօղլ) են թափում նրանց

գլխին և այդ պնակը դնում հարսի ոտքի տակ, որ կոտրի, ի նշան յաջողութեան։

Հաւագլուխ.—Պսակից յետոյ, երբ ճաշում են, ըսկըսում են զուռնան, երիտասարդներն էլ՝ դուռնաբազի խաղը։ Այստեղ թագաւորի բարեկամները մի-մի հատ հաւկամ աքլոր են բերում հաւագլխի համար. զգիրը բռնում է հաւի ոտներից ու բարձր պահում։ Առաջին խփողը թագաւորն է, առնում է թուրը, մօտենում է և մի հարւածով խփում թոցնում է հաւի գլուխը. նրան հետեւում են խաչեղբայրն ու փեսախպէրը, յետոյ ուրիշները։ Երբեմն էլ թագաւորը խփում է ոչխարի գլուխ, կամ գառան՝ նոյն ձեռվ, բայց ոչխարը պառկած են պահում գետնի վրայ։

Հարսի իրիկուն.—Դարձեալ թագաւորի կողմից հրաւէր են ուղարկում գիւղի բոլոր ժողովրդին. այդ գիշեր աւելի ճիշտ երիտասարդներին։ Գնում են այնտեղ ընթրում, նւագում, երգում, պարում են ու մի քանի ժամից յետոյ գնում են հանգստանալու։

Հիւրերի մնկնումը.—Հաւագլխի ժամանակ մորթած բոլոր հաւերը նոյն գիշեր եփում են և միւս առաւօտեան հեռու գիւղերից եկած «կանչւորներին» կերակրում ու ճանապարհ ձգում. սրանով վերջացած է համարւում հարսանիքը։ Հարս ու փեսան առաջաստ են մտնում։

ԽՆԱՄԱՊԱՏԻ

Հարսանիքից երեք-չորս օր յետոյ տղայի ծնողները խնամոնց հրաւիրում են իրենց տուն. երբ բոլորը գալիս են թագաւորի հայրը հրաւիրեալներից իրաւունք է հարցնում, որ հարս ու թագաւորը գան դուրս «ձեռ պաչեն»։ Նախ գալիս է փեսան, բոլորի ձեռքը համբուրում ու գընում։ Բերում են հարսին թեից բռնած, մի չափա աղ-

լուխ էլ ձախ ձեռքով բռնած իր բերանին։ Նա «ծաղկի» է տալիս բազմականներին,—գլուխը խոնարհում է ի նշան բարևի. հիւրերը համբուրում են նրա ճակատը, մի քանի ռիալ ձգում են հարսնաքրոջ ձեռքի պնակի մէջ, սրան ասում են «երեստեսնուկ»։

Ճաշից յետոյ բերում են մի մեծ «մաջիմա», որի մէջ շարել են զանազան նուէրներ. գալիս է տանտիկինը և բաշխում խնամիներին, իրենց պատուին «լայեղ»։ Նրանք շնորհակալութիւն են յայտնում և հեռանում։

Աղջկայ ծնողները խնամապատիւը փոխարինում են մի քանի օր յետոյ՝ նոյն ձևով։ Նորապսակ հարսին տանում են հօրանց տուն առաջիկայ Զատկից մի քանի օր առաջ։

ԾՆՈՒՆԴ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Երեխան ծնելու ժամանակ ադում են և նոյն օրը կամ միւս օրը, «Փառք բարձուն» են ասում, ջուր են



Ջհարմհալցի 24 երեխայ ծնող մայրը, Մաղամիայի կին Եղիսան իր աղջիկներով.

օրհնում, որ ծննդականը լացի։ Հարևանները լսելուն պէս գալիս են աչքալուսանք տալու. նոյնիսկ մօտակայ գիւղերի կանայք գալիս են, բոլորն էլ անպայման մի նուէր բերում են նորածնի համար։—Մկ կտոր շաքար, մի մետր չիթ, մի փոքր պանիր, ալիւր և այլ բաներ։ Բոլոր այցելուներին հիւրասիրում են թէյով և մի փոքր պնակ չամիչով։ Քառասուն օր ծննդականը տնից դուրս չէր գնում։ Ծննդից յետոյ՝ մի քանի օր երեխային իւղ և շաքար են ուտեցնում, իսկ մօրը՝ «բրբշտուկ», ունեորները գինի ևս տալիս են մօրը։ Մկրտութեան օրը յատուկ հրաւէր են ուղարկում բոլոր ազգական-բարեկամներին, թէյ են տալիս, կերակուր և քահանային մի քանի ռիալ դրամ։

ՕՐՕՐՈՑ ԴՆԵԼԸ

Երեխային շուրջ երկու-երեք ամիս պահում են «բալուլով» (խանձարուր). ապա մի օր կանչում են ազգական-բարեկամներին և հարևաններին ու «սարքում են օրօրոց», ներկաները բարեմաղթութիւն են անում։ Տատիրոջը», ներկաները բարեմաղթութիւն են անում։ Տատիրոջը տաքացրած հողը ածում է հողաշորի մէջ, դնում է օրօրոց և պառկեցնում մանկանը։ Դադարկ օրօրոց չեն օրօրում, որ երեխայի «փորը չցաւի»։ Օրօրոցից կախում են մի շարան ճան (վէգ) մէջտեղում մի բոժոժ կամ զանգակ, որ երեխան արթուն ժամանակ զբաղի։

Սովորաբար չհարմհալցի հայ կինը երեխային մօտ երկու տարի ծիծ է տալիս. շատ քիչ է պատահում, որ ծծմայր ունենան, դա վերագրելի է առողջարար կլիմային։ Երեխային ծծից կտրում են խաբելով, մօր ծծին մուր են քսում, կամ ասում են «կատուն տարել է», կամ «բոբող կայ մամի ծծի վրայ» և այլն։

Երեխաները որոնք «զուլ են» եօթը տարի մազը չեն կտրում, ապա տանում են «սրբի ոտ» այս կամ այնինչ

անունով եկեղեցին, ուխտ կատարում, գլխի մազերի չորս կողմից խաչաձև կտրում, որից յետոյ ածիլելու կամ խուզելու իրաւունք ունեն։ Առաջին անգամ սափրողը նէր է ստանում մէկ երկու րիալ։

Երեխան եթէ ուշ է ոտք ելնում, ուխտի են տանում, աղօթք կամ գիր են անում։ Ձեռքից բռնած մատն ածում, կամ գլանակ են պատրաստում։

ՄԱՀԵՒ ԹԱՂՈՒՄ

Երբ վախճանւում է մէկը, անմիջապէս հնչեցնում են եկեղեցու զանգակները ծանր, որին ասում են «մեռելի զանգ». քահանան գալիս է, ջուր օրհնում, որով լուանում են ննջեցեալի դին. պատանում են սպիտակ «չլուարի» կամ «նաշուր» կտորով, դնում են դագաղի մէջ և վրան քաշում են երկու-երեք մետր կտոր, գլխի վերև վառում են մի մոմ և խունկ ծխում. ննջեցեալի երեսը դէպի արևելք է դարձրած լինում։ Լողացնողները, որպէս վարձատրութիւն, ստանում են ննջեցեալի հագուստները և բաժանում իրարու։

Հետզհետէ գալիս են բոլոր հարևաններն ու ազգականները, մանաւանդ կանանց դասը, ողբում են տխուր եղանակներով։

Եթէ ննջեցեալը առաւօտեան է վախճանւել, անմիջապէս տանում են եկեղեցի դագաղի չորս ծայրից բռնած. կարգ կատարում և ամփոփում են հասարակած դերեզմանատանը՝ իրենց տոհմայիններին մօտ։ Եթէ երեկոյեան դէմ է, պահում են եկեղեցում, միւս օրը թաղում կատարելու։

Դին եկեղեցի տանելուց յետոյ, քահանան և ժողովուրդը վերադառնում են ննջեցեալի բնակարանը «հոգ-

ւոց» ասում և կրկին դառնում են եկեղեցի «կարգ կատարելու»։

Թաղումից յետոյ էլ նոյնպէս, երբ գերեզմանատնից գալիս են, բոլորը ոտքի են կանգնում, «հոգւոց ասում», ողորմի տալիս ու նստում են թէյի և ճաշի։ Հոգեհացը ընդհանրացած է։ Վերջանալուն կրկին «Աստուած օղորմի իրա հոքուն» ասելով հեռանում են։ Եթէ հասակաւոր մէկն է մեռնողը, նրա խաթեր համար այդ օրը գործի չեն գնայ։

Այգուց.—Ձհարմհալի քարքառով «հեքնահոդ» գնում են ննջեցեալի գերեզմանի գլուխ յաջորդ առաւօտեան. նախ կանայք, յետոյ տղամարդիկ։ Գալիս է քահանան, կարգը կատարում, վերադառնում են տուն. տան դռան «հոգւոց» ասում, թէյ են խմում և ողորմի տալով հեռանում են։ Երբեմն էլ հոգեհաց է տրւում։

Բայց կանայք մինչև եօթ օր մենակ չեն թողնում ննջեցեալի հարազատներին։ Հետզհետէ գալիս են իրենց հետ բերելով մի թաշկինակ, կամ մի կտոր շաքար ու «մխիթար խօսում». բերած մխիթարական նէրը քաշ դընում տան մեծաւորի կողքին, ի նշան ցաւակցութեան։

Եօթնօրեայ (օխտնօրէնք). Քառասունքի և տարեգլխի պաշտամունքները կատարում են նոյն ձևով, երբեմն էլ Պատարագ են մատուցում հանգուցեալի հոգու համար։ Տարւայ ընթացքում մի քանի անգամ «պաշտում» են կատարում. Տարեգլխին գերեզմանաքար են դնում գերեզմանի վրայ։

Եօթնօրէի ճաշից յետոյ հասակաւոր կանայք լւանում են ննջեցեալների հարազատների ու մօտիկ ազգականների թաշկինակները, չորացնում են, ծալում ու յանձնում իրենց։ Ծերունիները ևս կանչել են տալիս սափրիչին, սափրում է ննջեցեալի հարազատների ու ազգականների երեսները։ Երկու արարողութիւններից յետոյ մխիթա-

բական են խօսում։ Ճիշտ այդուցի նման են կատարում քառասունք և տարեգլուխը։

Եթէ ննջեցեալի թաղումից յետոյ գիւղում հիւանդութիւն էր ընկնում կամ մահ շատ էր պատահում, ասում էին ննջեցեալի սիրտը դեռ կենդանի է, պիտի հանել և ճղել. սակայն յիշատակութիւն չկայ, այսինքը նման բան չի պատահել։

Հոգեորականներին առանձին վարձատրութիւն չկար ննջեցեալի թաղման և միւս պաշտօնները կատարելու համար, միայն ննջեցեալի դագաղի վրայի «յիշենք» կամ «յիշմունք»ի համար ձգած մանր դրամները (սև փողեր), որոնք միքանի ռիալի էր հասնում։

Դրախտը պատրաստուած է արդարների համար, բոլոր բարեպաշտ և լաւ մարդիկ դրախտ կը գնան և կը վայելեն հանդերձեալ կեանքը. իսկ դժոխքը՝ մեղաւորների, որտեղ պիտի տանջւեն չարագործները (գող, աւազակ, մարդասպան, պոռնիկ և այլն)։ Սա տեղի կունենայ դատաստանի օրը։ «Արդարացն կեանք յաւիտենական և մեղաւորացն տանջանք յաւիտենական։

Ննջեցեալի հոգին մարմնից բաժանւում է սակայն նրա գլխի վերևն է մինչև գերեզման դնելը, հողով ծածկել և «փառք ի բարձուն» երգելը, որից յետոյ վերանում է։

ՁԳԵՍՏ

Ձհարմհալի հայ տղամարդը, համագաւառացի պարսիկների նման, կրում է հետեւեալ պարզ զգեստները։

Գլխարկ.—Քօլք կամ բուրդ։ պատրաստուած է թաղիքից, 15—20 սանտիմետր բարձրութեամբ, կլորակ, առանց հովանիի, կամ բոլորակի. ամառւայ շոգերին, ճակատի ուղղութեամբ, գլխարկի վրայ կապում են «աֆթաբգեարդուն» (շւաքարան) կամ թաշկինակ, որ արեւը չայրէ դէմքը։

Ձարմհալի նորհարսը 1870 թ. տարազով։

Զհարմհալի տղամարդու հին տարազ

Շապիկ.— Կարում են կտաւից, մթխալից կամ չլաւրուց, սպիտակ է, երկար թևերով, որ ծածկում է գրեթէ մարմնի կէսը։ Կրծքի աջ կողմում կամ կենտրոնում ճեղքում են՝ կոճակները շարելու, որին ասում են «եախա»։

Արխալուխ կամ ալխալուխ.—Կարում են չթից, հագնում են շապիկի վրայից, հասնում է մինչև ծնկները, երկու կողքերին ունի մեծ գրպաններ, թևերը մինչև արմունկները կարած է, իսկ դրանից ներքև մինչև դաստակը բաց է, առանց կարի. ամբողջապէս աստառած է։

Թունբան (վարտիք).—Կարում էին սև կամ կապոյտ կտաւից, մթխալից, կամ դարիթից. ծածկում է պորտից մինչև ոտների կոճերը։ Բաւական լայն է, շրջագիծը մօտ մէկ մետր է։

Կապայ.—Կարում են կտաւից, մթխալից, դարիթից, լաւ բուրդ կտորից, կամ կտորից. արխալուխի ձևով, բայց մինչև մէջքը աստառած, փէշերը հասնում է մինչև ծնկներից ներքև, հագնում են արխալուխի վրայից, կուրծքը եռանկիւնաձև բաց է, կոճկւում է փորի վրայ. փէշերի ամբողջ երկայնութեամբ և շուրջը ունի քօթա։

Գօտի կամ գոտիք. Կապում են կապայի վրայ մի քանի մետր երկարութեամբ կտոր. իսկ դործի ժամանակ՝ մի բարակ դայիշ (թոկ)։

Սարդարի, ֆուլուջա, փալթու.—Երեքն էլ վերարկու

Դաւիթ Յարութիւնեան եւ Եղիազար Խանլարեան. 1900 թ.

են. կարում են ընտիր բուրդ կտորից և հագնում են կապայի վրայ։

Չուխա —Բարակ հիւսած բրդից, լայն և առանց թևերի, գցում են ուսերի վրայ, հասնում է մինչև ոտքի կոճերը. գործ են ածում երիտասարդները։

Աբա.—Ճիշտ չուխայի ձև է, բայց հաստ հիւսածքով, գործ են ածում ծերերը։

Գուլբայ.—Գործում են կանայք իրենց պարապ ժամերին, բամբակից կամ բրդից. մեծ մասամ հագնում են ձմեռը։

Կօշիկ.—Զանազան ձևերի են. ամենաշատ գործածականը և դիմացկունը «գիւան» է, որի երեսի մասը հիւսում են բամբակի թելից, իսկ ներքևինը՝ (թախտը) հին կտաւի կամ մթխալի կտորից. երբեմն էլ խոզի կամ գոմէշի կաշուից են պատրաստում։ Ձիւնի մէջ երկար ճանապարհ կտրելու համար հագնում են ճարուխ (տրեխ)։ Գիւային քալաշ են ասում։

Քափանակ. - Սա թաղիքից պատրաստած եափունջու ձև ունի, ցուրտ եղանակներին առնում են ուսերին։

Քուրդի.—Առաջինից նեղ են պատրաստում. ուզած ժամանակ կարող են հագնել որպէս վերարկու։

Կանացի զգեստներ

Շապիկ.—Կարում են մթխալից, չթից կամ մալմալ կտորից թևերի կէսից մինչև դաստակը նիմզանաւուզ կտորից է։ Կարում են երկու տեսակ։ Կարճ՝ մինչև ազդրերը. սրան հագնում են չինդարի տակից. երկար՝ հասնում է մինչև ոտքի կոճերը. հագնում են մինթանի տակից. սրա գոգը նիմզանաւուզից է, երբեմն էլ հարուստները կարում են զանաւուզից, ունի գառով քաշած «եախա». կրծքին դնումեն մի քանի կանթած ռիալանոց դրամներ՝ կոճակների փոխարէն։ Մինթանը հագնում են հասակաւոր կանայք։

Զարմանալի հին տարազ

Չինդար.—Թև ու թիկունքը չափաւոր ձևած է, բայց գոտիից ներքև բաւական լայն են թողնում, երբեմն «օխտը թախտա» են անում (եօթ կտորի լայնութիւն). կարում են զանազան կտորներից, զանազան գոյներով, կուրծքը զարդարում են զառով, արծաթ դրամներով և թռռով։ Հասնում է մինչև ոտի երեսը։ Հագնում են երիտասարդ կանայք։

Սինթան կամ միրան.— Սա հայ կանացի տարազի իսկական ձևն է։ Չհարմհալի պառաւները մինչև վերջերս էլ հագնում էին։ Ունի երկար փէշեր կրծքից մինչ ոտները բաց. միայն մի կոճակ է դրւում փորի վրայ. կարում են զանազան կտորներից, երբեմն մետաքսից և ընտիր կտորներից, շուրջը քօրայ են դնում և ամբողջապէս աստառ քաշում։

Չհարմհալի հին տարազ

Քուլուջա կամ ֆուլաջա.— Գլխաւորապէս կարմիր գոյնից են կարում, մահուդ կամ նարինջի չիթ։ Թևերը կարճ է մինչև արմունկները, ամբողջովին աստառած. շուրջը թռռ կամ զառ դրած. հագնում են չինդարի վրայից որպէս վերարկու, ցասնում է մինչև ծնկները։

Գլխաւորեր եւ զարդ

Շուշտակ.— Վեղարաձև, կարած է սպիտակ կտորից, ներքևի մասը խողովակաձև է, դնում են գլխներին, որի միջով անցնում են ծամերը (հիւսերը). վրան շարում են կանթած ռիալ դրամներ, որը կախւում է ճակատին։

Տկալաչիկ.—Սպիտակ կտաւից կամ մթխալից են կարում, եռանկիւնի է, կապում են շուշտակի վրայ։

Գլխաշոր.—Փոքրիկ քառակուսի, մի քանի ծալ հաստութեամբ կտոր, որի գագաթի վրայ ամրացնում են գլխազարդերի կեռերը։ Երկու ծայրերին ունի թելեր, կապում են կզակի տակից, որը կոչւում էր «բօշօրթիկ»։

Երեսնոց.—Արծաթից պատրաստած օղակներով և քըշտիկներով մի զարդ է, մօտ կէս մետր երկարութեամբ, երկու ծայրերին ունի կէռեր, որոնք ամրացնում են գլխաշորի վրայ։ Ունի նաև երկու շղթեր, որոնք ծնօտների վրայից անցնում են և կէռերը ամրացւում են ականջների ետեր։

Կոs.—Կարում են թաղիքից, կամ կարդոնից թաղաձև դնում են գլխաշորի վրայ։

Թրթոնիկ.—Արծաթից պատրաստած մի շարան ձրկնիկներ, կապում են կոտի վրայ՝ ծայրերը կախւում է դէպի ճակատը։

Եամշաղ.—Սպիտակ նուրբ կտորից թաշկինակ է, որ կապւում է ծածկում բերանը՝ սկսած քթի ծայրից ցածր։

Դնչկալ.—«Գօլի» կամ ծաղկաւուն թաշկինակ է, որ կապում են եամշաղի վրայից։

Տկալչին (երկրորդ).—Նոյնը, ըստ առաջինին, կապում են կոտի վրայ։

Լաչիկ.—Մէկ ու կէս մետր երկարութեամբ և եռանկիւնի. կարում են չիթից, աղաբանովուց, նարինջից և պամբրուց։ Ձգում են կոտի վրայ, երկու ծայրերը ներքև բերում կզակի տակից անցկացնում և հակառակ կողմից բարձրացնում դէպի գագաթը, կապում են այնտեղ և աւելցածը կախում քամակից։

Մամուռան գիւղի տանուտէր՝ Ղուկաս Կարապետեան (1840—1940) եւ տիկինը՝ Ովսաննան.

Բրնամ. — Բուրթ մատի զարդը, օղակաձև արծաթ, փոքրիկ կտուցով և մէկ մատնաչափ լայնութեամբ. դնում են բուրթ մատին։

Մատանի. — Կանայք գործ են ածում մի քանի հատ. պատրաստում են արծաթից, պղնձից և ոսկուց (վերջինից սակաւ)։

Ձնոց. — Կանթաց դրամները շարում են ուլունքներով, մէջտեղում դնում են մի «շաղերով փանդարի» և գցում են վզները։ Լինում է 3—5 շարան։

Քուլիկ (Ճակատի շարան դրամները). — 20-30 ռիալ արծաթ կանթած դրամներ շարում են մի թելի մէջ, կարում են կոտի տակից ճակատի երկարութեամբ։

Դոշի փող. — Նոյնպէս շարում են դրամները թելի մէջ, և կարում են չինդարի կրծքին ուղղահայեաց երկու կողմերին։

Զափոաս. — Պատրաստուած է արծաթից ձկան ձևով, 10—20 հատ միացրած են օղակներով, մէկ կողմի ծայրերը կոճակաձև են, միւս կողմինը նոյն մեծութեամբ ծակեր ունեն, ուզած ժամանակ կոճկում են, որով ծածկըւում է կուրծքը։

Կոճակ. — Արծաթեայ փոքրիկ գնդիկներ են, ծայրերին ունեն կանթ, շարում են թելի վրայ, կարում մինթանի կրծքին ուղղահայեաց. իւրաքանչիւր կողմը 20 հատ։

Քամար. — Պատրաստում են մի քանի կտոր արծաթից, շարում մի կտոր թոկաձև կտորի վրայ և կապում մէջքից։

Գոտի. — Հասակաւոր կանայք թաղիքից հիւսած լայն կտորանման ծածկում է փորը և մէջքը, իսկ երիտասարդ կանայք նարինջ կամ կարմիր կտորից են կարում և կապում։

ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԽՄԵԼԻՔ

Զհարմհալի հայ ժողովուրդը կերակրւում է պարզ կերակուրներով. ինչ որ տեսել ու սովորել են իրենց նախնիքներից՝ նահապետական ընտանիքներում։

Սովորական կերակուրները հետևեալներն են, որոնց մասին մի առ մի բացատրութիւն գրելը աւելորդ եմ համարում։

Թանապուր, եախնի, փլաւ, շիլա, յաճարի փլաւ ու

շիլա, հատիկ, Ջրով եփանի, մախոխ, բանջար, հալիմ, խորոված միս, հալաայ, բրշտուկ, տապակած միս և խաշած բանջարեղէններ։ Բօրանի, ձուաձեղ, փոխինդ, հումսեր, սեր, կարագ, առատ պանիր և կաթնեղէն ու դոշաբ։ Ձկնեղէն շատ քիչ է գործածւում ձուկի սակաւութեան պատճառով։

Ամելիքներն են՝ թան, թէյ, սուրճ (քիչ) և շատ քիչ գինի և օղի։

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏՔԵՐ ԶՀԱՐՄՀԱԼՈՒՄ

Զհարմհալի պատմական վայրերից յիշենք միայն Շափոնազը, Մադար-դօխթարը և Վաստիգան գիւղը։

ա. Շափոնազ. Աւանդութիւնն ասում 17-րդ դարի սկզբներին, երբ հայերը հաստատուեցին Զհարմհալում, Ջըզախոռի շրջանի գիւղերն ունէին մի վարդապետ, որպէս գաւառի հոգևոր հովիւ։ Վարդապետը վախճանւում է։ Թաղման ժամանակ վէճ է ծագում սարի երկու կողմերի գիւղացիների միջև. երկու կողմն էլ պնդում են թէ անպատճառ իրենց գիւղի հանգստարանում պիտի ամփոփեն, վէճը տևում է երկու օր։ Երկրորդ օրը մի գիւղացի երազ է տեսնում և առաւօտեան յայտնում, թէ հանդուցեալն երազում ասաց «ինձ թաղեցէք սարի գագաթին, որպէսզի բոլոր գիւղերի ժողովուրդը կարողանայ տեսնի»։ Այդպէս էլ անում են, թաղում են սարի գագաթին և գերեզմանի վրայ մի գմբէթ են կառուցում։ Սարի գագաթին բոլորովին ջուր չկայ. ասում են թէ հաւատացեալ մարդիկ և կանայք տկերով ջուրը շալակած սարի ստորոտից տանում են մինչև գագաթը, երբեմն էլ այծերի քամակից են կապում ու տանում մինչև աւարտելը։

Վարդապետի անունն եղել Սարֆրազ. բայց ժամանակի ընթացքում աղաւաղել են ու դարձրել Շափոնազ,

մանաւանդ որ պարսիկները վերջինս հեշտ են արտասանում։ Զիվրիգանի և Զղախսոի միջև ընկած սարի գագաթի այս գերեզմանը այժմ պարսիկները պահում և պահպանում են որպէս մուրազատու մի սուրբ. նրանք յաճախ երդւում են այս սրբավայրի անունով։

բ. Մադար Դօխթար (մայր և աղջիկ). — Գեանդուման գիւղի արևելեան կողմում, գիւղից ոչ հեռու, կայ մի սրբածայր սար «Մադար դօխթար» անունով։ Այս սարի ստորոտից բղխում են պարզ և սառնորակ աղբիւրներ։ Աղբիւրներից մէկի վրայ շինուած է քարաշէն մի տնակ. տնակն ունի մի պահապան, որը հսկում է և դուռը միշտ փակ պահում. բանում են միայն ուխտաւորների համար։

Տնակի ներսը մի ժայռի ճեղքից երևում են երկու փունջ կանաչ դանդուրներ, որոնք տարեայ բոլոր եղանակներին էլ մնում են անփոփոխ։

Աւանդաբար պատմւում է Փոքր Շահ Աբբասի օրով սոսկալի հալածանք է տեղի ունենում. հարևան Զաշղայի, Լօռ և պարսիկ վրանաբնակները անդթօրէն նեղում, չարչարում են խեղճ ու կրակ հայերին։ Մադար-դօխարին մօտակայ հայ գիւղերում լինում են մի գեղատեսիլ հայ մայր և աղջիկ, պարսիկները հետևում են սրանց առևանգելու։ Մայր ու աղջիկ փախչում են դէպի յիշեալ սարը՝ իրենց ազատելու, կամ հակառակ պարագային՝ գահավէժ լինելու։ Նրանք նստում են սարի ստորոտի աղբիւրի մօտ հանգստանալու և ջուր խմելու. այդ ժամանակ յանկարծակի հասնում են հալածողները. մայրը յուսահատ աղօթում է։ — «Աստուած իմ, գետինը պատուէր և մենք կուլ գնայինք, որ այս անօրէնների ձեռքը չնկնէինք»։ Այս խօսքերի հետ ժայռը տեղի է տալիս երկու թշուառներին, որոնց երկաթ ծամերը մնում են ժայռի ճեղքում մի քանի մատնաչափ դուրս։

Հայերի Գեանդուման գիւղից հեռանալուց յետոյ, այս

վայրը պարսիկներն ընդունել են որպէս սրբավայր, իսկ խաները դարձրել են իրենց ընտանեկան դամբարանը, որտեղ և շինել են մի աղօթատեղի։ Գեղեցիկ է Մադարդոխթարը, սրագագաթ բարձր սարի ստորոտում կան մի քանի աղբիւրներ, ծառեր և լաւ կանաչութիւն։

գ. Վաստիգան.— Հայերը Պարսկաստան հասնելով և մի մասը՝ Զհարմհալ Մելիք Տէր Պետրոսը իր տոհմայիններով և մի շարք իրեն ենթակայ գիւղացիներով բնակւում են Վաստիգանում։ Վաստիգանը, ինչպէս երևում է աւերակներից և հետքերից, եղել է մի գիւղաքաղաք։ Սովզու սարի ստորոտում ունեցել է եօթը ջրաղացներ, ձիթհանքեր և ուրիշ օգտակար հաստատութիւններ։ Վաստիգանի գլխաւոր առուն, որտեղից ջուր են տարել ջրաղացների և արտերի համար, բարձր սարի լանջին քանի ժայռեր ու ձորակներ կտրելով բերել են ու հասցրել են գիւղին։ տեսնողները հիանում են նրանց կարողութեան վրայ։

Գերեզմանատնում կան հսկայ տապանաքարեր, որոնց մէջ ամենանշանաւորն է, սկզբում յիշած։ Մելիք Տէր Պետրոսի գերեզմանաքարը իր մեծութեամբ ու որակով։

ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐ

Զհարմհալի հայ ժողովուրդն ևս զերծ չի եղել սնոտիապաշտութիւնից և նախապաշարումներից քանի որ նա ապրել է աշխարհի խաւար անկիւններից մէկում դարեր շարունակ. միևնոյն գաւառում, միևնոյն օջախի շուրջ, միևնոյն պառաւական սարսափի ազդող պատմութիւնների ու հեքեաթների ունկնդրութեամբ։ Զմրան երկար գիշերների տաք քուրսիի շուրջ բոլորած խմբակների պատմութիւնները ուրիշ ոչինչ էին, եթէ ոչ սրբերի, դևերի և հալածանքների ապշեցուցիչ նկարագրութիւնները, որոնցից և սովորել է զեռահասը և միամիտ համոզումով կրկնել է ապագայ սերնդին։ Նման պայմաններում ապրող մի ժողովուրդ անհնար է ենթակայ չլինի նախապաշարումների։ Տակաւին այսօր էլ չհարմհալցի հայ կինը ամուլ չմնալու համար դիմում է հետևեալ միջոցներին.— դիր է բաց անել տալիս, «չլա» է կտրում, գերեզմանների շուրջը պտտում է և հողից իր մէջքն ածում, սրբերի օգնութեան դիմում, ուխտ անում, մատաղ կտրում և զանազան աղօթքների դիմում։

Եթէ եղել են փոքր ի շատէ գրից-բրից հասկացողներ, այն էլ տառաճանաչութիւնից յետոյ, նուիրւել են «Ախտարագիտութեան»։ միայն վերջին քառասուն տարիները կարող են համարել Զհարմհալի առաջադիմութեան շրջան, որը վերագրել է նոր գրքերի և նոր ընթերցանութեան ազդեցութեան։

Այստեղ յիշենք մի քանի նմուշներ Զհարմհալի սնոտիապաշտութիւններից և նախապաշարումներից։

1. Թոնրի վրայով չեն անցնիլ, «Հացան հրեշտակը կը հալածի»։

2. Ալիւրը մաղելուց յետոյ երեսին խաչ են քաշում «բարաքաթը շատ ըլնի»։

3. Բուի ձայնը բօթի նշան է։

4. Գիշեր ժամանակ ջրհորի, գետի և առուի ջրին չեն նայի «չարոց կը պատահի»։

5. Ջուրը ամանից չեն շպրտի մութը տեղ, «կը թափի սատանեքու վրայ և զոբար կը հասցնեն ընտանիքին»։

6. Եկեղեցու դարպասի մօտից անցնելիս պիտի խաչակնքեն։

7. Վզնոցից կախում են մի կտոր պողպատ «չարը մօտ չգան»։

8. Եօթ ծակերով կապոյտ ուլունքը կարում են երեխաների գլխարկին, հագուստին կամ օրօրոցին «չառոց չը պատահի»։

9. Զանազան աղօթքներ աղթարքից գրում են, մի կտոր լաթի մէջ կարում և ձգում են վզները, կամ կապում բազուկին։

10. Գերեզմանատան հողից ածում են ամուլ կանանց մէջքը՝ «չբերութիւնից դուս գայ»։

11. Գերեզմանի շուրջ երեք անգամ պտտում և ձեռքերը լանում են, որ «չօր ու ցաւից ազատուեն»։

12. Ծննդականի բարձի տակ պողպատ, դանակ կամ մկրատ են դնում, որ «չարերը հեռու մնան»։

13. Պառաւներին ազօթել են տալիս «չար աչքի համար»։

14. «Աչքի հատի ազօթքներ» են ասում աչքացաւի համար։

15. Նոր լուսին տեսնելիս խաչակնքում են։

16. Մէջքացաւի համար «սանջու են կատարում»։

17. Շան ոռնոցը վատ նշան է «տան անդամների գլխին է կռաւում», (այսինքն մէկը կը մահանայ»։

18. Շան արածելը աժանութեան նշան է։

19. Շան կծած վէրքի վրայ՝ շան մազից այրում ու դնում են որպէս դեղ։

20. Ձին ճանապարհ գնալիս եթէ խրտչում է կամ յետ կանգնում, վատ նշան է. ճամբորդը վերադառնում է, այդ օրը չի ճամբորդում։

21. Հաւի կանչելը փորձանք է, ուստի հաւին անմիջապէս մորթում են։

22. Գայլի մազը կամ կաշուց մի կտոր որպէս համայիչ վախեցածների ցնցուածների վզից են կախում։

23. Գիշերով գերեզմանատուն չեն մտնում՝ մեռելները կը հալածեն իրենց։

24. Նորածին երեխային 40 օր դուրս չեն տանում, «Զլլա կընկնի»։

25. Ձեռքի ափի քորը լաւ նշան է, դրամ կստանայ։

26. Երեխան եթէ տունը աւել քաշի վատ նշան է։

ՁԵՌԱԳԻՐՆԵՐ ՁԱՐՄՀԱԼՈՒՄ

Հարմհալում ընդամենը գոյութիւն ունէին 17 հատ գրչագիր աւետարաններ և մէկ հատ Տօնացոյց. սրանցից մեծ մասը պահւում էր եկեղեցիներում։

Աւետարաններից միայն մէկն է մագաղաթ. գտնըւում է Մամուքա գիւղի բնակիչ պ. Կարապետ Ղազարեանի մօտ. մնացեալ բոլորն էլ բամբակէ թղթից են։

Տօնացոյցը նոյնպէս բամբակի թուղթ է. գտնւում էր Լիվասիան գիւղում օր. Մարգարիտ Մատթէոսեանի մօտ։

Բացի վերջինը, բոլոր ձեռագրերն էլ ծաղկազարդուած են և ունեն նկարներ։

Աւելացնենք այստեղ Քաթաղ գիւղում 1610 - 1611 թ. գրած վանեցի Զաքարիա քահանայի գրչին պատկանող աւետարանը, որի յիշատակարանը հետևեալ ձևով է.—

«Քրիստոս գթած և ողորմած,
Քրիստոնէիս տէր և Աստուած,
Զողորմութեան քո դուռն բաց,
Լուր տառապեալ քրիստոնեացս։
Յամէն դիմաց մենք ենք նեղած,
Ամէն ազգաց կոխան եղած,
Եկեղեցիք բազումք քակած,
Բազում խաչեր է խորտակած։
Գիրք և աւետարան դերի տարած,
Կանայք և տղայք դերի վարած
Գիշեր ցերեկ եմք վարանած,
Ահարեկեալ և զարհուրած,
Ես ոչ ունիմ հանգստութիւն,
Այսպիսի կամք տարակուսող,
Եւ այսպէս եմք ի տարտարոս,
Որպէս գնասան ի մէջ յալեաց,
Է սա ամէն ի մեր մեղայ,

Որ բարկացար Հայոց ազգաց։

«Ի թուականիս Հայկազեան տոմարին ի ՌԾԳ ամի և փոքր թուականին Հռոմայեցւոց Մ.ՂԲ. ամին ի ժամանակիս յորում Շահ Ապաս արքայն պարսից եկեալ պաշարեաց զԹաւրիզ և կոտորեաց զաւրս տաճկաց...

... Ապա մանրամասնութիւններ այդ մեծ գաղթի մասին, որի շարքում ասում է.— «Այլ այժմ ասասցուք թէ ինչ եղև առ ազգս Հայոց. զի ել հրաման յարքային զի երթիցեն գերեսցին զտունս Հայոց և գերեցուցին զԿարս, զԲասէն, զՇիրակունի... և զայլ բազում գեաւղ և քաղաք... կռ. գերի արարին (60000)։

«Արդ գրեցաւ սբ. աւետարանս հրաշալի, հրաշափառ և սքանչելագործ և նկարեցաւ և կազմեցաւ ի թուականիս Հայկազեան տոմարիս ՌԿԱ ամին ի յաշխարհն Պարսից ի հոլքէն Գեանդմանայ, որ է հուքմն Ասպայհանայ ի գեաւղաքաղաք ի գուռն սբ Աստծին ի Կաթողիկոսութեան Էջմիածնայ Դաւթի. ձեռամբ անպիտան ուռնայն և անարիւն և ամեն մեղաց դարան Զաքարայ երիցոյ վանեցոյ։

Զեռք զգնայ տեղն երևայ
Մարմինս փտեալ ի հող դառնայ
Սայ յիշատակ առ ձեզ մնայ
Ամէն տեսի բերանմ յիշեայ
Թէպէտ խոշոր է գիր սորայ
Այլ գիւր ընթերցող գիտենայ.
Յերբ ընթեռնաք և աւ գտիք իմայ
Յիշեայ ի տէր զգծող սորայ Զաքարա։

«Այս աւետարանը Գրած է 1610—11 թուին»

Մեսրոպ Մագիստրոս»

Սոյն աւետարանը գտնուում է Զարմահալցի պ. Ա. Աւետիսեանի մօտ։ Աւ. քահ.

Վիճակագրություն Զհարմահալ գաւառի Հայ գիւղերի 1856 թվից

Գիւղերը	Միրաք		Հայիքաղ		Մամուշա		Արքուլա		Սինագան		Լիմապիան		Մամուշան		Վերին Քոնարք		Ներքին Քոնարք	
Թուակ.	Տուն	Շ.	Տ.	Շ.	Տ.	Շ.	Տ.	Շ.	Տ.	Շ.	Տ.	Շ.	Տ.	Շ.	Տ.	Շ.	Տ.	Շ.
1856	64	552	—	—	—	—	—	—	—	—	83	560	34	145	—	—	—	—
1880	77	465	—	—	79	465	—	—	—	—	139	779	66	381	—	—	—	—
1888	70	381	—	—	75	585	—	—	—	—	97	747	80	524	50	320	—	—
1901	90	509	68	341	142	790	—	—	24	121	145	742	70	380	107	442	43	205
1917	92	400	85	433	140	714	56	276	50	200	90	487	67	342	132	736	63	316
1920	74	374	77	353	126	559	58	279	39	162	64	257	45	217	130	644	58	259
1934	78	405	90	450	135	558	56	300	42	292	41	273	37	116	60	245	47	257
1946	61	320	72	350	100	450	50	254	40	268	26	88	28	150	45	198	37	287
1950	36	180	56	260	82	372												
1951	34	166	33	162	80	312												
1953	38	143	55	175	75	375												

Ծանոթ.—Վերջին վեց գիւղերը 1946 թ. Օգոստոսին վերադարձան Մայր Հայրենիք. Ս. Հայրապետեան։

Աւ. քահ.

Զհարմհալ գաւառի շրջակայքում եղել են նաև՝ Խանամիրզա, Դէյխալիֆ, Սինի և Նաղնա հայաբնակ գիւղերը։ Ստորև գրում եմ մի քանի նմուշներ այդ գիւղերի տապանաքարերի արձանագրութիւններից։

Աղաջան Ղուկասի, թվ. ՌՃԿԸ.

Մելիք Մելիքի, թվ. ՌՃԿԷ.

Հարազաչ Խեչում, թվ. ՌՃԿԲ.

Սրանք Դէյխալիֆ գիւղի գերեզմանաքարերի արձանագրութիւններից են։

ԶՀԱՐՄՀԱԼ ԳԱՒԱՌԻ ՀԱՅՈՑ ՇԷՆ ԳԻՒՂԵՐԸ

1. Վերին Քոնարէ.—Հիմուել է 1882 թ., գտնուում է Զհարմհալի հարաւ արևելեան ծայրում, Սովզու սարի ստորոտում։ 1946 թ. ունէր 45 տուն բնակիչ և 193 շունչ, Գիւղի կենտրոնումն է Ս. Գէորգ անունով եկեղեցին, կառուցած 1882 թ.։ Այժմ խարխուլ է. գիւղի կողքին մի սառնորակ աղբիւրի մօտ շինուած է «Վաչեան» դպրոցը։

Զհարմհալցի հնձուորներ ճաշելիս

Վիճակագրոյց Զհարմհալ գաւառի աւերակ հայ գիւղերի

Գիւղեր	Ամամաքար		Բալլու		Շահբուլաղ		Մուչիգան		Գէյլար		Գիշնիգան		Բօլդալի		Քաթակ	
Թուակ.	Տուն	Շ.	Տ.	Շ.	Տ.	Շ.	Տ.	Շ.	Տ.	Շ.	Տ.	Շ.	Տ.	Շ.	Տ.	Շ.
1856	92	547	—	—	—	—	—	—	—	—	43	239	—	—	—	—
1880	88	408	—	—	—	—	—	—	—	—	38	173	37	181	—	—
1888	72	318	—	—	—	—	—	—	—	—	15	97	24	110	13	66
1917	42	193	—	—	—	—	12	79	22	96						
1920	43	176	14	49	9	46	14	50	16	65						

Մանօր.—Բացի երկու ախտակների վիճակագրոյցները, Զհարմհալում գոյութիւն են ունեցել նաև հետեւեալ հայ գիւղերը, որոնց մասին չկայ յիշատակութիւն։

Պարաչի, Թիշիկ, Շալամգար, Զիւրիգան, Գասգերդ, Սուլուգան, Վասարիգան, Գեանդուման, Ասարբաբ, Ջանդիգան, Ղասաղ, Թաղանադ, Խոսրովաբաբ և Ջաֆրաբաբ, Կեհրի խուն (Սաղդեաղի մօտ), Նաղնա, Ղալա-Քէշիշ, Գուլուգէրդ, Համգին, Սիբաք (Դասկերտ-Սկիրգանի մօտ), Քորդ-Շամի, Սամադարաբ, Գիշինգան, Բիզերդ։ Սամադարաբ Գիւղի եկեղեցին Ս. Մինաս է կոչուում, որի քարերից պեռ ճուռմ են,

Այս գիւղն ունի բաւականաչափ ծառաստան, երկու Ջրաղաց և մէկ բաղնիս։

2. Ներքին Քոնարք։— Ունի 60 տարեայ հնութիւն. գտնւում է Վերին-Քոնարքից մէկ մղոն հեռու, դէպի հիւսիս-արևմուտք։ Գիւղի կենտրոնում է Ս. Սարգիս անունով եկեղեցին, իսկ հարաւային կողմում՝ մի փոքրիկ երկու դասարաններով դպրոցը։ Ունի փոքրիկ ծառաստան, մէկ Ջրաղաց և մէկ բաղնիս։

3. Լիվասիան.—Զհարմհալի ամենահին գիւղերից է. այժմ աւերակ վիճակում։ Ունի բաւականաչափ ծառաստան։ Այստեղ է «Պոպովեան» դպրոցը։ Գիւղի կենտրոնում է Ս. Աստուածածին անունով աղիւսաշէն եկեղեցին։

Ըստ «Աղդասէր» լրագրի, 1848 թ. Մարտ 8-ի տըպուած տեղեկութեան, գիւղի հողը ամբողջապէս պատկանելիս է եղել հայերին։

Ունի մի ձիթհան, մի Ջրաղաց և մէկ բաղնիս։

4. Մամուռան.—Լիվասիան գիւղից մօտ մէկ մղոն դէպի հիւսիս-արևելք կանգնած է Մամուռան աղիւսաշէն հաստ պարիսպով բերդը՝ իր չորս բուրգերով, հիմնուած 1860 թուականին. կենտրոնում է Ս. Յովհաննէս անունով եկեղեցին. այստեղ կայ մի խաչքար 300 տարեայ հնութիւն, յիշատակարանն է՝ «Ս. խաչս յիշատակ է Առդելին թ. ՀԲ.»։

5. Աղբուլաղ.—Գտնւում է Մամուռան գիւղից շուրջ 5 կիլոմետր դէպի արևմուտք։ Հին գիւղերից մէկն է հիմնուած 1622 թ., բայց նախկին բնակիչները հեռացել են և երկար ժամանակ մնացել է դատարկ։ Կրկին 1906—7 թ. վերակառուցել է. ունէր 50 տուն բնակիչ, բաւական ծառաստան մի փոքրիկ դպրոց, Ս. Լուսաւորիչ անունով մի եկեղեցի, մի Ջրաղաց և մէկ բաղնիս։ Ամենահին տապանաքարը ունի Ռ.Զ.Ե.—1616 թ.

6. Սինագան.—Աղբուլաղ գիւղից 2—3 կիլոմետր դէպի հարաւ, Քեալլը սարի ստորոտում կանգնած է Սինագան վոքրիկ գիւղը։ հիմնել է 1900-ի շրջանին, ունի եկեղեցի Ս. Աստուածածին անունով, մի փոքրիկ դպրոց, մի Ջրաղաց և մի բաղնիս։

7. Մամուխա.— Աղբուլաղից դէպի արևմուտք, 24 կիլոմետր հեռու գտնւում է Մամուքա գիւղը, հիմնել է 1860 թ, ունի քարէ սիւներով, գմբէթաշէն մի եկեղեցի Ս. Աստուածածին անունով, որ հիմնել է 1865 թ.։ Պօղոս Բալասանեան դպրոցի փոխարէն 1929 թ. հիմնեցին մի նոր դպրոց. ունի երեք Ջրաղացներ և մի բաղնիս, հիմ. 1912։ Նաև ընդարձակ այգեստան։ Այժմ էլ կիսահայաբնակ է։

8. Հաջիաբադ.—Մամուքայից դէպի արևմուտք, չորս կիլոմետր հեռաւորութեամբ ընկած է Հաջիաբադ գիւղը, հիմ. 1896 թ., ունի մի եկեղեցի՝ Ս. Սարգիս անունով, եկեղեցուն կից, երեք սենեակից բաղկացած մի դպրոց, հիմ. 1924 թ, ունի բաւականաչափ այգիներ, այս գիւղի բաղնիսը, որ ամենահինն է այժմեան շէն գիւղերի բաղնիսներից, շինել է 1906—7 թ., ունի նաև մի Ջրաղաց։ Այժմ ապրում են 5—6 ընտանիք հայեր։

9. Սիրամ.—Շահ Աբբաս Մրծի օրով (1608—10) թուականներին հիմնուած այս գիւղը բաժանուած է երեք փողոցի. «Վերի Ղալա», «Միջի Ղալա» և «Ցածի Ղալա»։ Գիւղը բերդաձև է, ամբողջ կտուրները իրարու կպած։ Կենտրոնում է Ս. Գէորգ անունով եկեղեցին, հիմնուած է 1866 թ.։ Այստեղ կա մի գրչագիր աւետարան բաւական մեծ ծաւալով։ Եկեղեցու բեմի առջևը ամբողջ երկայնութեամբ՝ մէկ կտոր քարից է. կրում է հետևեալ արձանագրութիւնը.—

«Ի 1865, ի 20 Մախ.
Սոյն արդեանց եւ ծախուց
Մեսրովբ Քահանայն
Որ ես եկեղեցուն Սիրամ

Յիշատակ իւրն ծնողացն
Տէր Մարտիրոսին
Եւ զաւակացն Տէր Մարտիրոսին,
Մինասին, Յովսեփին. Այվազին

Գիւղի հարաւային կողմնէ է «Հայրիկեան» դպրոցը։

Զհարմհալ գաւառի ամենահին գերեզմանաքարը գտնըւում է այստեղ՝ գիւղի հանդստարանի հարաւային կողմում, որը կրում է հետեւեալ տապանագիրը.

«Այս է տապան
Ակորի կողակից Իրրի –
Սիմին որ փոխեցաւ
Առ Ա.Ծ. թվ. ՌԾԳ.»

Այս տապանաքարն ունի վեց թզաչափ երկայնութիւն. երկու՝ բարձրութիւն և մէկ թիզ չորս մատնաչափ լայնութիւն։

Հայոց փոքր թւականի հաշւով ՌԾԳ. թ. հաւասար է մեր 1604 թւականին, մինչդեռ Զհարմհալի հայերը հասել են այնտեղ 1608—9 թւականներին։ Սա կարօտ է լուսաբանութեան։

ԳԻՒՂԱՏԵՐԵՐԸ

Նախքան Բախտիարցիների Զհարմհալին տիրապետելը, գաւառի հողերը կառավարական է եղել. վերջին գաւառապետներից յիշատակւած է Մահմադ Ռզա խան Զաւըշթուրցին։

Ութհարիւր թւականներին Զհարմհալի շրջանն է գալիս Հէյդար Գուր անունով յայտնի մի լոռ։ Ըստ ծերերի պատմութեան, հովիւ Հէյդարը ունենում է մի որդի՝ Զաֆար Ղուլի անունով, որը մեծանալով, իր ցեղի մէջ մեծ հռչակ է ստանում. Նա վերջապէս, դառնում է ամբողջ Բախտիարի ցեղապետը, կոչւելով Զաֆար-Ղուլի խան Բախտիարի։ Վերջինս ունենում է չորս որդի, որոնցից յայտնի են լինում միայն երկուսը՝ Հօսէյն Ղուլի խան, Իլխանի, Բախտիարի և Իմամ Ղուլի, Հաջի Իլիխանի, Բախտիարի։

Հօսէյն Ղուլի խանի որդիքն են՝ Սֆանդիար խան Սարդար Ասադ, Հաջի Ալի Ղուլի խան Ասադ, Նաջաֆ Ղուլի խան Սամսամ Սալթանէ. Հաջի Խոսրով խան Սարդար Զաֆար, Ամիր Ղուլի խան և Իւսոֆ խան Ամիր Մոջահեդ։

Իմամ Ղուլի խանի որդիքն են Սարդար Մօհթաշամ, Ամիր Մոֆախխամ, Սարդար Զանդ և Սարդար Ֆաթհ։

Իրենց ցեղապետութեան (Իլխանի) պաշտօնը վերջերս վարում էր Մօրթզա-Ղուլի խան Սամսամ Բախտիարին, որ վախճանւեց 1956-ին Թեհրանում։

Վերջինս համարւում էր Բախտիարի խաների մէջ ամենահարուստը. Նա ունէր 125 գիւղ՝ Սպահանում, Թեհրանում, և Շալմազարում. Նրա սեփական բնակարանները թագաւորական պալատների են նմանւում։ Ունեն դրամական հարստութիւն, ոչխարների հօտեր, ձիերի ջոկեր և այլն։

Բախտիարցիք, ինչպէս նաև Իրանի որոշ շրջանների ժողովուրդը դարեր շարունակ բաւականացել են տեղա-

ՉՀԱՐՄՀԱԼԻ ԳԻՒՂԱՏԷՐԵՐԸ

Ձախից՝ 1. Ամիր Զանգ Ջաֆար Ղուլի խան, 2. Սարդար Զանգ Նասէր խան, 3. Սարդար Բախտիար, 4. Սարդար Ջաֆար և իւր և իւր երկու որդիք։

Սամսամ-էլ Սալթանէ, վարել է նաև պատերազմ. նախարարի պաշտոնը

կան մոլլաների ուսմամբ, միայն վերջին քառորդ դարում նրանք զարկ տուին իրենց զաւակների կրթութեան, ոմանք էլ ուղարկեցին Եւրոպա՝ բարձրագոյն կրթութեան։

Նրանք ունէին իրենց յատկացեալ գիւղերը, մի կամ մի քանի հատ, բազմաթիւ ծառաներ, տնային հարստութիւններ։ Ճամբորդութեան ժամանակ խանի ետեւից գընում էին գինուած ծառաները։

Կալուածների վրայ նշանակում էին մի-մի «Զաբէթ» (կառավարիչ), նրա ենթապաշտօնեան էր գիւղի «քեադխուդան» (տանուտէրը)։ Սրանք էլ իրենց հերթին կեղեքում էին խեղճ հողագործին։ Եթէ գիւղացին դժգոհ էր սրանցից, իր դատը ներկայացնում էր խանին. եթէ վերջինս էլ վերահասու չէր լինում և բաւարարութիւն չէր տալիս գիմողին, այն ժամանակ խնդրարկուն գիմում էր Իլխանին և Իլբէգուն։

Իլխանի և Իլբէգի կենտրոնատեղին է Զղախօռը, որտեղ ամառուայ 4 5 ամիսներին նանք ապրում են իրենց արբանեակներով. այս ժամանակաշրջանում վճիռ են տալիս Բախտիարի և Չհարմհալի ու շրջակայ ժողովուրդների մէջ տեղի ունեցած բարդ խնդիրներին։

Իլխանի և Իլբէգի Զղախօռում ունեցած իրենց ամառային ծախսերի համար որոշած էր Մամուքա և Օվրիգան գիւղերի տարեկան ամբողջ հասոյթը, որը շուրջ 45։000 լիտր ցորեն, գարի և մի քիչ ուրիշ հացահատիկներ են. սրա վրայ աւելանում է այգիների և այլ մանր հարկերը, որոնք լինում են տարեկան 4—5000 թուման։ Յիշեալ երկու գիւղերից ձրիաբար ստանում են ամենօրեայ վառելիք, ձիերի համար խոտ և յարդ, շաբաթական մի քանի հաւ, հաւկիթ և այլ բաներ. այս բոլորի փոխադրութեան հոգսը հողագործի վզին է, իր էշերին բարձած մինչև Զղախօռ, մօտ 20 կիլոմետր տանում, յանձնում և վերադառնում են։ Որպէս փոխարինում, խանները վերո-

յիշեալ երկու գիւղից կէս «քու» պակաս են վերցնում հողագործութեան տարեկան բերքից, այսինքն ուրիշ գիւղերի արդիւնքի մէկ երրորդն են ստանում, այս գիւղերից երկու եօթերորդը։

Չհարմհալի գիւղատէր խաները մեծ ազդեցութիւն ունէին. իրենցից նշանակում էին գաւառապետներ՝ դատելու և վերահասու լինելու իրենց հովանաւորութեան ներքոյ գտնուող ժողովրդին։

Չհարմհալցի հայ գիւղացին եղել է մի համեստ հողագործ բախտիարցի գիւղատէրերի համար։ կրելով ամեն տեսակ զրկանքներ, բազմիցս լօռերը թալանել են հայ գիւղացու հօտն ու նախիրը։ Տեսել է սով ու երաշտ, տարիներ աշխատել է խաների շինարարութեան, այգիների ու ճանապարհների վրայ որպէս բռնի աշխատաւոր ու այդ ամէնից յետոյ կառչած է մնացել հայ մնալուն ու Քրիստոնէական դաւանանքին։ Բայց միւս կողմից անսահման համակրանք է վայելել բախտիարցի խաների կողմից, նշանախօս ունենալով թէ՝—«Հայը գող չէ, հայը սուտ չի խօսի» ու այդ հիման վրայ էր, որ երբ վէճ ծագէր լօռերի ցեղերի մէջ կամ գիւղերում հողերի բաժանման շուրջ, կամ նոյնիսկ մարդասպանութեան վէճեր տեղի ունենային՝ խաները անպայման մի հայ քեալանթար կուղարկէին այդ վէճերը հարթելու և հաշտեցնելու։ Հայ քեալանթարների տւած վճիռը օրէնք էր և ընդունելի՝ կողմերի միջև և թէ բոլոր խաների համար։

1916 թ. Եղիա անունով մի հայ Սարդար Զանգից խնդրում է մի երկտող, որպէսզի ինքը Խուզիստան գնալիս չթալանուի լօռերից, նա էլ տալիս է. Եղիան անփորձ գնում և վերադառնում է, շնորհիւ այդ թղթի կտորի։

Մէկ տարի յետոյ 62 հոգի չհարմհալցի, որոնց մէջ և տողերիս գրողը, գնում էինք Խուզիստան, Սարոաք կոչուած մի տեղ մեր ճանապարհը կտրեցին լօռերը և մեզ-

նից պահանջեցին երկուական բիալ։ Յիշեալ Եղիան իր ունեցած «հրամանը» ցոյց տուեց, լօռերը մութի մէջ մի լուծկի վառեցին, նայեցին տեսան, որ Սարդար Զանգի կնիքն է թուղթն առանց կարդալու մեզ ասացին «Բարով եկաք», բաւական տեղ մեզ ուղեկցեցին մինչև հասանք Իշլան՝ ապա հեռացան։



Այստեղ նոյնութեամբ տպագրում ենք Սարդար Մօհթաշամի հրամանագիրը կնքուած իր կնիքով, որի թարգմանութիւնը հետեւեալն է՝—

«Այս հրամանով յայտարարւում է, որ հայ ժողովուրդը ազատ է բացարձակ, ոչ ոք չպէտք է նրանց արգելք հանդիսանայ, որպէսզի հանգիստ կերպով շարունակեն իրենց հողագործական աշխատանքները. եթէ ոեէ ժամանակ մէկը ընդդիմանայ՝ խիստ կերպով պատասխանատուութան կենթարկուի։

Զիլգան-էլ-հարամ 1235։

Կնիք

Մինչև վերջին դարի առաջին քառորդը Չհարմհալի ժողովուրդը ենթակայ էր միմիայն խաների հրամանին. արտաքին որեէ չէր կարող միջամուխ լինէր լինէր դա կառավարական պաշտօնեայ կամ այլ ոք. սակայն Ռզա շահ Փահլաւու գահ բարձրանալուն՝ դրութիւնը փոխուեց,

կամաց-կամաց Բախտիարի բոլոր խաները կորցրին իրենց նախկին ոյժն ու ազդեցութիւնը և ենթարկուեցին պետական օրէնքներին։ Սակայն հողը մնաց դարձեալ գիւղատէր խաներին։ Ապագայում որոշ մասը վաճառուեց ոչ բախտիարի խաների։

ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿ

Հետաքրքրուած լինելով իմ ծննդավայր գաւառով, յաճախ նամակներ էի գրում և հարցումներ ուղղում իմ ազգական-բարեկամներիս. պատասխանների հետաքրքրական մասերը գետեղում եմ ստորև՝ ընթերցողին գաղափար տալու գաղութային կեանքից։ Զուլուում է մի ժողովուրդ, երբ կտրուած է իր հայրենիքից չհարմհայցին ամենատոկուն, ամենաաւանդապահն էր, ինչպէս յիշել ենք նախորդ գլուխներում, որ 350 տարի անաղարտ պահել է իր լեզուն, կրօնը և բարոյականը. այսօր այս վիճակին է ենթակայ։ Որպէսզի հասկանանք անցեալի բազմաթիւ փորձերից, թէ ուր էլ լինենք, երբ փոքրամասնութիւն ենք կազմում, ձուլման վտանգի ենթակայ ենք։ Օրինակ բերենք Հնդկաստանի 20,000-ից աւելի հայութիւնը, որից այսօր մնացել է միայն 1600 շունչ։

1917 Թ. Չհարմհայում ապրում էին 4272 շունչ հայեր։ Իսկ 1950 թ.՝ միայն 712 շունչ։ Յիշեալ 4272 հոգուց 1946 թ. մօտ 2000-ը վերադարձան Մայր Հայրենիք. ուրեմն 300 տարուայ ընթացքում, փոխանակ աճելու, 1560 շունչ պակասել է այս փոքր գաղութից, անցնելով Ն. Զուղա, Հնդկաստան, Թեհրան, Խուզիստան և այլն։

10 Յունս. 1949 թ. գրուած մի նամակից մէջ եմ բերումհետևեալ մի քանի տողերը.—

«...Ինչպէս գիտես, ներգաղթից յետոյ, Չհարմհալի մնացած երեք գիւղերը քայքայուած դրութեան մէջ են և հայ գիւղացին ապրում է իր ճակատագրական վերջին բոպէ-

ներում շատերը թողին իրենց այդ պատմական ծննդավայրը և գիմեցին դէպի Խուզիստան, դէպի այլ քաղաքների դռները ինչպէս պատահեց սոյն տարեշրջանում երեք գիւղերից Խուզիստան գնացին 26 ընտանիք։ Այսպէս է, սիրելի Տէր-հայր, մեր հայի ճակատագիրը. գործել, շէնացնել և, միառ ժամանակից յետոյ՝ նրա աւերումները տեսնել...։ (Ստորագրութիւն) Աղասի

10 մայիս 1951 թ. ստացած նոյն Աղասուց.—

«...Չհարմհալի վերաբերեալ ի՞նչ նորութիւն էք ուզում. օրերը հաշուած է այս փայլուն անցեալ ունեցող գաւառի. անխուսափելիօրէն կը հաւաքի հայութիւնը այստեղից և կը իրականանայ հայ գաղութը իր իսկական ճակատագրով։ Չհարմհալի երեք գիւղերի մէջ հաւանական է Հաջիաբադը ամենից շուտ հայութիւնից դատարկուի, իսկ վերջը՝ Մամուքան։ Գիւղերի մէջ Մամուքան է զուտ հայաբնակ, Հաջիաբադ և Սիրաքում խառն է պարսիկ հողագործներով։ Զ. Գ. Ուսումն. Միութիւնը ձեռնարկեց յարմար դէպքում երեք գիւղերի բնակչութիւնը հաւաքել մի գիւղում, բայց ձախողեց, հանդիպելով գիւղացիների «կողաւերութեան»։ Արդանի վերջին դէպքերի առնչութեամբ կարող է փոփոխութեան ենթարկուի գրութիւնը։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1960 թ. Հոկտեմբերին այցելեցի Չհարմհալի երեք գիւղերը, ուր կային ընդամենը՝

Մամուքա	39 տուն	156 շունչ	75 արական	81 իգ.
Հաջիաբադ	13 »	60 »	28 »	32 »
Սիրաք	18 »	71 »	38 »	33 »

ՎԵՐՋԱԲԱՆ

Բաւական դժուար է ինձ համար հաշիւ տալ գրիչս տպագրութեան այսման ուշացումը։ Պատրաստելուց եւ գրամեքենայելուց յետոյ՝ դարձեալ շուրջ 15 տարի ուշացաւ։

Ամենաառաջինը՝ իմ ասանդական վիճակը պիտի համարել։ 1952 թւականին Կալկաթայում տպագրեցի քարտեզը, որից յետոյ պիտի շարունակուէր գրոյկիս տպագրութիւնը, սակայն գրաւար չլինելու պատճառով չյաջողուեց։

1958 թւին վերադարձայ Իրան, Նոր-Ջուղա, ուր ամենայարմար վայրն էր տպագրութեան համար, սակայն այստեղ եւս, որոշ հանգամանքների բերումով ուշացաւ, մանաւանդ միտ ծագեց իմ մէջ մի անգամ էլ կրկին գաւառ անցնել՝ նոր տեղեկութիւններ եւ նիւթեր աւելացնելու։ Մինչ այս մինչ այն, կրկին ինձ վիճակուեց Փաֆեսան գնալ, որպէս վիճակաւոր Դամա քաղաքի Հայոց եկեղեցու։

Իմ նպատակն էր, ուր որ էլ որ տպագրի գրոյկս, անձամբ ներկայ լինեմ՝ նայելու սրբագրութեան գործին, որովհետեւ կան այնպիսի բառեր ու անուններ, որ շատ զգուշութեամբ պիտի նայել։

Մի անգամ եւս իմ շնորհակալութիւնն եմ յայտնում բոլոր նրանց, ովքեր բանաւոր կամ գրաւոր իրենց աջակցութիւնը բերին սոյն գործին։

ԱԻ. ՔԱՀ. ԵԴԳԱՐԵԱՆ

Աբադան
1 Մայիս 1963 թ.

ՋՀԱՐՄՀԱԼԻ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ձայնագրութ.՝ Հովիկ Եդգարեանի

1. Ծառ գովելու եղանակ



2. Սուրբ Կարապետայ



3. գնացէք բերէք



4. Արդ հրամանաւ



ԾԱՌ ԳՈՎԵԼՈՒ ԵՂԱՆԱԿ

Ջհարմհալի հարսանեկան երաժշտություն

Ձայնագրութ.՝ ՀՈՎԻԿ ԵԴԳԱՐԵԱՆԻ

Դաւոր ինչ բերեմ քեզ նրման.
Քո կանանչ արեւի նման.
Է՞ն սուսան սմբուլը որ բացել է, որ բացել է
բացել է,
Քո կանաչ արեւի նման։

Սուրբ Կարապետայ օրհնութիւնով, օրհնութիւնով
Ծառսի ծաղկեցաւ, ծառսի ծաղկեցաւ,
Ծառ ծաղկեցաւ, ճիւղ կազմեցաւ
Կանաչ ու կարմիր։

(Երկրորդ տունը երգւում է բոլոր սուրբերի անուններով)

Գնացէք բերէք սեղան, ծառ գովողին
փայ է պիտի։

ԱՐԴ ՀՐԱՄԱՆԱՒ

1) Արդ հրամանաւ Աստուածային
Եկեալ բազումքն փեսային.

2) Կալեալ ձեռօք զիս կտանեն,
Մնամք բարեւ ես գնացի։

3) Շատ խնդացի եւ շատ լացի,
Մնամք բարեւ ես գնացի։

Ջհարմհալի հարսանեկան պար—եղանակ

Ձայնագրութ.՝ Հովիկ Եդգարեանի



Պարզաբանելու համար հանրութեան կարծիքը, ըստ որին մի խումբ քէնախնդիր և նախանձոտ մարդիկ յայտարարել են թէ. «Այս աշխատութիւնը գողացել է պրն. Արամ Երեմեանի գրքից, որը պիտի հրատարակի Զ. Գ. Հ. Ու. Միութիւնը», Ստորև տալիս ենք պ. Արամ Երեմեանի նամակներից մէկը, գրուած որդուս՝ Հովիկին այդ առթիւ, որը ստացել է գրք ս հրատարակութեան վերջում, մի բառոյական ապտակ չարախօսներին հասցնելու նպատակով, որոնք նոյնն արեցին և քարտէզի հրատարակութեան գործում, սրանից 14 տարի առաջ և այս գրքի հրատարակութեան ուշանալու պատճառը դարձան։

Իսկ գրքի կազմութեան մասին, ինչպէս նախաբանումն էլ ասել եմ, պարզապէս արել եմ այն ինչ որ կարողացել եմ, թէ բարոյապէս և թէ նիւթապէս, որին ոչ ոք ոչնչով մասնակից կամ օժանդակող չի եղել և եթէ չարախօսներն կարող էին՝ թող անէին ինձնից առաջ։

ՀԵՂԻՆԱԿ

Փարիզի, 24 Դեկտեմբեր 1963

Սիրելի Հովիկ Էդգարեան

Թեհրան

Ձեր 18 Դեկտեմբեր թուակիր նամակը սիրով և հետաքրքրութեամբ կարդացի։ Շատ ցաւում եմ, որ Թեհրանում Ձեզ չկարողացայ հանդիպել և լուսաբանել մի քանի էական խնդիրներ, որոնք իրենց բովանդակութեամբ գրական-ազգագրական բնոյթ ունեն և իրենց էութեամբ էլ ուշագրաւ են։

Ձեզ անհանգստացնող հարցը, որ շօշափել էք Ձեր նամակում, իր հիմնական գծերով Ձեզ կը լուսաբանեմ, երբ նորից իրար հանդիպելու երջանկութիւնն ունենանք։ Էականը պայծառ, ազնիւ, բարեխիղճ աշխատանքն է և ստեղծագործութիւնը։ Նշեմ միայն, որ Հայաստանի Ակադէմիան հրատարակել է աշուղական—թատերական հատորներ, որոնց մէջ բարեխղճութեամբ յիշատակել է իմ երկերը, յաճախ իմ գրքերից մէջբերումներ անելով և աղբիւրները յիշատակելով։ Նոյնիսկ շեշտած է, որ առաջին ուսումնասիրութեան աղբիւրն իմ հրատարակած հատորն է։ Բայց մեզանում կան անբարեխիղճ մեծամիտներ, որ խեղաթիւրում են ճշմարտութիւնը, մոռանալով, որ դա ժամանակաւոր երեւոյթ է։

Շնորհակալ եմ, որ թէ՛ սիրելի Տէր Հայրն, թէ՛ լաւ Էլսիկը և թէ՛ դուք երախտագիտութեամբ յիշում էք իմ ուսուցչական վաստակը, իսկ ես էլ հպարտ եմ և երջանիկ, որ ունեմ Ձեզ նման ազնուասիրտ աշակերտներ և ջերմօրէն սիրել եմ Ձեզ և յարգում եմ մինչև օրս։ Այս մասին միանգամայն վստահ եղէք։ Եւ եթէ կան որոշ խնդիրներ, դա հնարաւոր է պարզել, բայց ո՛չ թէ նամակներով, որը ժամանակի կորուստ է, այլ քերանացի բացատրութիւններով։

Մի հանգամանք ևս։ Ամբողջ հոդով ուրախացել եմ, երբ որևէ աշակերտ—աշակերտուհիս գրական-հասարակական աշխատանք է կատարել։ Իսկ ամէն կերպ օգնել եմ և աջակցել, երբ ինձ որևէ դիմում է եղել։ Իմ սիրելի Ձեքեդիա Հանանեանը Կալկաթայում որոշել էր հրատարակել «Նոր-Ազդարար» թերթը։ Նամակով ուղեց իմ կարծիքը։ Ո՛չ միայն խրախուսեցի նրան, այլև ամէն կերպ աջակցութիւն ցոյց տուի։ Նոյնպէս քաջալերել եմ տաղանդաւոր արձակագիր Հրաչեա Քոչարին և շատ ուրիշներին։ Եթէ սիրելի Տէր Հայրն էլ իր պատմութեան ծրագիրն ինձ ներկայացնէր, նրան էլ մեծ սիրով և ուրախութեամբ կօգնէի, կը տրամադրէի նոյնիսկ որոշ նիւթեր, որպէսզի իր հատորը լինէր աւելի բովանդակալից, արժէքաւոր և մնայուն։ Այժմ էլ սիրով կը տրամադրեմ իրեն ան-

հրաժեշտ նիւթեր, որպէսզի վստահ լինէք, որ իր հանդէպ ունեմ նոյն անկեղծ համակրանքն ու սէրը, իմ նշանաբանն է—ամէն մի ազնիւ աշխատանք գնահատել և աջակցել, որպէսզի աւելի լաւ լինի։

Ձեր նամակում ընդգծած են այսպիսի տողեր—«Ձեր «Զարմհալի պատմութեան» մեծ աշխատութեան բնագրի մասին, որի համար թեր և դէմ կարծիքներ են ծայր առել յիշեալ Միութեան կողմից»։ Պարզեմ Ձեզ, որ իմ ուսումնասիրած պատմութեան բնագիրը Միութեան անդամներից ո՛չ մէկը չի տեսել եւ չի կարդացել, ուրեմն ինչպէս կարող են ձեռագրի բովանդակութեան մասին թեր ու դէմ կարծիքներ յայտնել։ Հարցը ծաւալի մասին է։ Առաջարկել են ինձ 500 էջում սահմանափակել ամբողջ պատմութիւնը, որի հետ չեմ համաձայնուել։ Այս է իրականութիւնը։

Ձեր նամակում կան նաև այսպիսի տողեր. «Հիմա էլ եթէ Դուք յարմար իմանաք՝ կիսատ կը թողնենք գիրքը»։ Ո՛չ, սիրելի Հովիկ, քարի գործը թող շարունակւի, կեանք ստանայ։ Սա է ցանկութիւնս, իսկ եթէ Դուք ցանկանում էք, որ պատմութիւնը գիտական ընայթ ունենայ, աւելի բովանդակալից լինի և եթէ յարմար կը գտնէք, նախքան վերջնական տպագրութիւնը, դրէ՛ք իմ տրամադրութեան ներքոյ, թէ՛ տպագրւածը և թէ՛ ձեռագիր մասը, նշեմ պակասները, թերիները, սրբագրւի թող և վերջնականապէս հրատարակէք։ Եթէ յարմար կը գտնէք, նիւթեր էլ կը տրամադրեմ։ Արտասահմանում հրատարակւող պատմագրքերից շատերի խմբագիրները դիմել են ինձ և նիւթեր խնդրել, սիրով տրամադրել եմ, այն հասկացողութեամբ, որ ամէն մի պատմագիրք պատմութեան է պատկանում և ունի հասարակական արժէք։ Եթէ սիրելի Տէր Հօր խմբագրած գիրքը իմ առաջադրած ծրագրով լոյս տեսնի և գիտական բովանդակութեամբ կառուցւի, առաջքանն էլ կը գրեմ։ Այս աշխատանքներն անկեղծօրէն յանձն եմ առնում, որպէսզի վստահ լինէք, թէ ես անկեղծ եմ Ձեր բոլորի հանդէպ և ազնիւ գործն ինձ համար գնահատելի է։

Շատ սիրելի Էլսիկիս, Ձեր յարգելի տիկնոջը և Ձեք լաւ բարեկիներին սիրալիր, ջերմ և կարօտագին ողջոյններս։

Սրտագին շնորհաւորում եմ նաև Ձեզ՝ Ձեր դպրոցական վսեմ աշխատանքների համար, որը կազմում է Ձեր կեանքի պատմութեան մի նոր էջը։ Ձեզ ամէն կերպ կաջակցեմ և դպրոցի ուսումնական մակարդակը կը դնեմ լաւագոյն հիմքերի վրայ, եթէ հնարաւորութիւն տաք աշխատելու։ Նիւթականում նկատի կառնեմ Ձեր առաջադրած համեստ պայմանները։

Ձերմագին սիրով և ողջոյններով՝

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ